ՀՅԴ Պաշտօնաթերթ







# ԴՐՕՇԱԿ


Entlassungs-Schein.

Der Student Salomon Teilirian war vom 19.3.21 bis 3.6.21 hier in Haft.

Berlin, den 3.6. 1921
Untersuchungsgefängnis






Ապրիլ N4 (1607)

2009

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ



ԴՐՈՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ



"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
**Ս. Խաչատրյանի**
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

**"Droshak"** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

**Խմբագրական**

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման տեղապտոյտը 2

**Կլոր սեղան**

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում. Պատմական ճշմարտություններ և մերօրյա մտահոգություններ 6

**Նեմեսիս-90**

Սողոմոն Թեհլիրյանի ոդիսականը (շարունակություն) 18

**Նյութեր թուրք պատմաբանների համար**

Անատոլիայում մի ուրվական է պտտվում 25

Յոզղատի հայոց տեղահանության և կոտորածների դատական նիստերի արձանագրությունները 37

**Նամակ խմբագրությանը**

Երազ 36

**«Դրօշակ»-ը 100 տարի առաջ**

Կիլիկիան արիւնաւեր 43

**Նոր գրքեր**

«Ժամանակի գետը» 46

**Պատկերասրահ**

Ժանսեմ (Հովհաննես Սեմերջյան) 48



Digitized by ARF PR Office

# Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման տեղապտոյտը

Հայաստանի բնականոն զարգացման համար անհրաժեշտ է երեք գլխաւոր նախապայման՝ կայուն պետութիւն, խաղաղ տարածաշրջան եւ հաղորդակցական լայն կապեր աշխարհի հետ: Այս վերջին նախապայմանը կատարելապէս գոյացնելու համար ենք կարեւորում հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումն ու սահմանի բացումը՝ յարաբերութիւնների յետագայ զարգացմանը թողնելով կնճռոտ հարցերի լուծումները: Բայց ինչպէս նկատելի է, նոյնիսկ ոչինչ չպարտադրող այս մօտեցումը ոչ թէ առաջընթաց, այլ տեղապտոյտ է առաջացնում: Ինչո՞ւ:

Անհրաժեշտ է նախ ամրագրել, որ Թուրքիան թշնամական դիրքորոշում ունի Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ: Այս դիրքորոշումը, ակունք առնելով պատմական արմատներից, այսօր թաքնում է քաղաքական շատ պարզ եւ յստակ տարազի տակ՝ Արցախի հարցով: Հայ-ադրբեջանական պատերազմի ողջ ընթացքում, եւ դրանից յետոյ, Թուրքիան կողմնորոշուած քաղաքականութիւն է վարել եւ շարունակում է վարել: Նա, որպէս հարեւան, երբեք չէզոքութիւն չի դրսեւորել, ինչը դրսեւորել են մեր միւս հարեւանները: Թշնամական այս կեցուածքը զգացականութեամբ, ապաքաղաքականացած տրամաբանութեամբ հիմնաւորելը կոպիտ սխալ է: Թուրքիան շատ աւելի լուրջ դրդապատճառներ ունի նման կեցուածք որդեգրելու: Մենք ցանկանում ենք քաղաքական հիմնաւորմամբ ամրագրել Թուրքիայի ներկայիս թշնամական կեցուածքը, ինչն ուրուականի պէս ի սկզբանէ ճախրում է հայ-թուրքական նորօրեայ դիւանագիտական բանակցութիւնների գլխին: Թուրքիան սահմանը փակեց Արցախեան հարցը պատճառաբանելով: Այսօր էլ նա հաստատում է դա վարչապետ Էրդողանի բերանով: Նոյնն է շեշտում նաեւ Ադրբեջանի փոխարտգործնախարարը, ասելով, թէ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը տեղի կ'ունենայ հայ-ադրբեջանական հակամարտութեան կարգաւորումից յետոյ:

Այսքան պարզ բնորոշում չէր կարելի սպասել թուրքական դիւանագիտութիւնից: Հայկական կողմը, փաստօրէն, դիւանագիտական բանակցութիւններ է վարում թշնամի պետութեան հետ: Եւ թող ամէն քայլափոխին զարմանքը չպատի հայ վերլուծաբաններին, թէ ինչու է Թուրքիան նախապայմանների լեզուով խօսում:

Հայկական կողմին փորձում են պարտադրել «սահմանները ճանաչելու» նախապայմանը, իսկ հայ դիւանագիտութիւնն էլ, իր հերթին, փորձում է համոզել մեզ, որ դա ընդամէնը «պրոտոկոլային» արարողակարգ է:

Ահազանգ՝ այդպիսի «պրոտոկոլ» չկայ:

Հայաստանը արդէն յարգել է պրոտոկոլը, երբ ընդունուեց նրա անդամակցութիւնը ՄԱԿ-ում: Իսկ ՄԱԿ-ի անդամակցութեան պրոտոկոլային պարտաւորութիւններից դուրս, այդպիսի նախապայման ընդունել նշանակում է յետ վերցնել 1920 թ. Հայաստանի Հանրապետութեան կողմից ԱՄՆ-ի Նախագահին տուած իրաւարարութեան յայտը՝ հայ-թուրքական սահմանի ճշտման կապակցութեամբ, եւ յետ կանգնել ԱՄՆ-ի Նախագահի կողմից տրուած իրաւարար վճռից: Իրաւարար վճիռը մերժելու պաշտօնական յայտարարութիւն դեռեւս չի արել հէնց ինքը՝ Թուրքիան: Եթէ նկատել էք, թուրքական քարոզչամեքենան փութաջանօրէն խլացնում է միջազգային հանրութեան ականջը՝ Սեւրի պայմանագիրը Թուրքիայի մեջլիսում մերժելու մասին առատ տեղեկատուութեամբ, բայց ոչ մի բառ չի արտաբերում Վիլսոնի իրաւարար վճռի մերժման շուրջ: Թուրքերը շատ լաւ հասկանում են, որ իրաւարար վճիռը պաշտօնապէս մերժելու իրաւունքը չունեն ո՛չ Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդ Թուրքիայի Հանրապետութիւնը եւ ո՛չ էլ Հայաստանի Հանրապետութիւնը: Արդարութեան, ազգային ոտնահարուած իրաւունքների վերականգնման տեսակէտից, մանաւանդ հայկական կողմը նոյնիսկ բարոյական իրաւունք չունի հրաժարուելու Վիլսոնի իրաւարար վճռից: Թուրքիայի Հանրապետութեան հետ ԱՄՆ-ն ունի դիւանագիտական բարձր մակարդակի փոխյարաբերութիւններ եւ ռազմավարական կայուն գործընկերութիւն, սակայն մինչ օրս, ՄԱԿ-ի եւ ՆԱՏՕ-ի պրոտոկոլային ձեւաչափերից դուրս, նա պաշտօնապէս չի ճանաչել Թուրքիայի տարածքային ամբողջականութիւնը: Դիւանագիտական այդպիսի փոխյարաբերութիւնների բազմաթիւ օրինակներ գոյութիւն ունեն միջազգային պրակտիկայում (Չինաստան - Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւն, Սուդան - Էրիթրէ եւ այլն): ՀՀ արտաքին քաղաքականութիւնը, ամէն դէպքում, պէտք է ձերբազատուի նշուած «պրոտոկոլ»-ից եւ սկզբունքը ընդունելով մեր ազգային-իրաւական պահանջատիրութիւնը, խուսափի հէնց այդ պահանջատիրութեան հաշուին Թուրքիային պարգեւներ շռայլելուց:

Միւս խնդիրը Հայոց Ցեղասպանութեան հարցն է: Թուրքերը շատ լաւ գիտեն, որ Հայոց Ցեղասպանութեան փաստը դոյզն-ինչ հարցականի տակ դնող քաղաքական որեւէ գործիչ անմիջապէս կաւարտի իր քաղաքական կարիերան հայ իրականութեան մէջ: Թուրքիայում հակոտնեայ չգրուած այս օրէնքը չի աշխատում: Այնտեղ նոյնիսկ որոշ մտաւորականներ եւ քաղաքական շրջանակներ, խիզախաբար անտեսելով 301-րդ յօդուածով սահմանուած դատական հետեւանքներն ու ռիսկերը, մի կերպ, ընդունում են Ցեղասպանութեան իրողութիւնը, եւ այդպիսով կրեդիտներ եւ քաղաքական դիվիդենտներ են ապահովում յատկապէս համաշխարհային մասշտաբով: Այս իմաստով դիպուկ համեմատութիւններ էր կատարել թուրք լրագրող, վերլուծաբան՝ Ալի Բիրանդը մի քանի տարի առաջ: Նա ասում էր, որ տասը հայից եւ ոչ մէկը չի մերժելու Ցեղասպանութեան փաստը, բայց տասը թուրքի, եթէ բացես այդ թեման, մաքուր կէսը կը սկսի բանավիճել միւս կէսի հետ: Հայ-թուրքական դիւանագիտական յարաբերութիւնների կայացման պայմաններում Թուրքիան հնարաւորութիւն է ձեռք բերում կանխարգելելու Ցեղասպանութեան ճանաչման հաւանական գործընթացները: Դեռ աւելին՝ Ցեղասպանութեան հարցը ապաքաղաքականացնելով եւ այն ներկայացնելով որպէս հայ եւ թուրք պատմաբանների քննարկման խնդիր, զանազան յորդորներով, ապակողմնորոշելու է թուրք հասարակութեանը եւ փորձելու է համախմբել նրան:

Թէեւ ՀՀ Նախագահի վերջերս արած յայտարարութիւնները (յատկապէս Թեհրանում) որոշ չափով մեղմեցին մտահոգութիւնները, այնուամենայնիւ կարծում ենք, որ թուրք դիւանագիտութիւնն ամէն հնարք կը գործադրի, թէկուզեւ ամենաննշան ձեւակերպումով, պատմական հարցերի քննարկումը ներառելու հայ-թուրքական յարաբերութիւնների համատեքստում:

Մեր նորանկախ պետութեան արտաքին քաղաքականութիւնը գործ ունի ոչ միայն թշնամի, այլեւ դիւանագիտական ինտրիգների փայլուն անցեալ ու մեծ փորձ ունեցող պետութեան հետ: Հետեւաբար պէտք է զգօն լինել եւ թոյլ չտալ, որ երկարաձգուող տեղապտոյտը գլխապտոյտ առաջացնի:

*Կլոր սեղան»-ի նյութերը տպագրության պատրաստեց Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ*

# Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում. Պատմական ճշմարտություններ և մերօրյա մտահոգություններ



ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակի» հերթական «կլոր սեղանի» թեման հայ-թուրքական հարաբերություններն էին, դրանց նախապատմությունը, կարգավորման ներկա փուլի ընթացքն ու Հայաստան-Թուրքիա սահմանի բացման հետ կապված տնտեսական և այլ կարգի խնդիրների առաջացման հնարավորությունները:

Շնորհակալություն հայտնելով մասնակիցներին հրավերն ընդունելու համար՝ «Դրոշակի» գլխավոր խմբագիր Ռուբեն Հովսեփյանն իր հակիրճ նախաբան խոսքում ընդգծեց, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրն այսօր մեր հասարակությանը հուզող թերևս ամենակնճռոտ հարցերից մեկն է: Ինչպիսի՞ ընթացք կունենա կարգավորման գործընթացը, ի՞նչ հիմնական սկզբունքներ են դրված այդ գործընթացի հիմքում, դեպի ո՞ւր է տանում հարաբերությունների զարգացումը և հանուն այդ զարգացման մոռացության չե՞նք տրվելու արդյոք մեզ համար կենսական նշանակություն ունեցող, Հայ դատի տրամաբանությունից բխող պահանջները: Սրանք հարցեր են,- նշեց Ռուբեն Հովսեփյանը,- որ առաջանում են, երբ խոսք է բացվում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման շուրջ, սրանք հարցեր են, որոնց պատասխանները պետք է հստակ ձևակերպված լինեն մինչև բուն գործընթացի սկսվելը: Մեր համոզմամբ, այս հարցերի քննարկմանն ու դրանց պատասխանների վերջնական ձևակերպմանը պետք է մասնակցի ողջ հասարակությունը, և մեր այս «կլոր սեղանն» էլ, հուսով ենք, իր ներդրումը կունենա մեզ հուզող խնդիրների գնահատման և դրանց լուծումների որոնման ճանապարհին:

Այնուհետև բացման խոսքի և հայ-թուրքական հարաբերությունների նախապատմության ու կարգավորման ներկա փուլի մեկնակետերի շուրջ իր տեսակետները ներկայացնելու համար ձայնը տրվեց ՀՅԴ Բյուրոյի անդամ **Լևոն Մկրտչյանին:**

- Հարգելի բարեկամներ, հենց միայն այն հանգամանքը, որ այստեղ ներկա են մի շարք վերլուծական կենտրոնների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, փաստում է, որ այսօրվա «կլոր սեղանի» թեման շատ արդիական է: Արդիական լինելուց զատ, խնդիրը պահանջում է մեր մտավոր ներուժի աննախադեպ, համահայկական կենտրոնացում: Խնդիրը, որ

մեր առջև պարբերաբար ծառանում է Հայաստանի կողմից անկախության վերահաստատման առաջին տարիներից սկսած, ի վերջո սկսում է միս ու արյուն ստանալ, և մեր հասարակությունը, կամա թե ակամա, ստիպված է խորամուխ լինելու հայ-թուրքական հարաբերությունների արժևորման հիմնախնդրի մեջ:

Հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը՝ բնիկ ժողովրդի և նվաճողի հարաբերության պատմություն է: Դարեր շարունակ մենք ունեցել ենք բավականին բարդ և բազմաշերտ հարաբերություններ, որոնց մեջ ցանկացած ուսումնասիրող կամ քաղաքական գործիչ կարող է գտնել և բացասական մի շերտ, որ դոմինանտ է և ուղեկցել է ողջ ժամանակահատվածում, և հայտնաբերել այդ հարաբերությունների առանձին դրվագներ, որոնք կարող են օրինակ ծառայել երկու ժողովուրդների համատեղ գոյության, համակեցության հնարավորության համար: Հաշվի առնելով այս հանգամանքը, իմ կարծիքով, մենք, մեր վերլուծական կենտրոնները, պետք է անաչառ գնահատեն իրավիճակը, մանավանդ, որ այս օրերին սկսել ենք առավել հաճախ խոսել հայ-թուրքական սահմանի բացման, հարաբերությունների հաստատման, երկու ժողովուրդների միջև հարաբերությունների նոր սկզբի մասին: Չնայած դրան՝ մենք դեռևս պատմության ամբողջական գնահատում, որպես այդպիսին, չունենք: Այդ գնահատականը չունի նաև թուրքական կողմը: Եթե հայ պատմագրությունն այդ գնահատականը չունի, որովհետև տասնամյակներ շարունակ զրկված ենք եղել պետականությունից և չենք կարողացել, օգտագործելով մեր գիտական ներուժը, տալ ամբողջական պատկերը, ապա թուրքական կողմը իր գնահատականները կառուցել է միակողմանի՝ զուտ քաղաքական շահի, Թուրքիայի պետականության ամրապնդման տեսանկյուններից: Նրանց պատմագրությունը, կարելի է ասել, աբսուրդի գագաթնակետին հասավ անցյալ դարի 60-ական թվականների կեսերին, երբ իրենց տարածքներում սփռված հունական մշակույթի հուշարձանները հռչակվեցին անտիկ թուրքական շրջանի հուշարձաններ, քրդերը որակվեցին որպես լեռնական թուրքեր, իսկ հայերը՝ քրիստոնյա թուրքեր: Հետո, իհարկե, զեղծարարության մակարդակն ավելի բարձրացրին և արդեն փորձեր էին արվում հայերին ներկայացնել որպես եկվոր ժողովուրդ, որի հետ իրենց հարաբերությունները վարդագույն են եղել, և, եթե վատացել են այդ հարաբերությունները, ապա պատճառը օտար պետությունների ու ինչ-ինչ ծառայությունների միջամտություններն էին: Հարաբերությունների գնահատման այս կետին թուրքական պետությունը հասավ 90-ականների սկզբին, Օզալի նախագահության շրջանում, երբ Թուրքիայի հայացքը կրկին դարձել էր դեպի արևելք, դեպի Միջին Ասիա, և խնդիրների վերաիմաստավորման նկատելի անհրաժեշտություն էր զգացվում:



Պատմական իրադարձությունների գնահատական տալու առումով մենք նույնպես մի քանի փուլ ենք անցել: Հատկապես Հայաստանի խորհրդայնացումից մինչև 50-ական թվականների կեսերը մեզնից, եթե կարելի է այսպես ասել, օտարվել է մեր պատմության իրավունքը: Հայ ազգային ազատագրական պայքարն ու հայկական հարցն այն ժամանակվա հայ պատմագրության մեջ ներկայացվել է խիստ խեղաթյուրված: Պատկերացրեք մի հարգարժան հայ ակադեմիկոս, ով հետագայում հեղինակեց ցեղասպանության հարցերին նվիրված շատ ավելի օբյեկտիվ մի աշխատություն, ժամանակին գրում էր, թե ցեղասպանությունը հրահրվել է, որպեսզի գժտեցնեն հայ և թուրք աշխատավորներին: ԽՍՀՄ վերջին տարիներին արդեն, երբ բավականին բարդ հարաբերություններ կային Իսրայելի հետ, հայոց ցեղասպանությունը փորձ էր արվում ներկայացնել իբրև հրեական դիվերսիա:

Պատմական իրադարձությունների նման կեղծ գնահատումները, ճիշտ է, մի տեսակ բարդույթավորում էին նաև սփյուռքի պատմագրությունը, բայց իր էությամբ այն բավականին հեռու մնաց նման ակներև զեղծարարություններից: Կուսակցական գրականությունը հայկական սփյուռքում (թե դաշնակցական և թե ռամկավար ու հնչակյան) կարողացավ ցեղասպանության խնդիրը վեր բարձրացնել հայ-թուրքական հարաբերությունների հարթությունից և այն դարձնել հայապահպանության, հայահավաքության և հայության՝ ա-

ռանց սահմանների պետության գաղափարի իմաստավորման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Եվ հիմա այն միակ կետը, որի շուրջ միավորվում է հայ հասարակությունն ամբողջությամբ և իր համահավաք կամքն է արտահայտում, Հայ դատի և ցեղասպանության հիմնախնդիրն է:

Այսօր, երբ Թուրքիայի կողմից դեռևս շարունակվում է հակահայ քաղաքականությունը, երբ ոչնչացվում են հայկական հուշարձանները, երբ հալածանքների է ենթարկվում այդ երկրի տարածքում հրաշքով գոյատևած հայությունը, մի տեսակ բարդ է օբյեկտիվորեն մոտենալ մեր հարաբերությունների նախապատմությանն ու դրանց զարգացման հեռանկարին: Այժմ ստեղծվել է մի իրավիճակ, որտեղ թուրքական կողմը ցեղասպանությունը ճանաչելու հարցում որդեգրել է նույնիսկ մոտ չգալու մերժողական քաղաքականություն, հայությունը նրա քաղաքական օրակարգում համարվում է թիվ մեկ թշնամի:

Այս ամենի հանդեպ մենք ունեինք ընդամենը երկփեղկված մի պատմագրություն, պատմական իրադարձությունների գնահատման՝ վերևից թելադրված ձևակերպումներ: Այսօրվա անկախության ձեռքբերումից հետո, բնականաբար, որոշակի ժամանակ էր պետք, որպեսզի մենք կարողանայինք կենտրոնանալ, մեզ զգալ որպես միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ, անկախ պետականություն կրող և նոր միայն անվտանգ անդրադառնալ այնպիսի մի բարդ խնդրի, ինչպիսին հայ-թուրքական հարաբերություններն ու դրանց կարգավորումն է: Եվ ահա մենք կրկին սկսեցինք փորփրել պատմության գիտանոցը, և, պետք է նկատել, որ այս կարճ ժամանակահատվածում Թուրքիայի հետ հարաբերությունների նկատմամբ հայաստանյան կողմի դիրքորոշումներում զգալի տարբերակվածություն ի հայտ եկավ: Նրանք, ովքեր գտնում են, թե Թուրքիայի հետ հարաբերությունների արագ կարգավորումն ուղղակի բալասան է Հայաստանի համար, պատմության էջերից մեծ հաջողությամբ վերհանում են այնպիսի փաստեր (օրինակ՝ հայ վաճառականական կապիտալի բարեկեցիկ վիճակը Թուրքիայում, հայ մշակույթի և քաղաքական մտքի զարգացման առանձին փուլեր, համագործակցության փայլուն դրվագներ և այլն), որոնք հիմնավորում են արագ կարգավորման հասնելու տեսակետը: Իսկ նրանք, ովքեր փորձում են հակառակն ապացուցել, թե հայ-թուրքական հարաբերություններն անհնարին են (սա, իհարկե, ծայրահեղություն է), նույնպես փնտրում և գտնում են անհրաժեշտ փաստերի այն ծավալը, որը, պետք է խոստովանել, գերակշռում է հայ-թուրքական հարաբերությունների անցյալում: Այս իմաստով, երևի պատահական չէ, որ հենց մեր կուսակցությունն է փորձում նախաձեռնել այսպիսի «կլոր սեղաններ», քննարկումների՝ քաղաքական նպատակներ չհետապնդող շարք, որովհետև հայ քաղաքական մտքի համայնապատկերում հայ-թուրքական հարաբերությունների ամենահարուստ փորձն ունի Հայ հեղափոխական դաշնակցությունը: Մենք ունեցել ենք բացահայտ հակամարտության պատմություն, զինյալ հակամարտության պատմություն, ունեցել ենք նաև համագործակցության պատմություն, որ զուգադիպել է ցեղասպանությանը նախորդած տարիներին: Մենք, իբրև պատմական հիշողությամբ մի կուսակցություն, շատ ավելի լավ ենք ճանաչում մեր հարևանին, շատ ավելի լավ ենք գիտակցում այն հիմքերը, որոնց վրա կառուցված են թուրքական ներկա գաղափարախոսությունն ու պետական արժեհամակարգը: Մենք փորձում ենք, իբրև կուսակցություն, հեռու մնալ ծայրահեղացումներից, փորձում ենք ռեալ գնահատել իրավիճակը և այդ իրավիճակի գնահատման մեջ նաև փորձում ենք հաստատել այն ճանապարհը, որը պարտավոր ենք անցնել: Այդ ճանապարհը պետք է սկսվի մի ինչ-որ կետից, որը, գոնե մեզ համար, չի կարող որևէ նախապայման չպարունակել իր մեջ: Տեղի է ունեցել մի մեծ հանցագործություն թուրք և հայ ժողովուրդների նորօրյա պատմության մեջ, որը մերժվում է այսօրվա թուրքական իշխանությունների կողմից: Այդ հանցագործության գիտակցումը, ճանաչումը, կատարվածի համար ներողություն խնդրելը միայն կարող են մեր հարաբերությունները հանել այս վիճակից և տեղափոխել տրադիցիոն, շատ ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերությունների դաշտ: Մեր համոզմամբ՝ նորմալ հարաբերությունները միայն երկուստեք բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելությունները ու ձեռքսեղմումները չեն: Եվ մենք ավելի քան վստահ ենք, որ քանի դեռ Թալեաթ փաշայի գերեզմանին մտավորական թուրքը և առհասարակ թուրք հասարակության էլիտան ծաղիկներ կդնի, քանի դեռ թուրք երիտասարդությունը կայցելի նրա դամբարանը իբրև սրբատեղի, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը կմնա խիստ մշուշապատ: Այնինչ՝ խոսքն ավելի խորքային իրավիճակների մասին է և ոչ թե իշխանության, որ այսօր կարող է կամք դրսևորել կամ չդրսևորել: Այդ խորքային իրավիճա-

կը նաև սրվում է այն իմաստով, որ մենք Թուրքիայի ու թուրք ժողովրդի հետ հարաբերությունների ընթացքում եղել ենք մի հրեշավոր հանցագործության թիրախ, ինչի հետևանքով մեր երկիրը կորցրել է իր տարածքի բացարձակ մեծամասնությունը, իր ժողովրդի ավելի քան երկու-երրորդը: Թուրքիայի կողմից այս հանցագործության չընդունումն արդեն իսկ աղերսվում է Հայաստանի ազգային անվտանգության խնդիրների հետ: Մեր ազգային անվտանգության հայեցակարգը, որ համատեղ ուժերով վերջապես հաջողվեց ամբողջացնել, նույնպես ամրագրում է դա: Այնտեղ հստակ ասված է, որ ցեղասպանության չճանաչումը շարունակում է սպառնալ Հայաստանի ազգային անվտանգությանը: Ի դեպ, ցեղասպանության ճանաչումը դիտարկվում է ոչ թե որպես զուտ պատմական մի իրադարձության ճանաչում, այլ մի ակտ, որ առնչվում է այսօրվա տարածքային կայունության և անվտանգության համակարգի ձևավորման հետ:

Այժմ թույլ տվեք մի քանի խոսքով անդրադառնալ հայ-թուրքական հարաբերությունների նախապատմությանը, որի իմացությունը մեզ հնարավորություն կտա ճիշտ գնահատել այսօրվա իրավիճակները ու մոտեցումները: Դրա համար, նախ և առաջ պետք է առանձնացնել մի կարևոր հիմնահարց՝ հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունը: Թուրք պատմաբանները այստեղ իրավացիորեն նշում են, որ Օսմանյան կայսրությունում այդ հարաբերությունները եղել են կայսրության բնույթից կախված հարաբերություններ: Այսինքն՝ հայ ժողովուրդն այդ երկրի տարածքում հալածվում էր նույնքան, որքան և Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչությունը: Ինչ-որ մի պահի, սակայն, հարաբերությունների որակը կտրուկ փոխվում է, և թուրքական պետության կողմից վարվող քաղաքականությունը ձեռք է բերում հստակ ընդգծված հակահայկական բնույթ: Այդ պահից սկսած առաջնահերթություն են ստանում հայությունը ոչնչացնելու, իր պատմական հայրենիքից դուրս մղելու և հայությանն իբրև Օսմանյան կայսրությունում ապրող բնիկ տարր վերացնելու խնդիրները: Ո՞րն էր այս կտրուկ շրջադարձի պատճառը:

Թուրքական պատմագրությունը հայ ժողովրդի հանդեպ վերաբերմունքի այս փոփոխությունը փորձում է բացատրել օտար պետությունների ազդեցությամբ, ներսում հայերի անհնազանդությամբ և թուրքական պետության դեմ պայքարով: Մեր համոզմամբ, սակայն, դա պայմանավորված էր առաջին հերթին Օսմանյան կայսրության տարածքում ազգային պետություն ձևավորելու և ազգային գաղափարախոսությունը թուրքական պետության հիմքում դնելու հանգամանքով: Աբդուլ Համիդի օրոք այդ գաղափարախոսությունը ձևակերպվում էր որպես իսլամիզմ և ենթադրում էր իսլամական ժողովուրդների համախմբման և քրիստոնյաներից երկիրը մաքրելու քաղաքականություն: Նույն Աբդուլ Համիդի իշխանության վերջին տարիներին էլ առաջացավ թուրքիզմը, որի նպատակների առանցքը հայրենիքի ձևավորման գաղափարն էր: Հարկավոր էր ձևավորել հայրենիք, որի շուրջ պետք է միավորվեր թուրքական ամբողջականությունը: Այդ հայրենիքի տարածքը, բնականաբար, պետք է լիներ Անատոլիան, որի մի մասը բուն Հայաստանն էր, իսկ մյուս մասը հունական ազդեցության տարածք էր: Հենց այս քաղաքական հենքի վրա տեղի ունեցավ մեր հարաբերությունների որակական կտրուկ շրջադարձը: Փաստերը շատ են, աղբյուրները՝ ոչ հայկական, և, համոզվելու համար, բավական է ծանոթանալ արխիվային նյութերին՝ անգլիական, ֆրանսիական, գերմանական դիվանագիտական գրքերին:

Եթե ուշադիր նայենք ցեղասպանության քարտեզը, կնկատենք, որ կոտորածների հիմնական ալիքն իր մեջ ներառել է բուն Հայաստանի տարածքում ապրող հայությանը, և նույն սաստկությամբ չի պատուհասել Փոքր Հայքի, Կիլիկիայի և անգամ Արևմտյան Անատոլիայի մեր հայրենակիցներին, որոնց փրկված հատվածներից էլ ձևավորվել է այսօրվա հայկական Սփյուռքը: Մեզ թվում է՝ հենց սա է այն սկզբնակետը, որից մենք պետք է սկսենք մեր զրույցը թուրք հարևանի հետ: Եթե նրանք անընդհատ փորձում են պատմական հարթության վրա ինչ-որ ճշտումներ կատարել, ապա հույս ունեն հաստատելու, թե հայերն իրականում զոհ են դարձել օտար պետությունների խարդավանքներին և ինքնաբերաբար թշնամացել թուրքական պետությանը, ինչի արդյունքում էլ խաթարվել են նորմալ հարաբերությունները: Սակայն, ինչպես վերևում ասացինք, հակահայ քաղաքականությունը արդյունք էր թուրքական գաղափարախոսության կտրուկ շրջադարձի և բնավ էլ կապ չուներ օտարերկրյա միջամտությունների հետ: Նախկինում էլ Թուրքիան պատերազմել է Ռուսաստանի և Եվրոպայի հետ, բայց հայկական տարրն այդ երկրում երբևէ խափանարարության չի դիմել: Ավելին, անկախության համար մղած մեր ազգային-ազատագրական պայքարը, կարելի է ասել, սկիզբ է առել միայն 1915 թվականից հետո, երբ արդեն ի-



րողություն էր դարձել ցեղասպանությունը, իսկ դրանից առաջ եղել է միայն պայքար հանուն բարեփոխումների և սահմանադրական իրավունքների: Ահա այն մեկնակետը, որից մենք պետք է սկսենք, եթե ցանկանում ենք Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելուց առաջ հարթել գոնե մեր ներքին անհամաձայնությունները: Այս հարցում միակարծիք լինելուց հետո միայն կարող ենք տարանջատվել այն հարցերի շուրջ, թե ինչպես բացենք սահմանը, ինչպես կառուցենք մեր հետագա հարաբերությունները: Այս հարցերում կարող են, իհարկե, մեր տեսակետները տարանջատվել, մոտեցումները լինել տարբեր, սակայն պատմական գնահատականի հարցում մեր ժողովուրդը իրավունք չունի սխալվելու: Այդ գնահատականը, կրկնում եմ, մենք իններս պետք է հաստատագրենք նախ և առաջ մեզ համար, փակ շրջանակում, որպեսզի մեր հետագա խոսակցությունը հարևանի հետ տանենք ճիշտ ուղղությամբ:

Հարց.- *Պարոն Մկրտչյան, Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին էլ հայ-թուրքական հարաբերություններ եղել են: Որքանո՞վ է այսօր իրավիճակը տարբեր և, ըստ ձեզ, ի՞նչ առանձնահատկություններ ունեին այն ժամանակ ձևավորված հարաբերությունները, որոնք այնուամենայնիվ հանգեցրին Հայաստանի անկախության կորստին:*

- Հայ-թուրքական հարաբերությունների ամենաբարդ շրջափուլը երևի թե 1918-1920 թվականներն են: Ինչպես մեր ներկա հանրապետության, այնպես էլ 1918-1920 թվականների Հայաստանի Հանրապետության առաջին ճանաչողներից մեկը Թուրքիան էր: Կարելի է ասել, որ այն ժամանակ, առաջին անգամ մեր պատմության մեջ, հայ-թուրքական հարաբերությունները սկսեցին ձեռք բերել միջպետական երանգավորում: Դրանք, ճիշտ է, հակառակ ճամբարներում միմյանց դեմ պատերազմներ մղած երկրների միջպետական հարաբերություններ էին, շատ բանով նման այլ երկրների հարաբերություններին, բայց այն ժամանակ Հայաստանի Հանրապետության ղեկավարները,

իշխանությունները, ստիպված էին դրանք մշտապես կառուցել գոյատևման հիմքի վրա։ Այսինքն՝ միանգամայն այլ բան է, երբ երկու հարևան պետություններ միմյանց հետ պատերազմում են, հաղթում են կամ պարտվում, կնքում են հաշտության պայմանագիր (նույնիսկ մեկի համար նվաստացուցիչ և անարդար) և հետո նրանց միջև ձևավորվում է հարաբերությունների մի համակարգ, և բացարձակապես այլ բան է, երբ ցանկացած պարտության գինը տվյալ ժողովրդի վերջին հատվածի ոչնչացումն է ամբողջապես։ Փաստորեն 1918-1920 թվականների հայ-թուրքական հարաբերությունների վճռորոշ վեկտորն այն էր, որ պարտության դեպքում Թուրքիայից պարտվում էր ոչ միայն Հայաստանի Հանրապետությունը որպես պետություն, այլև իր բուն հայրենիքի վերջին հողակտորին ապավինած հայությունն էր դատապարտվում ոչնչացման։ Նման մտավախություն չունեին, օրինակ, Ֆրանսիայի իշխանությունները, երբ Փարիզը հանձնում էին գերմանացիներին։ Ոչ ոքի մտքով չէր էլ անցնում, թե դրանից հետո գերմանացիները կսկսեն ոչնչացնել Ֆրանսիայի ժողովրդին։ Թուրքիայի խնդիրը, սակայն, հայ ազգի հավաքական ամբողջության ոչնչացումն էր, և այդ էր պատճառը, որ նույնիսկ միջպետական հարաբերություններն էին այլ բնույթի։ Այն ժամանակների որևէ պայմանագիր, վերջին հաշվով, չի կարող դիտվել որպես օրինաչափ փաստաթուղթ, որովհետև Հայաստանի Հանրապետության պատասխանատուները այդ պայմանագրերն ստորագրելիս ոչ թե հաշվարկում էին պետական շահերը, այլ ստիպված էին ընտրություն կատարել անկախության և ժողովրդի գոյության միջև։ Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումն էլ, վերջին հաշվով, նույն ընտրության արդյունքն էր։ Ինչո՞ւ կամովին զոհաբերվեց անկախությունը, ինչո՞ւ մի ամբողջ երկիր հրաժարվեց իր սուվերենությունից։ Որովհետև մյուս նժարին դրված էր ժողովրդի ամբողջական ոչնչացման խնդիրը։

Այսօր էլ, քանի դեռ Թուրքիան չի ճանաչել ցեղասպանության փաստը, չի ընդունել իր մեղքն այդ հանցագործության մեջ, մեր հարաբերությունների մեջ, ինչ իշխանություններ էլ լինեն Հայաստանում, դոմինանտ պետք է համարվի ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրը։ Դա վերաբերում է նույնիսկ այնպիսի մի խնդրի, ինչպիսին հայկական նոր ատոմակայանի շինարարությանը որևէ ձևաչափով Թուրքիայի մասնակցությունն է։

Հարց.- *Պարոն Մկրտչյան, այսօր ավելի շատ ընդունված է խոսել 1915 թ. և դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին որպես ցեղասպանական երևույթների։ Բայց նման երևույթներն անպայման անցնում են նախապատրաստական ինչ-ինչ փուլեր։ Արդյոք կարո՞ղ ենք 1915 թվականի ցեղասպանությունն էլ հիմնավորել որպես նախնական գործընթացների հետևանք։ Կարելի՞ է ավելի հստակ նշել մի տարեթիվ, որից այս կողմ վերջնականապես ձևավորվել է ցեղասպանության մոդելը։*

- Մինչև 1850-ական թվականները թուրք տարրի՝ իբրև ինքնագիտակցություն ունեցող հատվածի գոյության խնդիր ըստ էության չկար։ Մարդահամարներում նույնիսկ նշվում էին՝ մուսուլմաններ և քրիստոնյաներ։ Ի դեպ, քրիստոնյաների հիշատակման մեջ կա մի այնպիսի տարբերակում՝ քրիստոնյաներ և հայ քրիստոնյաներ (Գրիգորյաններ)։ Հետագայում, երբ արդեն սկսվեց ազգային հենքի վրա աշխարհի վերակառուցումը, երբ ակներև դարձավ, որ կենսունակ են ազգային հենք ունեցող պետությունները, առաջացավ նաև Օսմանյան կայսրության կառավարման մեխանիզմի խնդիրը։ Շատերը սուլթան Համիդին դեռ համարում են իսլամիզմի գաղափարների կրող և թուրքիզմի թշնամի, բայց, մեր խորին համոզմամբ, հենց Աբդուլ Համիդն էր, որ թուրքիզմը հիմնադրեց։ Նրա ժամանակ բացվեցին այն ուսումնական հաստատությունները, որոնցում հավաքվեցին թուրքիզմի այն ժամանակվա խոշոր գաղափարախոսները, այդ հաստատություններում կրթություն ստացավ, այսպես կոչված, մակեդոնական երիտթուրքական սերունդը։ Համիդը լավ էր հասկանում, որ եթե ինքը միանգամից անցնում կատարեր թուրքիզմի գաղափարախոսությանը, լուրջ հակադրության մեջ կմտներ երկրի տարածքում բնակվող քրիստոնյա և այլադավան ժողովուրդների հետ։ Այդ իսկ պատճառով նա մի տևական ժամանակ հետևում էր իսլամիզմին, որն ըստ էության առաջնային գաղափարախոսություն է և որի հիմքում ընկած է ճնշված մուսուլմանների պայքարը անգլիական գաղութարարության դեմ։ Անցումը թուրքիզմին հատկապես ընդգծվում է 1890-ական թվականներին։ Այս ժամանակաշրջանում է հենց ի հայտ գալիս ցեղասպանության մոդելը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ պետության կողմից մի որևէ ազգային փոքրամասնության դեմ տարվող ոչնչացման կազմակերպված, ծրագրավորված քաղաքականություն։ Դրա վառ օրինակը Կոստանդնուպոլսի ջար-

դերն են: Մենք այսօր կենտրոնանում ենք 1915 թվականի վրա, որովհետև այդ թվականն է հանդիսանում հայկական ջարդերի բարձրակետը, բայց ցեղասպանության մեխանիզմները, ըստ էության, մշակվել են 1890-ական թվականներին: 1915 թվականին, փաստորեն, արդեն գոյություն ունեցող մեթոդներին ավելացավ նաև դեպորտացիայի միջոցով մարդկանց տեղահանելու և գաղթի ճանապարհներին ոչնչացնելու եղանակը:

Այնուհետև սկսվեց մտքերի փոխանակություն հիմնական զեկուցման շուրջ, որոնցից առավել ուշագրավ տեսակետներն էլ հարմար ենք գտնում ներկայացնել ստորև.

**Ռուբեն Մելքոնյան** (թուրքագետ).- Պարոն Մկրտչյան, Ձեր զեկույցում մի շարք կարևոր շեշտադրումներ արեցիք, որոնց մեծ մասը ես լիովին կիսում եմ, սակայն կցանկանայի անդրադառնալ նաև Թուրքիայի Հանրապետության տարածքում մնացած մեր ժողովրդի բեկորների վիճակին: Հանրապետության ստեղծումից հետո էլ, նրա տարբեր շրջաններում, շարունակվել են կրոնական ճնշումները: Որպես ասվածի ապացույց կարող ենք բերել, օրինակ, 1942 թ. ունեցվածքի հարկ կոչվող հարկատեսակը, որ կոնկրետ հայերի համար, մուսուլմանների համեմատությամբ, մոտ 240 անգամ ավելի էր: Սա պարզապես հատուկ մի ծրագիր էր, որ ուղղված էր հայ բուրժուազիայի վերացմանը Թուրքիայի տարածքում: Կամ՝ ինչպե՞ս կարելի է բացատրել հայերի, հույների և հրեաների զորակոչերը 1940-ական թվականների սկզբին, երբ նրանք չէին վարժեցվում, զինվորական հագուստ և զենք չէին ստանում: Թուրքական աղբյուրներն այս մասին հիշատակումներ չեն պահպանել, բայց օտարերկրյա դիվանագետների զեկույցները, որոնք սկսել են հրապարակվել վերջին տարիներին, թույլ են տալիս մեզ ասել, որ ցեղասպանական կամ էթնիկ զտման բնույթ ունեցող գործողությունները տարբեր դրսևորումներով շարունակվել են նաև հանրապետական Թուրքիայում, ընդհուպ մինչև 50-ական թվականների կեսերը, երբ Ստամբուլում և Իզմիրում ավերվեցին հայերին և հույներին պատկանող բազմաթիվ խանութներ ու բնակարաններ: Ամփոփելով՝ կարող ենք ասել. թուրքական նորագույն պետության գաղափարախոսության հիմնադրույթներից մեկն է դառնում նախկին մոզաիկայի փոխարեն, ըստ որի Թուրքիան բազմազգ երկիր էր, մարմարե, առավել միատարր պետություն ստեղծելու (սա հենց իրենց տերմինոլոգիան է) գաղափարը: Կարող ենք մեջ բերել Թուրքիայի պաշտպանության նախարարի՝ բոլորովին վերջերս արած հայտարարությունը, ըստ որի՝ եթե Թուրքիայի գրեթե աղջ տարածքում շարունակեն ապրել հայեր, Էգեյան ծովի ավազանում շարունակեն ապրել հույներ, կարո՞ղ է արդյոք Թուրքիան համարվել ազգային պետություն: Ընդ որում նա այս հայտարարությունն արել է 2008 թ. Բրյուսելում և մինչև օրս թուրքական պաշտոնական շրջանակների կողմից որևէ քննադատության չի ենթարկվել: Ստացվում է, որ եթե 1915 թվականի կոտորածները թուրքական կողմն այսօր փորձում է արդարացնել Ռուսաստանի կամ եվրոպական այլ երկրների նկատմամբ հայերի համակրանքով, ապա որևէ կերպ չի կարող արդարացվել Թուրքիայի Հանրապետության քաղաքացի համարվող հայերի և հույների նկատմամբ մեր օրերում կիրառվող էթնիկ զտումների քաղաքականությունը: Մեր կարծիքով սա մի շատ կարևոր նկատառում է, որ մերօրյա թուրքագիտությունը պետք է բարձրացնի օրակարգ և տարածի միջազգային գիտական շրջանակներում:

**Վահան Հովհաննիսյան** (ՀՅԴ Բյուրոյի անդամ).- Ես կարծում եմ, որ մեր հասարակության առջև, Հայաստանում հատկապես և սփյուռքում էլ մասամբ, շատ լուրջ խնդիր է կանգնած: Այստեղ իրավացիորեն նշվեց, որ մենք հատկապես կենտրոնացել ենք 1915 թվականի վրա, որպես ցեղասպանության տարեթիվ: Եթե մենք փորձեինք ցեղասպանությունը ներկայացնել որպես տարածական երևույթ, ապա մեր խնդիրն զգալիորեն կդժվարանար: Հայ դատը, իր գործունեության ընթացքում, փուլ առ փուլ, կարողացել է որոշակի արդյունքների հասնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ասպարեզում, իմ կարծիքով, հենց միայն նրա համար, որ շեշտադրումները կատարել է հենց 1915 թ. կոտորածների վրա: Բնական է, եթե մենք սկսեինք որպես ցեղասպանության հարատև մի պրոցես ներկայացնել ողջ թուրքական պատմությունը, այդ պետության վերաբերմունքը թուրքահպատակ բոլոր ժողովուրդների նկատմամբ, ապա միանշանակ կհայտնվեինք փակուղում, որովհետև ստիպված էինք լինելու բախվել նաև ուրիշ պետությունների շահերի հետ: Այսօր իրավիճակը փոխվել է: Հայաստանի Հանրապետությունը սկսել է բանակցային մի գործընթաց, որ մեր առջև նոր խնդիրներ է ստեղծում: Ցեղասպանության ճանաչման հե-

տագա գործընթացը կասեցնելու Թուրքիայի հիմնական զենքը կարող է դառնալ բանակցությունների արդյունքում ենթադրվող պատմաբանների հանձնախումբը: Նրանք հույս ունեն, որ այդ հանձնախումբն, ի վերջո, կուսումնասիրի և կպարզի, որ բազմաթիվ այլ երկրների պատմության մեջ էլ եղել են արյունոտ իրադարձություններ, որոնք շատ հեշտությամբ բացատրվում են ամենատարբեր պատերազմներով: Ուստի այստեղ մեր քարոզչական հիմնավորումների համար առավել կարևոր են դառնում անդրադարձները 1890-ական թվականների (Արևմտյան Հայաստան) և 1909 թ. (Կիլիկիա) իրադարձություններին, այսինքն՝ այն տարիներին, երբ ոչ մի պատերազմ չկար: Բավականին հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ 1912 թվականի Բալկանյան պատերազմի ժամանակ ցեղասպանական գործողություններ չեն կատարվել: Կարծում եմ, որ մենք այս երևույթների վրա ևս պետք է շեշտադրումներ անենք, որովհետև, նույնիսկ մեր հասարակության մեջ, պատմության այս շրջանի մասին պատկերացումներն այնքան էլ հստակ չեն և նրանց մեծ մասը հակված է մտածելու, որ ցեղասպանությունը, որպես երևույթ, սկսվել է 1915 թվականին և շարունակվել մինչև 1922, 1923 թվականները: Ցեղասպանության հարցում մեր պետության մոտեցումները նույնպես չեն տարածվում 1890-ականների վրա, մինչդեռ ժամանակն է բանակցող կողմին հստակորեն մատնանշել դրանք ևս: Վերջին հաշվով մենք Թուրքիային մեղադրում ենք երկու հարցում: Առաջին՝ թուրքահպատակ հայերի ոչնչացումը, որ մենք անվանում ենք ցեղասպանություն, և երկրորդ՝ արդեն ճանաչված Հայաստանի Հանրապետության դեմ ագրեսիան ռուս բոլշևիկների հետ համատեղ: Այս ամենը, երբ մենք խոսում ենք հայ-թուրքական հարաբերությունների մասին, հաճախ մթագնում է, մինչդեռ պետք է նման տարանջատումները լինեն հստակ, որովհետև պահանջատիրության ձևակերպումը մի քանի տարբեր շերտեր ունի: Պետք է հստակ իմանանք, թե ինչ ենք մենք հասկանում հատուցում ասելով: Այս մասին, ցավոք, մեր ազգը պատկերացում չունի, որովհետև այս հարցը ևս մինչ օրս չի բարձրացվել, չի մեկնաբանվել: Եթե մի գեղեցիկ օր Թուրքիայում խելամիտ վարվեն ու որոշեն ճանաչել ցեղասպանությունը, մեր հասարակության համար բոլորովին էլ հստակ չէ, թե հետո ինչ ենք անելու:

**Ալբերտ Աճեմյան**.- Իմ կարծիքով այստեղ շատ հանգամանալի ներկայացվեց հայ-թուրքական հարաբերությունների նախապատմությունը և, մասնավորապես, Թուրքիայի կողմից ցեղասպանության քաղաքականության որդեգրման ընթացքը: Ես կցանկանայի ընդգծել ցեղասպանության՝ մեր ժողովրդի վրա ունեցած ազդեցության մյուս երեսը նաև. ցեղասպանությունը աղետ լինելով հանդերձ, կարծես դարձավ մեր ժողովրդի միասնության առանցքը, որ պահպանվում է մինչև օրս: Հայ-թուրքական այսօրվա շփումները, ճիշտ է, անհրաժեշտություն են հայ պետականության համար, բայց դրանցում ամեն մի անզգույշ քայլ, ամեն մի սայթաքում, կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: Առաջին հերթին ես նկատի ունեմ մեր ժողովրդի երկպառակումը: Հայ ժողովրդի միասնությունը, որ ձևավորվեց ցեղասպանության հարցի հետապնդման գործընթացում, մեր նորաստեղծ հանրապետության համար ոչ պակաս կարևոր ու կենսական նշանակություն ունի, քան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը:

**Էդիկ Մինասյան** (պատմաբան).– Թույլ տվեք նախ ողջունել «Դրոշակի» նախաձեռնությունը, որով մեզ ընձեռվել է մեր երկրի ու ժողովրդի համար այսօր այնքան կարևոր հարցի քննարկման այս հնարավորությունը: Այստեղ հնչած ելույթները, իրավացիորեն, մեզ կրկին անգամ համոզում են, որ Թուրքիայի հետ կառուցվող ցանկացած հարաբերություն պետք է իրականացվի պատմության դասերը հաշվի առնելով: Մենք պետք է հստակ գիտակցենք, որ Թուրքիան մի պետություն է, որ դարեր շարունակ էթնիկ զտումների քաղաքականություն է վարել, որ այսօր էլ նա չի հրաժարվել պանթուրքիզմի գաղափարախոսությունից: Այս ամենը, մեր անկախության գոյության պայմաններում, մեզ ստիպում է կրկին աչքի առաջ ունենալ ժողովրդի ու պետականության անվտանգության խնդիրները:

Իմ կարծիքով մենք քրդերի հետ հարաբերություններ կառուցելու գործում նույնպես պետք է դիվանագիտորեն շատ զգույշ վարվենք: Ով եղել է Արևմտյան Հայաստանում, կհաստատի, որ հիմնականում քրդերով բնակեցված այդ տարածքում արժանացել է առնվազն երկու տարբեր վերաբերմունքի: Քրդերի մի մասն ընդհանրապես անտարբեր է այսօրվա գործընթացների հանդեպ: Կան բնակավայրեր էլ, որոնց բնակիչները առանց վախենալու մեզ առաջարկում են միանալ ու թուրքերի հախից գալ: Քիչ չեն նաև քրդաբնակ այն տարածքները, որոնցում հայերին ուղղակի

թշնամանքով են վերաբերվում, կարծելով, թե դա իրենց հայրենիքն է և մենք ցանկանում ենք տեր դառնալ այդ հայրենիքին: Այս ճակատում, իմ համոզմամբ, մենք լուրջ քարոզչական անելիք ունենք:

**Լևոն Մկրտչյան**.- Ճիշտ նկատեց պարոն Մինասյանը, որ Թուրքիայի քաղաքականությունը էական փոփոխությունների չի ենթարկվել: Այդ է վկայում նաև նրա սահմանադրությունը, որտեղ կա այսպիսի մի կետ. «Թուրքիայում ապրող յուրաքանչյուր անձ թուրք է»: Ես դժվարանում եմ մտաբերել ևս մի երկիր, որի սահմանադրության մեջ նման կետ կամ հոդված լինի: Սա տեղիք է տալիս մտածելու, որ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավմանն ուղղված նրա քայլերն ինչ-ինչ համոզմունքներով չէ, որ պայմանավորված են, այլ արվում են անհրաժեշտությունից դրդված, արտաքին ճնշումների ազդեցության տակ: Սա կարևոր հարց է մեր հարաբերությունների բուն էությունը հասկանալու համար: Հայաստանում ցանկացած իշխանություն պետք է պատասխանատու կերպով հասկանա, որ այն, ինչ այսօր կատարվում է Թուրքիայի կողմից, բարի կամքի արտահայտություն չէ, և առաջին իսկ պահին կարող է սրբագրվել հենց նույն Թուրքիայի կողմից, եթե իրավիճակը փոխվի և թուլանան միջազգային ճնշումները: Երիտթուրքերի հեղափոխության ժամանակ էլ մեզ թվում էր, թե Թուրքիան փոխվեց: Եթե նայենք այն ժամանակվա մեր մամուլը և քաղաքական գործիչների հուշերը, կտեսնենք, որ հայ հասարակական միտքն իրոք հավատում էր, որ Թուրքիան փոխվել է, իշխանության են եկել եվրոպական հայացքների տեր մարդիկ, ովքեր ֆրանսիական հեղափոխության կարգախոսներ են կրում: Բայց այդ ամենն ընդամենը արտաքին ճնշումներից զերծ մնալու և դրանց հարվածներից թուրքական պետությունը փրկելու նպատակ էր հետապնդում: Այսօր էլ կան այդ ճնշումները, բայց Թուրքիան խիստ հաշվենկատ է և քաջ գիտակցում է, որ անթույլատրելի զիջումների գնալ պարզապես չի կարող, որովհետև ցանկացած ավելորդ զիջում նորանոր խնդիրներ է ծնելու: Մենք պետք է հստակ գիտակցենք, որ Թուրքիան բազմաթիվ ժողովուրդների հայրենիքի վրա ստեղծված պետություն է և եթե զիջումների գնա Հայկական հարցում, անմիջապես իրենց հասանելիքն են պահանջելու Հունաստանը, Սիրիան, վերջապես ողջ հասակով ծառանալու է նաև քրդական հարցը:

Մենք հեռու ենք այն մտքից, թե Թուրքիայի հետ հարաբերություններ սկսել պետք չէ, բայց և գտնում ենք, որ հարաբերություններ սկսելուց առաջ պետք է հասկանալ, թե ինչպիսին են դրանք: Դրանք հարաբերություններ են լավատեսական հեռանկարներո՞վ, թե՞ հարաբերություններ, որոնց Թուրքիան գնում է ստիպողաբար, իսկ մենք ակամա տրվում ենք դրան, և, օգտվելով դրանից, Թուրքիան հարաբերությունների կարգավորման պատրանք է ստեղծում համաշխարհային հանրության համար:

Պարոն Հովհաննիսյանը նաև հիշատակեց պահանջատիրության սխեմայի մասին: Սա շատ կարևոր մի կետ պիտի հանդիսանա հայ-թուրքական հարաբերությունների հետագա առաջընթացի մեջ: Մենք պետք է պատրաստ լինենք հստակ տարանջատելու այն իրավական հարթությունները, որոնցում գտնվում են մեր պահանջատիրության զանազան օբյեկտները: Մինչև օրս մենք Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածների անկախության խնդիրը դիտարկել ենք միևնույն հարթության մեջ, անհարմար զգալով խոստովանել, թե Արևմտյան Հայաստանի համար անկախության գաղափար չենք ունեցել: Բայց իրականությունն այն է, որ իրավական տեսակետից մենք երկու հարթություն ունենք: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի վերջը մենք ունեցել ենք Արևմտյան Հայաստանի տարածքում բարեփոխումների խնդիր, և այդ բարեփոխումները ճանաչվել ու մեզ տրվել են թուրքական երկու իշխանությունների կողմից: Թե Աբդուլ Համիդը և թե երիտթուրքերը ճանաչել են հայ փոքրամասնության ինքնավարության իրավունքը: Եթե Արևմտյան Հայաստանում հայեր չկային, ապա ի՞նչ բարեփոխումներ էին տեղի ունենում այդ տարածքներում, ինչո՞ւ էին եվրոպացի նահանգապետներ նշանակվում, ինչո՞ւ էր հաղորդակցության լեզվի հարց ճշտվում: Կա պահանջատիրության նաև երկրորդ հարթությունը՝ 1914 թվականի սահմանը, որով Հայաստանը, որպես Ռուսական կայսրության համապատասխան տարածքների իրավահաջորդ, բոլորովին այլ կարգավիճակ ուներ: Եթե մենք Արևմտյան Հայաստանի մասին խոսում ենք որպես ինքնավարության ձգտող և բնօրրանում ոչնչացված փոքրամասնության հայրենիքի, ապա Կարս-Սարիղամիշ-Իգդիր հատվածով 1914 թվականի ռուս-թուրքական սահմանի ձևախախտումն ուղղակի պետական անեքսիա է, որն, ի տարբերություն մյուս սահմանների, Վերսալյան համաձայնագրով այդպես էլ չվերականգնվեց: Ի դեպ, սա պատերազմի ավարտից հետո Թուր-

քիային զինեցին բոլշևիկները՝ Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի օրինակով, որոնք, իհարկե, հետագայում հետ վերադարձվեցին:



Այնուհետև «կլոր սեղանի» օրակարգով նախատեսված երկրորդ զեկույցի համար ձայնը տրվեց ՀՅԴ Հայ դատի և քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու **Կիրո Մանոյանին:**

– Մենք պարտավոր ենք արձանագրել, որ Հայաստանի անկախության կորստից հետո, մինչև վերանկախացում, հայ-թուրքական հարաբերություններ, որպես այդպիսին, չենք ունեցել: Այն, ինչ էլ որ տեղի է ունեցել, եղել է հասարակական մակարդակում և չի կարող դիտվել իբրև հայ-թուրքական հարաբերության օրինակ: Այդ հարաբերության օրինակներ չեն կարող դիտվել նաև Երկրորդ աշխարհամարտից հետո եղած շփումները, որովհետև Թուրքիայի հետ բանակցող կողմը եղել է Խորհրդային Միությունը: Բացառություն է կազմում, թերևս, մինչև Հայաստանի վերանկախացումը, 1970-ական թվականների Թուրքիայի արտգործնախարարի հանդիպումն այդ ժամանակ սփյուռքում գործող հայ ավանդական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, որը, պետք է ասեմ, նույնպես ճնշման արդյունք էր: Այդ ժամանակ սկսվել էր զինյալ պայքար, և այդ պայքարի դեմն առնելու նպատակով էլ թուրքական կողմը կազմակերպեց այդ հանդիպումը, որն ավարտվեց ընդամենը կողմերի դիրքորոշումների ներկայացմամբ: 1991-ին Հայաստանի վերանկախացումով միայն հայ-թուրքական հարաբերություններ վերսկսելու հնարավորություններ բացվեցին, որոնք, սակայն, առաջին իսկ օրվանից մերժվեցին Թուրքիայի կողմից, որը երեք նախապայման էր առաջարկում հարաբերություններ սկսելու համար: Այստեղ պետք է նկատենք, որ ընդհուպ մինչև Հայաստանի վերանկախացումը, Թուրքիան չէր էլ մտածում, որ շուտով իր կողքին կունենա մի նոր հարևան, որի հետ հարաբերություններում պատրավոր է որոշակի կեցվածք դրսևորել: Այդ կեցվածքի մասին պատկերացումները, ինձ թվում է, մինչև օրս էլ Թուրքիայում չեն հստակեցվել, և պատահական չէ, որ դեռ 1991-ին հրապարակ բերված և մեզ համար անընդունելի երեք նախապայմաններն էլ մինչև վերջերս դեռ շրջանառության մեջ էին: Առաջինը՝ Հայաստանի Հանրապետության միջամտությամբ հրաժարեցնել սփյուռքահայությանը ցեղասպանության հարցի հետապնդումից, երկրորդ՝ հաստատել Կարսի պայմանագիրը և երաշխիքներ տալ, որ Հայաստանը Թուրքիային այլևս պահանջներ չի ներկայացնի, և երրորդ՝ Արցախի խնդիրը պետք է կարգավորվի Ադրբեջանի շահերին համապատասխան: Այս երեք նախապայմանները, շեշտադրումների որոշ տարբերությամբ, ինչպես արդեն ասացի, հասել են մինչև մեր օրերը:

2005 թվականի ապրիլի 24-ի նախօրեին, երբ արդեն պարզ էր, որ Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցի թե հայաստանյան և թե սփյուռքյան միջոցառումները մեծ աղմուկ են բարձրացնելու աշխարհում, Էրդողանը փորձեց Քոչարյանին հասցեագրված մի նամակով մեղմել աղմուկը: Նա առաջարկում էր հայ և թուրք պատմաբաններից կազմված երկկողմ մի հանձնաժողով ստեղծել, որը կզբաղվեր 1915 թվականի իրադարձությունների ուսումնասիրությամբ: Ռ. Քոչարյանի պատասխանը չուշացավ, որով Էրդողանին կոչ էր արվում դիվանագիտական հարաբերություններ հաստատել, որից հետո քննարկում սկսել միջգերատեսչական մակարդակով: Սա է փաստորեն այն սկզբնակետը, որից սկսվելու էր հայ-թուրքական նորօրյա հարաբերությունների կարգավորումը:

Մինչև 2008 թվականը, կողմերի միջև առանց էական արդյունքների, որոշ շփումներ եղել են, որոնց բարձրակետը կարելի է համարել եր-

կու երկրների արտգործնախարարների նախնական համաձայնությունը՝ փորձել ստորագրել այնպիսի մի փաստաթուղթ, որը կնպաստի քայլ առ քայլ մոտենալ սահմանների բացմանն ու շրջափակման վերացմանը: Հայկական կողմին, սակայն, մեծ հիասթափություն էր սպասվում: Շուտով պարզ դարձավ, որ Թուրքիայի արտգործնախարարի (այն ժամանակ արտգործնախարարը Աբդուլլահ Գյուլն էր) բանավոր պայմանավորվածությունները ընդամենը քաղաքական նպատակներ են հետապնդում, և շուտով դրանք չեղյալ համարվեցին նույն արտգործնախարարության զինվորական գծով պատասխանատուի միջոցով: Իրավիճակը մի փոքր փոխվեց այն բանից հետո, երբ 2007 թվականին Թուրքիայի նախագահ ընտրվեց Աբդուլլահ Գյուլը, որին այդ կապակցությամբ հայկական կողմը շնորհավորեց նախագահի և արտգործնախարարի մակարդակով և հույս հայտնեց, որ դա կդառնա հայ-թուրքական նոր հարաբերությունների սկիզբ: Մեկ տարի անց, նոր նախագահին շնորհավորելու հերթը թուրքերինն էր, և նրանք էլ իրենց կողմից հույս հայտնեցին, որ դա կդառնա երկու երկրների միջև հարաբերությունների սկիզբ: Նույն թվականի ամռանը, երբ արդեն հրապարակի վրա էր արտգործնախարար Նալբանդյանի հայտարարությունը, թե հայ-թուրքական հարաբերությունները պետք է նոր ձև ստանան, ՀՀ նախագահը Մոսկվայում հայտարարեց, որ մտադիր է իր թուրք գործընկերոջը հրավիրել Հայաստան և համաձայն է վերանայել պատմաբանների հանձնախումբ ստեղծելու թուրքական կողմի առաջարկը, եթե միջպետական հարաբերություններ հաստատվեն երկու երկրների միջև: Կարծիք կա, որ ՀՀ նախագահը դեռևս հունիս ամսին լուրջ հիմքեր ուներ մտածելու, որ օգոստոսին պատերազմ է սկսվելու Վրաստանում և դրա համար էր շտապում հրավիրել Գյուլին: Ես անձամբ չեմ կիսում այդ տեսակետը, բայց փաստն այն է, որ տեղի ունեցան օգոստոսյան դեպքերը և Սերժ Սարգսյանի առաջարկը դարձավ խիստ հրատապ: Եթե մինչև օգոստոսյան պատերազմը Գյուլը որևէ կերպ չէր արձագանքում, և հավանականությունը մեծ էր, որ նա չի ընդունի հրավերը, ապա պատերազմից հետո պարզ դարձավ, որ Գյուլը կընդունի առաջարկը, քանի որ Թուրքիան ցանկանում էր տարածաշրջանային նոր իրավիճակում ավելի լուրջ դերակատարություն ստանձնել: Այդ գործում միակ խոչընդոտը, թերևս, Հայաստանի հետ հարաբերությունների բացակայությունն էր, ինչն էլ, ի վերջո, պատճառ հանդիսացավ, որ Գյուլն ընդունի հրավերն ու այցելի Հայաստան: Այդ այցից հետո, ահա, սկիզբ առավ բանակցությունների մի փուլ, որում հայկական կողմի պնդումը՝ բանակցություններ սկսել առանց նախապայմանների, կարծես չէր մերժվում: Պետք է նկատել, որ բանակցությունների առաջին փուլում հայկական կողմը շատ կարևոր մի քայլ կատարեց՝ արծարծելով Արցախի խնդիրը: Այն, որ այսօր Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Արցախի հարցը որպես նախապայման բացակայում է և հանված է Թուրքիայի նախաձեռնությամբ, մենք մեծ չափով պարտական ենք դիվանագիտական հենց այս հնարքին: Այս օրերին Ադրբեջանում տիրող մտահոգությունը, թե Թուրքիան հանուն Հայաստանի հետ հավանական հարաբերությունների լքում է իրենց, նույնպես պայմանավորված է Արցախի հարցի բացակայությամբ:

Մյուս երկու նախապայմանները, սակայն, շարունակում են մնալ, և մեզ մտահոգվելու տեղիք են տալիս: Դրանք, ինչպես ասացի, ցեղասպանության հարցն է և Հայաստանի կողմից իր հնարավոր պահանջներից կանխավ հրաժարվելը:

Եթե հավատանք մամուլի և մյուս ԶԼՄ-ների հրապարակումներին, իսկ դրանք մեծ մասամբ թուրքական կողմի հրապարակումներ են, ապա կարելի է եզրակացնել, որ կարծես, այնուամենայնիվ, գոյություն ունի նախնական մի փաստաթուղթ: Այդ մասին է վկայում նաև Գյուլի վերջերս արած այն հայտարարությունը, թե տեխնիկական բոլոր հարցերը լուծված են և վերջնական ստորագրության համար մնում է ընդամենը քաղաքական կամք դրսևորել: Թե ինչպիսին կարող է լինել Թուրքիայի իշխանությունների քաղաքական կամքը, մենք արդեն տեսել ենք ընդամենը մի քանի տարի առաջ, երբ բանակի ճնշման տակ չեղյալ հայտարարվեց Գյուլ-Օսկանյան բանավոր համաձայնությունը: Այդ նույն բանակի համաձայնությամբ էլ, հավանաբար, տեղի ունեցավ Գյուլի այցը Հայաստան, և ենթադրում ենք, որ այս հարցում ևս սպասում են բանակի համաձայնությանը: Այսօր իսկ պարզ է, որ Թուրքիան փորձում է մինչև ապրիլի 24-ը չստորագրել որևէ պայմանագիր և այդ գործողությունն ամեն գնով կապել ԱՄՆ-ի նախագահի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին: Պատահական չէ նաև այն քայլը, որ Թուրքիան, չսպասելով ամերիկյան կողմի դիմումին, Օբամային առաջարկեց ամերիկյան զորքերը Իրաքից դուրս բերել իր տարածքով:

Եթե Օբաման, այնուամենայնիվ, գալիք ապրիլի 24-ին չարտասանի ցեղասպանություն բառը, Թուրքիայի ջանքերը՝ կասեցնել ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, շարունակվելու են: Այս հարցում Ամերիկայում նրա դաշնակից հրեական որոշ շրջանակներ բավականին լուրջ ճնշում են գործադրում՝ Թուրքիային համոզելու, որ ցեղասպանության ճանաչման գործընթացի առաջն առնելու լավագույն միջոցը Հայաստանի հետ բնականոն հարաբերությունների հաստատումն է: Այլապես, եթե Օբաման ոչ այս տարի, ապա մյուս տարի կարող է ցեղասպանություն որակել 1915 թվականի դեպքերը և մինչև օրս ներդրած ջանքերն իզուր կանցնեն: Մեր կարծիքով՝ հենց դա է փորձում իրականացնել թուրքական կողմը, և եթե իրենց համար բարեհաջող անցնի այս ապրիլի 24-ը, ապա մինչև հաջորդ ապրիլ կստորագրեն համաձայնագիր և այդ քայլով հերթական խոչընդոտը կփորձեն ստեղծել ցեղասպանության ճանաչման ճանապարհին: Իսկ եթե այդ համաձայնագրի մեջ նաև ներառվի ցեղասպանության փաստը կասկածի տակ առնող որևէ դրույթ, ապա դա Թուրքիայի համար իսկական փրկօղակ կհանդիսանա՝ երրորդ երկրներին համոզելու, որ կարիք չկա այլևս միջամտելու, քանի որ իրենք հայերի հետ սկսել են քննարկել խնդիրը:

Հետաքրքիր է, իհարկե, բայց Թուրքիայի իշխանություններին՝ Հայաստանի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու հորդորներ են հնչում նաև ներսում, ինչը միանգամայն նոր երևույթ է: Այս առումով հատկանշական է հատկապես Սերժ Սարգսյանի հրավերից շատ կարճ ժամանակ անց տեղի ունեցած թուրք դիվանագետների աննախադեպ հավաքը, որտեղ առանցքային հարցերից մեկն էլ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման խնդիրն է եղել: Հավաքում հատկապես մեծ հետաքրքրություն է առաջացրել նախկին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպանի հայտնած տեսակետը, թե Հայաստանի նկատմամբ այն մոտեցումները, որ մինչև այժմ ցուցաբերվել են, հեռանկար չունեն, և անհրաժեշտ է որդեգրել միանգամայն այլ քաղաքականություն: Պետք է Հայաստանի հետ ունենալ դիվանագիտական և տնտեսական հարաբերություններ, վերջապես այնքան ներդրումներ կատարել Հայաստանում, որ հնարավոր լինի այդ տնտեսական միջոցները վերածել քաղաքական լծակի և այդպիսով չեզոքացնել Հայաստանից ակնկալվող որևէ վտանգ: Առաջին հայացքից, թվում է, հենց այս խորհրդին էլ փորձում են հետևել Թուրքիայի այսօրվա իշխանությունները, բայց դժվար է ենթադրել, թե քաղաքական կամքը, ինչի մասին ակնարկել է Գյուլը, կա իրենց մեջ և իրենք հաստատ կգնան այդ ուղղությամբ: Եթե նույնիսկ այդ քաղաքական կամքը գտնվի էլ, մեր վերլուծական կենտրոններն ու տնտեսագետները պետք է պատրաստ լինեն դիմագրավելու գործընթացի այդ տեղաշարժը ևս, ինչի համար անհրաժեշտ են լուրջ ուսումնասիրություններ ու տնտեսագիտական վերլուծություններ:

Հարց.– *Պարոն Մանոյան, ցանկալի է իմանալ, թե համաձայնագիրն այն վիճակով, որքանով որ ներկայացվեց, այն նախապայմաններով, որ Դուք ասացիք, ստորագրելու համար Թուրքիայի իշխանությունների կողմից քաղաքական ինչպիսի՞ կամք է պահանջում, որ նրանք դժվարանում են ցուցաբերել: Իմ կարծիքով քաղաքական կամք նման համաձայնագիր ստորագրելու համար անհրաժեշտ է առաջին հերթին մեր իշխանություններին, որովհետև այդտեղ համաձայնագիրը նրանց ամեն ինչ տալիս է, իսկ մեզ համար, ընդհակառակը, լուրջ հետևանքներ կարող է ունենալ: Միակ հաջողությունը, թերևս, մնում է Արցախի հարցի շահարկումը, այդ էլ երևի հետագայում տեխնիկական հնարներով կարելի կլինի կրկին ասպարեզ բերել:*

**Կիրո Մանոյան**.– Ես հատկապես անդրադարձա թուրքական իշխանությունների կողմից քաղաքական կամքի դրսևորման հանգամանքի վրա, քանի որ մեր իշխանություններն իրենց պահվածքով կարծես ասում են, որ այդ կամքն իրենք արդեն դրսևորում են: Այսինքն՝ այն, որ Թուրքիան միակողմանիորեն հայտարարում է, թե ցեղասպանության ճանաչման հետագա գործընթացը կարող է վնասել հայ-թուրքական երկխոսությանը, իսկ Հայաստանի իշխանությունները համեստորեն լռում են, խոսում է միայն մի բանի մասին՝ կամ որևէ քաղաքական կամք չունեն, կամ էլ արդեն իրենց քաղաքական կամքն արտահայտել են: Մյուս կողմից էլ՝ ճիշտ չեմ համարում Արցախի խնդրի հետ կապված նախապայմանի վերացման նշանակությունը նվազեցնելը:

Եթե մեր իշխանությունները, այնուամենայնիվ, համաձայնություն են տվել ստորագրելու նման համաձայնագիր, պետք է ասել, որ նրանք նկատելի նահանջ են արձանագրել թե իրենց նախկին դիրքորոշումներից և թե ազգային անվտանգության հայեցակարգի դրույթներից, բայց, կրկնում եմ, սա դեռևս փաստ չէ, և ըն-

դամենը մեր մտահոգությունն է, ինչի մասին խոսեցինք վերևում:

Հարց.- *Պարոն Մանոյան, հետաքրքիր է իմանալ նաև, թե հայ-թուրքական երկխոսության վերջին զարգացումները որքանով են համարվում հայկական կողմի նախաձեռնություն, մանավանդ, որ դրանց աննախադեպ ակտիվացումը Դուք նույնպես կապեցիք օգոստոսյան պատերազմի հետ: Այդ պատերազմին հաջորդած օրերին բազմաթիվ հայտնի լրատվամիջոցներ իրենց վերլուծություններում, հատկապես թուրք պաշտոնյաների՝ Մոսկվա կատարած անտպասելի այցերից հետո, նշում էին, որ աշխարհաքաղաքական լուրջ գործընթացներ են սկսվել, որոնց մեջ Ռուսաստանը և Թուրքիան փորձում են միմյանց հետ կիսել Սև ծովն ու հստակեցնել այդ ավազանում իրենց ազդեցության գոտիները: Այս տեսանկյունից հարցին մոտենալիս դժվար չէ եզրակացնել, որ հայ-թուրքական երկխոսությունը նույնպես կայանում է նույն համատեքստում և կազմում է ռուս-թուրքական մեծ խաղի մի բաղադրիչն ընդամենը: Եթե հաշվի առնենք նաև, որ Թուրքիայի նախագահին Հայաստան հրավիրելու հայտարարությունը մեր նախագահի կողմից արվեց Մոսկվայում, կարելի է նաև եզրակացնել, որ սա ավելի շատ ռուսական նախաձեռնություն է, քան թուրքական կամ հայկական: Դրանից հետո մենք տեսնում ենք, որ Հայկական հարցի հետապնդումները անհաջողություններ են արձանագրում միջազգային մի շարք կազմակերպություններում, այդ թվում նաև Եվրամիությունում, և հայկական կողմն անընդհատ պարտություններ է կրում: Ստացվում է, որ մինչև Գյուլին հայաստանյան հրավեր ուղարկելը, մինչև օգոստոսյան պատերազմը և դրանից էլ առաջ, շատ ավելի բարենպաստ վիճակում էինք, քան այսօր: Պատասխան, իմ կարծիքով, այն է, որ մենք այն ժամանակ զերծ էինք մնում անհարկի հայտարարություններից ու քայլերից, մենք հստակ դիրքորոշում ունեինք թուրքական նախապայմանների հարցում, և դա մեզ հեռու էր պահում հրապարակավ իրարամերժ, պահի ազդեցությամբ փոխվող դիրքորոշումներ արտահայտելուց: Երբ երկրի նախագահը նախ մի բան է ասում, ապա զանազան առիթներով մի քանի անգամ հերքում ու նորից վերահաստատում է իր ասածը, միջազգային հանրության կողմից դա միանշանակ չի ընդունվում որպես խուսանավում և քարոզչություն, այլ ընկալվում է իբրև քաղաքական կամքի բացակայություն ընդհանրապես:*

*Եթե մենք նույնիսկ ընդունենք, որ սեփական նախաձեռնությամբ Թուրքիայի հետ երկխոսություն սկսող Հայաստանը ինքնուրույն քաղաքականություն է վարում, ապա ստացվում է, որ ստեղծված իրավիճակում, երբ Ռուսաստանի իսկ պարտադրմամբ տարածաշրջանն ու Սև ծովը կիսվում են, Հայաստանն իր ռազմավարական գործընկեր Ռուսաստանին իբրև այլընտրանք տեսնում է Թուրքիային: Այստեղ միանգամայն հակառակ տրամաբանությունը չի՞ գործում արդյոք Ձեր կարծիքով:*

**Կիրո Մանոյան**.– Ճիշտ է, Թուրքիան է մեր հիմնական պատուհանը դեպի արտաքին աշխարհ, բայց ես չեմ կարող կիսել այն կարծիքը, թե անվտանգության առումով այն երբևէ կարող է այլընտրանք լինել Ռուսաստանին: Նույն անվտանգության առումով հենց Ադրբեջանն ու Թուրքիան են մեզ համար ամենամեծ վտանգ ներկայացնող երկրներն այսօր: Եվ հնարավոր էլ չէ պատկերացնել, որ Ադրբեջանի հետ պատերազմի ժամանակ Թուրքիան թույլ կտա մեզ իր տարածքով զենք ստանալ: Բայց, դժբախտաբար, կարծես մեր իշխանությունները նման պատկերացումներ ունեն և հնարավոր են համարում Վրաստանի ճանապարհների արգելափակման դեպքում Թուրքիայի վրայով Հայաստան զենքի տեղափոխումը: Եվ սա այն դեպքում, երբ խիստ կասկածելի է, որ Թուրքիան պատերազմական գործողությունների ժամանակ թույլ կտա կենսական առաջին նշանակության ապրանքների ներկրումը Հայաստան: Սահմանի բացել-փակելը ընդամենը օրերի հարց է: Վաղը մենք կարող ենք նախապայմաններն ընդունելով համաձայնագրեր ստորագրել, դրանով հանձնել մեր հիմնական զենքերը, և մի գեղեցիկ օր, երբ հայ-թուրքական հարաբերություններում կրկին առաջանան ինչ-ինչ դժվարություններ, Թուրքիան կրկին փակի սահմանն ու այդ կերպ փորձի պատժամիջոց կիրառել: Չի բացառվում նաև, որ սահմանի վերափակումը հանկարծ պատահի պատերազմի օրերին:

Հիմա մի երկու խոսք այն մասին, թե որքանով է հայ-թուրքական երկխոսությունը հանդիսանում Ռուսաստան-Թուրքիա մեծ խաղի մի մասնիկը: Ես չեմ կիսում այն կարծիքը, որ մինչև օգոստոսյան պատերազմը հստակ էր, որ Ռուսաստանն ու Թուրքիան ուր որ է սկսելու են իրար մեջ կիսել տարածաշրջանն ու Սև ծովը և Հայաստանն էլ ակամա ներքաշվելու է այդ խաղի մեջ: Ճիշտ է, Ռուսաստանը միշտ էլ նման հակումներ ունեցել է, և Թուրքիան էլ բավականին բարյացակամ է վերաբերվել

Ռուսաստանի այդ հակումներին, բայց մինչև վրաց-օսական պատերազմը, բոլորովին էլ հստակ չէր, թե սկսվում է տարածաշրջանը վերաձևելու բուն գործընթացը: Օգոստոսյան պատերազմից հետո, սակայն, տպավորությունը, զուգե նաև իրողությունն այն է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ներկա փուլը դարձել է արդեն հիշատակված մեծ խաղի մի բաղադրիչը: Սա իրոք մտահոգիչ է այն առումով, որ պատմությունից հայտնի ռուս-թուրքական ցանկացած մերձեցում ի վերջո ջարդվել է մեր գլխին և մենք մշտապես կորուստներ ենք ունեցել: Սա չի նշանակում, թե հիմա մենք պետք է զբաղվենք նրանց հարաբերությունների մեջ սեպ խրելով, մի բան, որ չենք էլ կարող անել, բայց առնվազն պետք է կարողանանք քաղաքական կամք դրսևորել և մեր ռազմավարական գործընկերոջից պահանջել հավատարիմ մնալ ստորագրված փաստաթղթին և չկատարել այնպիսի քայլեր, որոնք կսասանեն մեր պետության հիմքերը:

Հարց.- *Պարոն Մանոյան, մեր արտգործնախարարությունը, բացի առանձին դեպքերից, սովորաբար պատասխանում է թուրք պաշտոնյաների հայտարարություններին, որոնք առնչվում են մեր հարաբերությունների կարգավորման գործընթացին: Սակայն անպատասխան մնացած հայտարարություններից մեկն այն էր, որ ընթացող բանակցությունների մասին բացահայտ հրապարակումներ չանելու խնդրանքը պատկանում է հայկական կողմին: Ի՞նչ ունենք մենք թաքցնելու, որ մի բան էլ թուրքական կողմին ենք խնդրում թաքցնել իրականությունը:*

**Կիրո Մանոյան**.– Ես համամիտ չեմ այն մտքին, որ հայկական կողմը հիմնականում միշտ պատասխանում է թուրք պաշտոնյաների հայտարարություններին: Ընդհակառակը, չի պատասխանում և առավել ևս համարժեք պատասխաններ չի տալիս: Թող զարմանալի չթվա, եթե ասեմ, որ այստեղ հավաքվածներիս մեծ մասը ողջ գործընթացին տեղեկացված է հիմնականում ի հաշիվ թուրքական տեղեկատվության: Մենք, իրոք, զիջում ենք այս առումով և միշտ հետևից ենք քայլում, կարծես սպասելով, որ նրանք մի բան ասեն, իսկ հետո մենք պատասխանենք: Մինչդեռ, կարելի է նաև նախաձեռնություն ցուցաբերել, առանց մտածելու, թե մեզ համար շահեկան այդ հայտարարությունը կպատասի թե կվնասի գործընթացին: Թուրքական կողմը հենց այդպես էլ վարվում է և չի էլ խորշում տեղեկատվության հետ նաև ապատեղեկատվություն տարածել զանազան թերթերի անանուն հեղինակների շուրթերով:

Ինչ վերաբերում է Բաբաջանի հայտարարությանը, թե հայկական կողմն իրենց խնդրել է բանակցային գործընթացի մասին բաց տեղեկատվություն չհաղորդել, ապա դա թուրքական դիվանագիտության ճարտասանական լավագույն նմուշներից է: Բանն այն է, որ հայկական կողմն ուղղակի հասկացրել է, որ կարիք չկա ապատեղեկատվությամբ վնասել երկխոսության գործընթացին, իսկ նա, ահա, դա ներկայացրել է որպես հայկական կողմի խնդրանք՝ ավելորդ ոչինչ չհրապարակել, մինչդեռ թուրքական կողմն ինքը խնամքով թաքցնում է այն, ինչը դուրս է հասարակության սեփականությունը դարձնելու շրջանակներից:

Հարց.– *Պարոն Մանոյան, կարծիք կա, որ Միացյալ Նահանգները, ձգտելով պահել իր ներգրավվածությունը այս տարածաշրջանային գործընթացներում, անկախ այն բանից՝ հայ-թուրքական պայմանագիր կստորագրվի, թե ոչ, հակված է ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը: Այս կերպ մտածողները նաև պնդում են, որ Էրդողանի կառավարությունն այս վերջին շրջանում կարծես փորձեր է անում նախապատրաստել թուրք հանրությանը Թուրքիայի կողմից ևս ցեղասպանության փաստի ճանաչմանը: Ի՞նչ կասեք այս մասին:*

**Կիրո Մանոյան**.– Ձեր հարցն ավելի շատ թուրքագիտության բնագավառի խնդիրների է վերաբերում և, կարծում եմ, լուրջ ուսումնասիրության հարց է: Կարող եմ ասել միայն, որ Էրդողանի կուսակցության համար Թուրքիայում քեմալիզմը ջարդելը քաղաքական նպատակ է: Եթե նույնիսկ Էրդողանի վերջնական նպատակը ցեղասպանության փաստի ճանաչումը չէ, ինչը շատ ավելի մոտ է իրականությանը, ապա, իմ կարծիքով, իր մյուս նպատակին՝ քեմալիզմի ջախջախմանը հասնելու համար, բացառված չէ, որ այս իշխանությունները որդեգրեն երիտթուրքերից ու քեմալիզմի հետևորդներից հնարավորինս տարբեր մոտեցումներ ցեղասպանության խնդիրներին:

Հայ-թուրքական սահմանի բացման հետ կապված տնտեսական և այլ կարգի խնդիրների առաջացման հնարավորությունների շուրջ «կլոր սեղանի» շրջանակում լսված հիմնական զեկուցումն ու ծավալված քննարկումը կներկայացնենք «Դրոշակի» հաջորդ համարում:



# ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐՅԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

**ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ**
*Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի Հանրապետության Պատվո հյուպատոս*

(Սկիզբը՝ «Դրօշակի» No.3-ում)

### ...Եվ դատարանը արդարացրեց

Սողոմոնի համար միևնույն էր, թե ինչ վճիռ կկայացնի Բեռլինի դատարանը: Նա սառնասիրտ էր վերաբերվում կատարվածին, հպարտ էր ու անընկճելի: Մահը չէր սարսափեցնում նրան: Ոճրագործ Թալեաթի սպանությունից անցել էր շուրջ երկուսուկես ամիս: Ծանր պահեր ապրեց Սողոմոնը: Երկուսուկես ամիս շարունակ հարցաքննություններ, պարզաբանումներ: Մայիսին ավարտվել էին բոլոր հարցաքննությունները, իսկ հունիսի 2-ին նշանակված էր դատավարությունը: Սողոմոնը պատմում էր գլխովն անցածը, մտաբերում հայրենի օջախը, սպանված հարազատներին: Դատարան էին հրավիրվել նաև վկաներ Քրիստինե Թերզիբաշյանը, Լևոն Էֆթյանը, Երվանդ Աբելյանը, որպես թարգմանիչներ՝ Վահան Զաքարյանը և Գևորգ Գալուստյանը: Այստեղ էին նաև տիկին Շտելբաումն ու տիկին Դիտմանը, որոնց մոտ ժամանակավոր բնակվում էր նա և որոնց հիշողության մեջ Սողոմոնը բարի հուշ էր թողել: Արդար վճիռ կայացնելու համար ելույթներ ունեցան նաև պաշտպաններ ֆոն Գորդոնն ու Նիմայերը, նախագահող Լեմբերգը: Ամենատպավորիչը, սակայն, գերմանացի արևելագետ և հոգևորական Յոհաննես Լեփսիուսի ելույթն էր: Դահլիճը համակ լսում էր Լեփսիուսին, որը մանրամասնորեն ու բծախնդրությամբ էր ներկայացնում 1915-ի հայոց ցեղասպանությունը: Մեծանուն հայասերը հայոց ցեղասպանության առաջին դատապարտողներից էր: Զարդերի շրջանում նա հրատարակեց «Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն» աշխատությունը, որը եղավ մեծածավալ առաջին գործը եղեռնի սարսափների մասին: Գերմանական գրաքննությունը, սակայն, ջանք ու եռանդ չխնայեց՝ սահմանափակելու այդ գրքի տարածումը: Այնուամենայնիվ, դա չէր ընկճում մեծ հայասերին, ու նա վերոհիշյալ աշխատությունը

հետագայում վերահրատարակեց՝ այս անգամ արդեն լրացված, ուր նորովի էր ներկայացվում համաշխարհային պատմության մեծագույն ոճիրը: Լեփսիուսը անգնահատելի աշխատանք կատարեց պարզելու ճշմարտությունը, իսկ զինադադարից հետո նա ձեռնամուխ եղավ «Գերմանիան և Հայաստանը» մեծահատոր գրքի հրատարակմանը, որի առանցքը կազմող նյութերը Գերմանիայի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերն էին:

Լեփսիուսի ելույթը ցնցել էր ներկաներին և ավելի շատ 1915 թվականի հայոց սարսափազդու եղեռնին անտեղյակ փաստաբաններին ու դատավորին: Հասարակությունը շշուկներով էր արտահայտում իր հուզումը: Նախագահող Լեմբերգը շփոթված դիմեց մյուս վկաներին: Կարծիքները նույնն էին՝ անմեղ ճանաչել Սողոմոն Թեհլիրյանին և ազատ արձակել...

...Դատավարությունից հետո ամեն ինչ պարզ էր ու հասկանալի: Ներկաները առավել քան համոզված էին, որ դատարանն անպայման արդար վճիռ կկայացնի: Այդպես էլ եղավ: Դատավարության ավարտից հետո դատարանի նախագահ Դր. Լեմբերգը երդվյալներին ուղղեց օրենքով սահմանված հարցերը: Երդվյալները, այնուհետև, մեկուսացան և մեկ ժամանոց խորհրդակցությունից հետո կրկին վերադարձան դատարանի դահլիճ: Երդվյալների գլխավորը դատարանին ներկայացրեց հետևյալը. «Հանցավո՞ր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլիրյանը 1921-ի մարտի 15-ին Շառլոտենբուրգում դիտավորյալ կերպով Թալեաթ փաշային սպանելու համար»:

**Օտտո Ռայնիկե, երդվյալների գլխավոր**.- Ո՛չ:

**Նախագահ**.- Ես կստորագրեմ այդ որոշումը և խնդրում եմ քարտուղարին անել նույնը և ի լուր կարդալ որոշումը:

Այնուհետև քարտուղարը կարդում է որոշումը, որը թարգմանվում է ամբաստանյալին:

**Նախագահ**.- Ապա, ուրեմն, ազդարարվում է հետևյալ դատավճիռը. «Ամբաստանյալն ազատ է արձակվում պետության հաշվին: Համաձայն երդվյալների որոշման, ամբաստանյալը հանցավոր չէ իր վրա որպես մեղադրանք ծանրացող պատժելի արարքի համար»:

Հետո հայտարարվում է հետևյալ որոշումը. «Բանտարկության հրամանը ամբաստանյալի նկատմամբ չեղյալ է հայտարարվում...»:

Թեհլիրյանն արդարացվեց, իսկ առաջադեմ մարդկությունը դատապարտեց հանցագործներ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի արյունալի քաղաքականությունը: Նրանք զգում էին, ուր էլ լինեն, ինչպիսի պաշտպանություն էլ վայելեն, ինչ անվան տակ էլ թաքնված մնան, միևնույնն է, անպայման պիտի ստանան իրենց արժանի պատիժը՝ միմիայն հայի բռունցքով:

Այդ ամենի ամենապերճախոս վկան եղավ ժամանակը: Թալեաթի սպանությունից քիչ ուշ՝ 1921-ի դեկտեմբերի 6-ին Հռոմում սպանվեց Սայիդ Հալիմ փաշան, 1922-ի ապրիլի 17-ին Բեռլինում միաժամանակ սպանվեցին Բեհաէդդին Շաքիրը և Ջեմալ Ազմին: Նույն տարում, հուլիսի 25-ին Թիֆլիսում սպանվեց Ջեմալ փաշան: Այդ նույն ճակատագիրն էր վիճակված Թուրքիայի ռազմական նախարար Էնվերին ու իթթիհատական կուսակցության նախկին պարագլուխներից Նազըմին: Առաջինը սպանվեց 1922-ի օգոստոսի 4-ին Միջին Ասիայում՝ Կարմիր բանակի հայ կամավորների ձեռքով, իսկ երկրորդը 1926-ին կախաղան հանվեց Անկարայում՝ քրդական շարժմանը օժանդակելու և պետական հեղաշրջման փորձ կատարելու համար:


Entlassungs-Schein.
Der Student Salomon Teilirian
war vom 19.3.21 bis 3.6.21
hier in Haft.
Berlin, den 3. 6. 1921
Untersuchungsgefängnis
I. A.

Սողոմոն Թեհլիրյանին արդար ճանաչելու Բեռլինի դատարանի վճիռը

## Նշխարներ Երզնկայից

Շուրջ երկու տասնամյակ առաջ էր, երբ այցելեցի սերբական Վալևո քաղաքը՝ հանդիպելու Ռոստոմ Տեր-Ղազարյանին: Սերբիա յուրաքանչյուր այցելության ժամանակ Ռոստոմը ցանկություն էր հայտնում, որ գոնե մեկ օրով հյուրընկալվեմ իր հարկի տակ: Նրա մայրը՝ Արմենուհին, Սողոմոն Թեհլիրյանի ավագ եղբոր՝ Միսաքի դուստրն էր: Որքա՜ն էր ափսոսում Ռոստոմը, որ ավելի վաղ հանդիպելու առիթներ չեղան, երբ դեռ ողջ էր մայրը: Պատկերացնում եմ, թե որքա՜ն չասված ու չգրված բաների մասին պիտի պատմեր ինձ Արմենուհի Տեր-Ղազարյանը: Թեհլիրյան գերդաստանի անհայտ ու հետաքրքիր ի՜նչ էջեր պիտի բացեր նա իմ առջև: Ավա՜ղ, շուտ մեռավ նա ու շատ հուշեր տարավ իր հետ:

Ռոստոմը մտաբերում է Վալևոյի հայերին, նրա պատմությունները անցած-գնացած օրերի, սերբահայ գաղթօջախի երևելի հայերի մասին են: Նա բերում է տանը պահված լուսանկարներ, փաստաթղթեր, հայերեն հին գրքեր: Այդ ամենի մեջ, սակայն, առանձնանում է մի լուսանկար, ուր պատկերված են Թեհլիրյանները: Մեջտեղում Խաչատուր Թեհլիրյանն է՝ իր հարազատների ու ազգականների հետ: Նկարի հակառակ կողմին մակագրություն կա՝ «Վալևո, 1926 թ.»: Լուսանկարում պատկերված մարդկանցից համարյա ոչ ոք այսօր չկա... իսկ լուսանկարն ապրում է: Թեհլիրյանի հարազատները ժամանակ առ ժամանակ ալբոմից հանում են մասունք դարձած լուսանկարը, նայում ու մտորում 1921-ի բեռլինյան հայտնի իրադարձության մասին, որը Սողոմոնի ապրած կյանքի, նրա սխրագործության բարձունքն էր:

Իմ խնդրանքով Ռոստոմը բերում է նաև ուրիշ լուսանկարներ, որոնցից ամեն մեկն իր կենսագրությունն ունի:

- Եթե հրատարակելու համար են, մի քանիսը կարող եմ տալ,- ասում է նա,- բայց խնդրում եմ զգույշ եղեք, առանց այն էլ մաշվել ու խունացել են տարիների ընթացքում:

...Մաշված ու գունատ լուսանկարներ, որոնցում մի ողջ գերդաստանի պատմությունն է: Արյունով գրված պատմությունը: Հետո ցույց է տալիս Թեհլիրյանների տոհմածառը, որ կազմել է որդին: Տոհմածառի շուրջ հարյուր անդամներից զգալի մասը թողնելով հարազատ բնակավայրերը, խոշտանգվեց գաղթի ճամփաներին, մնացածը սփռվեց աշխարհում: Կեսը՝ Սերբիայում, մյուս մասը՝ Ամերիկայում և այլուր:

...Սերբական հողը անցյալ դարասկզբին հարազատի պես ընդունեց եղեռնից փրկված Խաչատուր Թեհլիրյանին ու նրա ազգականներին: Այդ հողը սնեց նրանց ու այդ հողում էլ այսօր հանգչում են նրանց աճյունները:

Ռոստոմի հետ գնում ենք քաղաքային գերեզմանոց: Բազմաթիվ ննջեցյալների մեջ հազիվ մի քանի հայի անուն լինի: Ահա Թեհլիրյանների շիրմաքարը՝ հասարակ ու անպաճույճ: Մի պտղունց Արևմտյան Հայաստան է խառնված սերբական հողին, մի ափաչափ Երզնկա ու Բագառիճ: Ռոստոմը մտաբերում է Սողոմոնին ու նրա հորը՝ Խաչատուրին: Որքա՜ն էր երազում Սողոմոնը գոնե կյանքի վերջին տարիներին մեկ անգամ ևս տեսնել հայրենի Բագառիճը, բայց ճակատագիրը նրան տարավ ավելի հեռու՝ Ամերիկա, ուր նա ապրեց մինչև իր կյանքի վերջը՝ 1960-ի մայիսը, այդպես էլ չտեսավ սիրելի ծննդավայրը՝ պաշտելի ու հայրենի Երզնկան:

## Թեհլիրյանների բելգրադյան մասունքները

Որքան էլ մեզ թվա ու հասկանալի են Սողոմոն Թեհլիրյանի սխրանքի խորհուրդն ու պայծառ կերպարը, մինևնույն է, նրա ապրած կյանքը լի է առեղծվածներով, անհայտ ու խորհրդավոր բազում էջերով: Երևի քչերը գիտեն, որ 1921-ի մարտի 15-ին Թալեաթին ահաբեկելուց և ապա՝ Բեռլինի դատարանի կողմից արդար ճանաչվելուց հետո նա փոխադրվել և բնակություն էր հաստատել Սերբիայում մինչև 1950 թվականը: 1915 թվականի հայոց Մեծ եղեռնից դեռ շատ առաջ, 1884-ին, Սողոմոնի հայրը՝ Խաչատուրը, հայրենի Բագառիճ գյուղից փոխադրվել էր սերբական Վալևո քաղաքը, խանութ բացել և զբաղվել վաճառականությամբ: Սերբերի բարեհաճ վերաբերմունքը շոյել էր Խաչատուրին ու նա մտադրվել էր որոշ ժամանակ բնակվել Սերբիայում: Ի՞նչ իմանար, սակայն, որ 1915 թվական պիտի լիներ, որ էլ երբեք չէր վերադառնալու հայրենի Բագառիճ ու իր վերջին հանգրվանը պիտի գտներ սերբական հողում:

Սերբիայում ապրելու ու ստեղծագործելու յոթ տարիներին քանիցս առիթ եմ ունեցել այցելելու Վալևո, տեսել եմ Թեհլիրյանների գերեզմանը: Այցելել եմ նաև Սողոմոնի բելգրադաբնակ տարեց ու ջահել ազգականներին: Սողոմոնի ավագ որդու՝ Շահենի հետ ծանոթացա 1988-ին: Դեռ այն ժամանակ է նա ինձ հետաքրքիր ու արժեքավոր դրվագներ պատմել հոր մասին: Այդ զրույցները ես խնամքով գրի եմ առել, մոտ երկու տասնամյակ սրբությամբ պահել՝ հուսալով, որ դրանք պիտի համալրվեն նոր պատմություններով ու վավերագրերով, որոնք կամրող-



Խաչատուր Թեհլիրյանը, Սողոմոն Թեհլիրյանը, Շահենը (Սողոմոնի որդին),Անահիտ Թաքիկյան-Թեհլիրյան: Վալևո, 1926 թ.

ջացնեն որդու` այսօր արդեն 84-ամյա Շահենի հուշերն ու մտորումները հոր մասին: 2006-ի նոյեմբերին Սերբիայում գտնվելու օրերին մի քանի անգամ եղա Շահենի հյուրընկալ հարկի տակ: Այդ այցելություններ շատ բանով հարստացրին Սողոմոնի մասին տարիների ընթացքում հավաքածս նյութը, հնարավորություն տվին նրա նկարագրի նոր շերտեր ու երանգներ բացահայտել:

Շահենի հետ խոսում եմ հիմնականում սերբերեն, ժամանակ առ ժամանակ մայրենիով ենք հաղորդակցվում: Հայոց բառուբանը այսօր էլ թևածում է նրա հոգում, հնչում է ունկերում` վառ պահելով մայր երկրի կերպարը հայրենիքից հեռու, Սերբիայում, ուր ծնվել ու ապրում է մինչ օրս:

Շահենը հնամաշ մի թղթապանակ է բերում, որում տարբեր ձեռագրեր կան, արժեքավոր վավերագրեր, մորը գրված նամակի բնօրինակը, սերբերեն փաստաթղթեր: Նաև` լուսանկարներ: Դեղնած ու սուրբ մասունք դարձած լուսանկարներ... Խնդրում եմ, որ պատմի հոր` Սողոմոնի կյանքի բելգրադյան շրջանի մասին:

Շահենի հուշերից.

«Թալեաթին ահաբեկելուց հետո հայրս մոտ երեք տասնամյակ ապրել է Սերբիայում, մի քանի տարի Վալևոյում, ապա փոխադրվել է Բելգրադ, որտեղ 1925 թվականին ծնվել եմ ես: Տարեց սերբահայերը, ովքեր վաղուց արդեն չկան, լավ էին ճանաչում հորս, մտերիմ էին նրա հետ, հաճախ էին լինում մեր տանը: Հիշում եմ բելգրադաբնակ Վահան Մինախորյանին: 1940-ականներին նա հաճախ էր լինում մեր տանը` հորս մասին գիրք գրելու նպատակով: Հայրս նրան բծախնդրորեն նկարագրում էր եղեռնի սարսափները: Ես ականջալուր էի լինում այդ սահմռկեցուցիչ պատմություններին ու չէի կարող անտարբեր լինել: Բեռլինյան հայտնի իրադարձությունների մասին հայրս գերադասում էր քիչ խոսել: Երբեք չէր զբաղվում ինքնամեծարմամբ, չէր պատկերացնում իրեն հերոսի պատվանդանին: Հորս փոխարեն նրա հուշերը գրի էր առնում մեր ընտանիքի բարեկամ Վահան Մինախորյանը` գրագետ ու գրքասեր մի անձնավորություն, որ 1930-40-ական թվականներին Բելգրադի «Զեմգոր» գրադարանում որպես գրադարանավար էր աշխատում: Հորս հետ շատ մտերիմ էր: Հայրս նրան այնպիսի մանրամասնություններ էր պատմում, որ Մինախորյանը կարող էր երկհատոր աշխատություն հրատարակել: Այսօրվա պես հիշում եմ, ամեն գրառումից հետո գալիս էր մեր տուն, միասին խմբագրում ու ձևակերպում էին... Եղեռնի սարսափներին ու բեռլինյան դատավարությանը վերաբերող գրառումները նա հրատարակեց «Վերհիշումներ» առանձին գրքով, Կահիրեում, 1956 թվականին: Մինախորյանն անձամբ է պատմել հորս, ես դա լավ եմ հիշում, որ 1915-ին շատերի հետ իրեն ևս մահվան դաժան դատաստան էր սպասում, սակայն կյանքը փրկելու նպատակով նա նետվել էր կամուրջից: Վնասելով գլուխն ու ոտքը և չկարողանալով ինքնակառավարվել, դարձել էր հաշմանդամ:

Վահան Մինախորյանի գրառումներին առնչվող մի կարևոր բան ևս եմ ուզում հիշել: 1948-50-ականներին, «Վերհիշումներ» գրքի հրատարակումից շատ առաջ, հայրս արտագրում էր Վահանի արած գրառումները` այդ ամենը ձեռագիր վիճակում ունենալու համար: 1950 թվականին, Հարավսլավիայում կոմունիստական վարչակարգի տարիներին, մեր ընտանիքը մտադիր էր փոխադրվել այլ երկիր: Ստացանք ելքի վիզաներ և մեկնեցինք Մարոկկո, որտեղ ծնվեց դուստրս` Անիցան: Մեկնելուց առաջ, սակայն, հայրս կարծում էր, որ Մինախորյանի գրառումների իր արտագրած տարբերակը արտասահման տանելիս մաքսատանը կարող է կասկած հարուցել և խնդիրներ առաջացնել: Այդ պատճառով փաթեթավորված ձեռագիրը նա թողեց աներոջս մոտ` հուսալով, որ այդպես

ավելի ապահով կլինի ու ավելի բարենպաստ ժամանակներ կգան: Այդ տարիներին գողության դեպքեր հաճախ էին լինում: Ո՞վ իմանա, գուցե արժեքավոր այդ ձեռագիրն էլ գողության զոհ դարձավ: Կրտսեր եղբայրս՝ Զավենը, այդպես էլ չվերադարձավ Սերբիա: 1957-ին հորս հետ նա մեկնեց Սան-Ֆրանցիսկո, իսկ ես կնոջս՝ Ելիցայի ու դստերս՝ Անիցայի հետ վերադարձա Բելգրադ»:

Շահենը պատմում է Թեհլիրյան գերդաստանի երևելի դեմքերի մասին, ավելացնում, որ իր ազգականներից Վազգեն Թեհլիրյանը 1980-ականներին այցելել է Բագառիճ, շրջել հարազատ վայրերում՝ փորձելով գտնել հայրական օջախը: Հիշում է պապին՝ Խաչատուրին, որի գերեզմանին Երզնկայի Բագառիճ գյուղից՝ Վազգեն Թեհլիրյանի բերած մի բուռ հողն է շաղախված…

Դարձյալ մտաբերում է հորը՝ Սողոմոնին, որ որդիների մեջ հայրենասիրության սերմեր է սփռել ու պատգամել օտարության մեջ վառ պահել Հայաստանի կերպարը, քանի դեռ ցեղասպան թուրքը բանտված



Սողոմոն Թեհլիրյանի որդիները՝ Շահենը և Զավենը հոր հուշարձանի մոտ: Ֆրեզնո, 1988 թ.

է պահում մեր սրբությունները, քանի դեռ չի ամբողջացել հայի պատմական հայրենիքը:

Շահենի հուշերից.

«Հորս պատմածներից մի դրվագ ևս մեխվել է հիշողությանս մեջ: Դա անհնար է մոռանալ: Երկրորդ աշխարհամարտից առաջ, ավելի ստույգ՝ 1937-ին, Թուրքիայի անվտանգության մարմինները դիմելով Հարավսլավիայի իշխանություններին, ասել են, թե Բելգրադում է ապրում Թալեաթի ահաբեկիչ Սողոմոն Թեհլիրյանը: Հայրս, սակայն, այլ ազգանունով է ապրել Բելգրադում: Հարավսլավական ոստիկանությունը, ի պատասխան Թուրքիայի պահանջի, տեղեկացրել է, որ երկրում Թեհլիրյան ազգանունով քաղաքացի չի ապրում:

Հայրս լավ որսորդ էր ու հաճախ էր սիրում որսի գնալ: Որսորդմիության կազմում ամենատարբեր մարդիկ կային: Դրանց թվում էր նաև Բելգրադի ոստիկանապետը, որը լավ հարաբերություններ ուներ հորս հետ ու հարգանքով էր վերաբերվում նրան: Մի օր հայրս կանչ է ստանում ոստիկանապետից: Մինչ նրա մոտ գնալը, Սողոմոնը տեղյակ էր, որ Թուրքիայի անվտանգության մարմինները Թեհլիրյան ազգանունով քաղաքացու են փնտրում: Հանդիպման ժամանակ ոստիկանապետը ներկայացնելով իրավիճակը, հարցնում է, թե ճանաչո՞ւմ է արդյոք հայրս այդպիսի մարդու: Հայրս համարձակ անձնավորություն էր, թաքցնելու և, առավել ևս, կորցնելու ոչինչ չուներ: Պատասխանում է, որ Թեհլիրյանն ինքն է ու պատմում ոստիկանապետին ամբողջ ճշմարտությունը Հայոց եղեռնի մասին: Շփոթահար ոստիկանապետը ուշի-ուշով լսում է Սողոմոնին, ապա սթափվելով՝ բարեկամաբար հորդորում նրան զգուշանալ և որքան հնարավոր է հեռու մնալ հանրության աչքից, գոնե ժամանակավորապես, քանի դեռ խառնիխուռն ու վտանգավոր օրեր են:

Այդ տարիներին Սերբիայում ապրող հայազգի բոլոր քաղաքացիները հսկողության տակ էին, քանի որ նրանցից շատերը Սողոմոնի հասակակիցներն էին ու լավ էին ճանաչում նրան: Սերբ ոստիկանապետը, անշուշտ, խորությամբ էր ընկալել հորս պատմածները, որոնք հիշեցրել էին նրան 500-ամյա օսմանյան լուծ տեսած սերբ ժողովրդի արյունոտ ճակատագիրը: Այս ամենը իրողություն է, որի մասին քչերը գիտեն»:

Անցյալի անմոռաց հուշեր, որոնք թանկ են ոչ միայն Թեհլիրյան գերդաստանի, այլև ամբողջ հայության համար, քանի որ այդ ամենը մի գերդաստանի պատմությունը լինելուց զատ, պատկանում է մի ամբողջ ժողովրդի, որի երազապաշտ ոգին հույ-



Երզնկա

սով ու հավատով սպասում է նախնյաց երկրի կորուսյալ հատվածները միավորված տեսնելուն:

## Հրաժեշտ Թեհլիրյանի որդուն

...Շահենի հետ երկար զրուցում էինք հոր մասին: Նորից ու նորից նայում էինք ընտանեկան լուսանկարների ալբոմը, լքված ու ամայացած հայրենիքի պատկերները...

Բաղեշ, Երզնկա, Բագառիճ...

Սողոմոնը ավերակ տեսավ հայրենի եզերքը, կորցրեց հարազատներին, երկար դեգերեց աշխարհով, բայց ապրեց հպարտ ու արժանապատիվ: Ինքը՝ օտարության մեջ, հոգին հարազատ երկրի ու ժողովրդի հետ: Իր թափառական կյանքի վերջալույսը նա դիմավորեց հայրենի Երզնկայից ու Բագառիճից հեռու, Սան Ֆրանցիսկոյում, 1960-ի մայիսի 23-ին: Կինն ու որդին երազում էին, որ Սողոմոնի աճյունը հանգչի իրենց աչքի առջև՝ Սան Ֆրանցիսկոյում, բայց ընդառաջելով ամերիկահայության խնդրանքին, նրանք համաձայնեցին աճյունը տեղափոխել ու հողին հանձնել հայաշատ Ֆրեզնոյի այն նույն գերեզմանոցում, ուր ամփոփված է եղել զորավար Անդրանիկը: Այսպես է ժողովուրդը սրբացրել իր որդիների հիշատակը:

- Իմ հիշողության մեջ հայրս մնացել է որպես համեստ անձնավորություն,- հիշում է Շահենը:- Դա նրան բնութագրող հիմնական հատկանիշն էր: 1921-ի բեռլինյան իրադարձությունների մասին ջանում էր չխոսել, իսկ երբ նրան հարցնում էին, պատասխանում էր, որ մի օր գրի է առնելու իր հուշերը՝ որպես պատմական կարևոր իրադարձություն:

Սողոմոն Թեհլիրյանի կենսագրությունը հայոց նորագույն պատմության փառավոր էջերից է: Որքան շատ ես խորանում Թեհլիրյանի կենսագրության մեջ, այնքան ավելի լուսաշող ու սրբացած է պատկերվում նրա կերպարը: Սողոմոնը հավատարիմ մնաց իր երդմանը, մի թուրք ճիվաղի մահով փրկեց հարազատ ժողովրդի պատիվը՝ մեզանում վառ պահելով արդար վրեժի զգացումը, մեր հայրենի ակունքներին վերադառնալու անմեռ երազը:

**Հ. Գ.-** 1919 թ. աշնանը Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը թուրք դահիճներին ահաբեկելու գաղտնի և պատմական որոշում է կայացնում: Այդ որոշման մասին տեղեկություններ են պահպանվել ժողովին մասնակից պատգամավորների հուշագրություններում: ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի կողմից հավանության արժանացած վրիժառուական այդ գործողությունն ստացավ «Նեմեսիս» ծածկանունը՝ վրեժխնդրության հին հունական աստվածուհու անունով: Ընդհանուր ժողովի գաղտնի որոշումից հետո սկսվեց Հայոց մեծ եղեռնի կազմակերպիչների նկատմամբ ահաբեկչական գործողությունների ծրագրի հստակ ու մանրակրկիտ նախապատրաստումը: Այդ ամենի կենսագործման անմիջական պատասխանատվությունը և վերահսկումը դրվեց ՀՅԴ ամերիկյան մարմնի ներկայացուցիչներ Արմեն Գարոյի և Շահան Նաթալիի վրա: Հատուկ մարմնի մեջ ներգրավվեցին խիզախ հայորդիներ, որոնց թվում էին Սողոմոն Թեհլիրյանը, Արշավիր Շիրակյանը, Արամ Երկանյանը, Միսաք Թորլաքյանը և ուրիշներ: «Նեմեսիս» գործողությունը ղեկավարող կենտրոններն էին Բոստոնում հրատարակվող «Դրօշակ» և Պոլսում լույս տեսնող «Ճակատամարտ» թերթերի խմբագրությունները: Ցեղասպանությունը կազմակերպած և իրականացրած գլխավոր թուրք 650 հանցագործներից առանձնացվել էր 41-ը, որոնց հանդեպ պիտի ի կատար ածվեր մահապատիժ: «Նեմեսիս» գործողության ընթացքում հայ վրիժառուների թիրախ պիտի դառնային նաև մուսավաթական Ադրբեջանի բարձրաստիճան այն անձինք, ովքեր իրականացրել էին Բաքվի, Շուշիի, Շամախիի հայության կոտորածները: Ու՝ դարձան...

Այստեղ տեղին է հիշել Չերչիլի խոսքերը. «Թալեաթը պիտի գնդակահարվեր Բեռլինում՝ հայի ձեռքով, և դա հիմնավորված վրեժխնդրություն էր»:

«Նեմեսիս»-ի իրագործման գաղափարը մեկ անգամ ևս ապացուցում է, որ ոճրագործության անպատժելիությունը ժամկետ չունի և թուրքը չի կարող անպատիժ մնալ ու հանգիստ ապրել ուրիշ ժողովրդի պատմական հայրենիքում:

(Թեհլիրյանի որդու արխիվներում սուրբ մի մասունք է պահվում: Դա Սողոմոնի նամակն է՝ ուղղված մորը: Շահենն ինձ սիրով տրամադրեց այդ նամակը, որը ներկայացնում եմ «Դրօշակի» ընթեցողներին:- Բ.Ս.)

### ***ՄԱՅՐԻԿԻՍ***

*Անհուն աղջամուղջին մէջ յիշատակդ իսկ թառամելու, առ յաւէտ կորսուելու գաղափարէն զարհուրած՝ փնտռեցի քեզ, մա՛յր իմ...*

*Թափառեցայ երկրէ երկիր, անապատէ անապատ: Անցայ մեր փարաքախտ ու աւերակոյտի վերածուած հայրենիքի քաղաքներն ու գիւղերը, սարերն ու ձորերը...*

*Ձուր եղան իմ բոլոր որոնումները... Ամէն կողմ ամայութեան զարհուրելի համայնապատկերը կը ներկայանար իմ աչքերուն: Չկար այլեւս այն կեանքը, եռ ու զեռը, դաշտերու հմայիչ երեւոյթը, առուակներուն կարկաչիւնը, թռչուններուն ուրախ զուարթ ճռուողիւնը...*

*Բոլո՛րը, բոլո՛րը չքացեր էին արիւնոտ բորենիին գազանային բնազդին բաւարարութիւն տրուած ըլլալու հետեւանքով:*

*Բուերու թագաւորութիւնն էր տիրապետողը մեր համայն հայրենիքին վրայ...*

*Ամայութի՜ւն, ամայութի՜ւն...*

*Եփրատը անհանգիստ ու գժտուած էր ձեր խոշտանգուած դիակներէն իր անկիզբ ժամանակներու անդորրն ու միապաղաղ ընթացքը խանգարուած ըլլալուն... Բողոքի ու ըմբոստութեան խուլ մռնչիւնները միայն կը լսուէին իր կոհակներէն: Ան եւս կ'ողբար իր անցեալը:*

*Վճիտ ու յստակ ջուրերը ներկուած էին հայ մայրերու, երեխաներու, երիտասարդներու եւ ծերերու անմեղ արիւնով... Իր հոգին եւս վրդովուած էր հայ ցեղի ահռելի ողբերգութեան կենդանի վկան ու ականատեսը ըլլալուն բերումով...*

*Հեռաւոր եւ անծանօթ անապատները անողոք ու լուռ էին: Կարծես յագեցած լինէին իրենց հրկիզեալ աւազներուն վրայ գրուած ոսկերոտիքէն...*

*Դառնօրէն ողբացի ի տես մարդկային պատմութեան մէջ տեղի ունեցող արհաւիրքներու այս ամենազարհուրելիէն: Տառապանումներ ունեցայ մինչեւ յուսահատութեան անփառունակ ոլորտները տանող, բայց կսկիծը, ողբերգութեան ահաւոր տեսարանները ցնցեցին իմ հոգին, ուժ ու կորով ներշնչեցին ինծի՝ ապրելու, կեանքը շարունակելու մարմաջը պարպաղրելով: Թերեւս անոր համար, որ առիթը ունենամ քեզի հանդէպ, մայր իմ, եւ քեզ հետ բիւրաւոր հայ մայրերու, որոնք խաչուեցան հայ գողգոթային վրայ, իմ՝ հայ զաւակի՝ պարտական պարտականութիւն մը կատարելու... որեւէ ձեւով հայ մայրերու և հայ ժողովրդին թափած արյունէն գոյացող անթիւ գետակներու փխուր յիշատակը յաւերժացնելով...*

*Դուն, մայր իմ, որ կեանք տուիր ինծի, դուն որ վերջին պահուն արտասուաթոր աչքերով համբուրեցիր զիս՝ դառն զգացումով մը լցուած, թէ այլեւս պիտի չտեսնուէինք. իրաւունք ունէիր: Ճիշտ էր նոյնպէս քու վերջին հառաչանքը՝ «հազիւ մեծցուցի, թեւ առիր ու կը թռիս, հեռանաս ինձմէ»: Այո՛, հեռացայ: Այլեւս քեզ յաւիտեանս չտեսնելու պայմանով, բայց քու տուած կաթը, քու ունեցած մայրական անսահման գուրգուրանքը այնպիսի խոր արմատներ ձգած էին իմ հոգիի ալքերուն մէջ, որ մոռանալ այդ բոլորը, անտարբեր մնալ, մանաւանդ քու եղերական վախճանէն յետոյ, կարելի չէր...*

*Այսօր, խորհրդապաշտ հաւատացեալի մը նման, ուզեցի «Անծանօթ մօր անյայտ գերեզման» մը կառուցել իմ հոգիի մէջ ու երկիւղածօրէն երկրպագել այդ կոթողին առջեւ, որպէս հնամենի բագինի մը... Ուզեցի, իմ հեթանոս աղօթքի խորհուրդները, միացրած խունկի ու կնդրուկի բուրումնաւէտ ծուխին, ցրուել ու հասցնել անհունի առեղծուածային բարձունքները, որպէս իմ նուիրումիս պաշտամունքը քոյ անմոռանալի յիշատակին, ինչպէս նաեւ հազար-հազար ողջակիզուածներուն, որոնք նահատակուեցան մեր ցեղի ազատագրութեան պայքարին ի հաշիւ ու անէացան առ յաւէտ՝ առանց հողակոյտի մը, շիրիմի մը...*

*Յարգանք [հայ նահատակներուն]*

*ՍՈՂՈՄՈՆ*



*Հոդվածի հեղինակը, Տոլգա Էրենը, 33-34 տարեկան թուրք մտավորական է, որ ծնվել է զինվորականի ընտանիքում: Պապը, ինչպես նաև հայրը եղել են թուրքական բանակի սպաներ: Ինքը կրթվել ու հասակ է առել բանակային, ազգային միջավայրում: Իր երիտասարդությանը Աթաթյուրքի նկարը որպես սրբություն գրպանում պահող Տոլգա Էրենը ժամանակի ընթացքում նկատել է, որ մի շարք բաներ այնպես չեն, ինչպես որ իրեն սովորեցրել են: Եվ Տոլգան սկսում է ինքնուրույն հետաքննել փաստերը: Ընթացքում կարդում է նաև բոլոր երեք մեծ կրոնների սուրբ գրքերը: Հետաքրքրվում է հայ և քուրդ ժողովուրդների պատմություններով, ինչի արդյունքում դառնում է թուրքական միակողմանի պետական պատմագրության մոլի հակառակորդ: Այսօր նրա հոդվածներին կարելի է հանդիպել քրդական մի համացանցային էջում (Թուրքիայի պայմանների համար ծայր աստիճան խիզախ քայլ): Սույն գրությունը, որը ցնցող ազդեցություն ունեցավ Թուրքիայում, վերցրել ենք այդ համացանցային էջից, որը պարզապես «չէինք կարող» չթարգմանել հայերենի:*

**Տիրան Լոքմագյոզյան**

# Անատոլիայում մի ուրվական է պտտվում

***Բոլոր նրանց ովքեր հարց են տալիս, թե «ինչո՞ւ ենք մենք ներողություն խնդրում». Բավական չէ որ ներողություն խնդրեք. պետք է ծնկաչոք լացեք***

Մենք դեռ փոքր էինք, երբ հայրս ընտանեկան հավաքույթներին բոլորիս հավաքում էր իր շուրջը և պատմում: Ուրվականների պատմություն էր դա: Հայրս որպես սպա առաջին անգամ նշանակվել էր Յոզղաթի Բողազլյան գավառակ: Պատմում էր, որ ինքը ծառայում էր կառավարական տանը և գիշերներն էլ մեն-մենակ հերթապահում էր այս հին ու տխուր շենքում: Հենց առաջին օրերից ականջին զանազան պատմություններ և ասեկոսեներ էին հասել: Սկզբից կասկած առաջացավ, թե զինվորները այս ամենը իրեն վախեցնելու նպատակով են պատմում: Իբր թե իրենից առաջ այստեղ ծառայող սպան կորցրել էր իր մտային հավասարակշռությունը: Հայրս հետևյալ կերպ էր պատմում իր ապրումները. բոլորին հայտնի էր, որ այստեղ, 1915 թվականին, հայերի մեծ կոտորած էր իրականացվել: Կառավարական շենքի նկուղն ամբողջությամբ հողով էր լցված և, ըստ պատմությունների, սպանված հայերը իբր թե այստեղ էին թաղված: Այս շենքում տարօրինակ բաներ էին կատարվում: Օրինակ, մի սենյակում, որտեղ սեղանն ու աթոռները գիշերը կարգավորված էին թողնում, առավոտյան գտնում էին ցաք ու ցրիվ վիճակում: Կամ էլ 10 զինվորի միջոցով դժվարությամբ բացվող ու փակվող շենքի երկաթե դուռը գիշերվա ընթացքում մեծ աղմուկով ինքնուրույն բացվում ու փակվում էր: Հայրս, երբ մի գիշեր իր սենյակում մենակ նստած է լինում, լսում է, թե ինչպես են մեծ աղմուկով իջնում ու բարձրանում իր սենյակ բարձրացող աստիճաններով: Վերցնում է ատրճա-

նակը, հասնում դռան մոտ և կանչում՝ «ո՞վ կա այնտեղ»: Ըստ ձայների, աստիճաններով բարձրացողը պետք է անմիջապես դռան ետևում գտնվեր: Ատրճանակը ձեռքին, հայրս լուռ լսում է դռան ետևի անցուդարձը, սակայն երբ դուռը բացում է, այնտեղ ոչ ոք չի լինում:

Ահա այսպիսի պատմություններ էր պատմում մեզ: Այնքան եմ հիշում: Ասում են, որ այն շենքի տեղում այսօր զբոսայգի է: Հիշում եմ, թե ինչպես էի այն ժամանակ վախենում: Ովքե՞ր էին այդ հայերը: Ուրվական-մուրվակա՞ն էին: Շատ խորհրդավոր մի տպավորություն էր ստեղծվել նրանց շուրջ: Երբ խոսք էր բացվում նրանցից, տարօրինակ մի մթնոլորտ էր գոյանում: Կարծես պատմության հերոսներ լինեին, երևակայական էակներ, կար ժամանակ, երբ ապրում էին այստեղ, իսկ այժմ չկան: Արդյոք իսկապես ուրվակա՞ն էին, կամ այլմոլորակայի՞ն: Հայերի կոտորածի վերաբերյալ առաջին անգամ լսելս և անցած տարիներին այս խնդրի շուրջ զարգացող հետաքրքրությունս այսպես էր սկսվել:



Չիլլեր, Թուրքիայի նախկին վարչապետ

Վերստին հիշեցի այդ պատմությունը, երբ Չիլլերը (Թուրքիայի նախկին վարչապետ, առաջին կին վարչապետը Թուրքիայի պատմության մեջ) բացականչեց՝ «Բոլորս էլ Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյ ենք» (հայկական կոտորածների համար կախաղան հանված ոճրագործներից մեկը): Մեկ էլ, երբ Էրգենեկոնի անդամները, որոնք հետագայում ձերբակալվեցին (այս անվան տակ են դասվում նույնանուն կազմակերպության անդամները, որոնց ամբաստանում են պետությունը տապալելու նպատակով քրեական կազմակերպություն հիմնելու մեջ), «Քեմալ բեյի քայլարշավներ» էին կազմակերպում: Այո, «ես անմեղ եմ» ասում էր Քեմալ բեյը: Նա իսկապես էլ որոշ տեսանկյունից անմեղ էր, քանի որ ընդամենը կատարել էր կենտրոնից եկած հրամանները: Սակայն հայտնի են նաև կայմակամներ (օսմանյան պետական պաշտոնյա, գավառապետ), որոնք մերժելով նման հրամանները՝ պատժվել են:

Հետաքրքիրն այն է, որ ամեն տեղ էլ ականջից ականջ նման պատմություններ են պտտվում: Մարդիկ հիշում են, թե ինչեր են կատարվել, հասարակության ենթագիտակցությունը եղելությունից անտեղյակ չէր: Հայերին մորթել ու այս չորացած գետի հունն են գցել, կամ էլ՝ հայերին այս քարանձավում են խեղդել, կամ էլ՝ հայերին այս հորի մեջ են լցրել, և նման անթիվ պատմություններ: Իրականում, երբ հարց տրվի, անգամ սարերն ու ձորերն են աղաղակելու այս կոտորածի մասին: Այո, Անատոլիայում մի ուրվական է պտտվում: Եվ այս ուրվականն ամեն տեղ իրեն զգացնել է տալիս: Յոզղատից Մարաշ, Ուրֆա-




Բողազլյանի քաղաքապետարանը

յից Թոքատ, Դիարբեքիրից Տրապիզոն, Ադանայից Բիթլիս, Մուշից Էրզրում, Սվասից Սամսուն՝ ամենուրեք և ամեն տեղ իրեն զգացնել է տալիս:

Այս տխուր ներուժը, կոտորված մարդկանց ներկայությունը ամեն տեղ կարող եք զգալ: Ամայացած մի գյուղում, ավերակ մի եկեղեցում, քարի վրայի մի փորագրությունում, կոտրված մի խաչքարի բեկորում: Անատոլիայի հարազատ զավակների նախկինում ապրած այս հողերում ձեր ականջին մի եղանակ է գալիս, մի պահ լսում եք նրանց զվարթ քրքիջը, տեսնում դաշտերի վրա աշխատանքը, եկեղեցի են գնում, հարսանիք են անում, ձեր ականջին է հասնում նորածնի լացը, այնպես պարզ, մեր նման մի ժողովուրդ է ապրում ձեր առջև, շնչում է, թուխ, սևուկ-մևուկ, կարճլիկ, մեր նման, քո նման, իմ նման, իր բոլոր հոգսերով, մտահոգություններով, ցավերով, տխրություններով, ուրախությունով, վշտով, ձայները հնչում են երկնակամարում, հետքերը չեն ջնջվում, որքան էլ որ փորձ արվի ջնջել, չի վերանում:

Սա Անատոլիայի արյունահոսող վերքն է: Եվ արդեն ուշացել ենք այս վերքի արյունահոսությունը կանգնեցնելու գործում: Մեր մտավորականները շատ պատվավոր մի գործ ձեռնարկեցին: (Խոսքը մի շարք թուրք մտավորականների կողմից 2008 թվականի դեկտեմբերին հայտարարված «հայերից ներողություն խնդրելու» ստորագրահավաքի մասին է): Պատմությունը նրանց հիշելու է գնահատանքով և երախտագիտությամբ: Եվ այս ներողության արշավը գուցե այդ անհանգիստ հոգիներին մի քիչ հանգիստ կպարգևի:

Անկասկած, Անատոլիայում միայն հայերը չեն ենթարկվել ցեղասպանության: Չի կարելի մոռանալ նաև պոնտացի հույներին, Էգեականի հույներին, ասորիներին, եզդիներին և քրդերին: Իրականում, բնաջնջվածները Անատոլիայի բնիկ ժողովուրդներն են, ջնջվածը Անատոլիայի հազարամյակների մշակույթն է: Այնինքն, դեռ այնքան շատ բան կա, որի համար այս պետությունը պետք է ներողություն խնդրի: Հայկական, պոնտական, ասորական կոտորածներից հետո Կոչգիրի, Զիլան, Դերսիմի կոտորածներից մինչև ունևորության տուրքը և 6-7 սեպտ.-ի դեպքերը, Կահրամանմարաշը, 12 սեպտեմբերի խունտան, Դիարբեքիրի բանտի անմարդկային իրողությունները և Սվասը...

Իհարկե, այս ներողություն խնդրելու արշավը անմիջապես ուժեղ հակազդեցություն առաջացրեց: Ասում են, որ այս մտավորականները «սուտ մտավորականներ» են և կարող են վնասել Թուրքիային: Այո, իրականում իրենց միակ վախը և միակ մտահոգությունը սա է, որովհետև իրականությունը նրանց մազաչափ էլ չի հետաքրքրում: Մինչդեռ մտավորականը խիղճն է հասարակության և խիղճը հակված է նախ և առաջ ինքն իրեն հարցաքննելու: Մտավորականի միակ հետաքրքրությունը իրականությունն է: Սակայն մյուսներին հետաքրքրող միակ բանը այն է, թե արդյո՞ք որևէ վնաս չի հասցվի իրենց շահերին:

Ի՞նչ կլինի, եթե հատուցում պահանջեն: Ընկերներ, մի՞թե դուք չեք, որ հաճախ օգտագործում եք «արդարության կտրած մասը չի ցավի» (Օսմանյան ժամանակներից եկած հին թուրքական ասույթ, որտեղ իրականում «արդարության» փոխարեն պետք է լինի «շարիաթ» բառը) արտահայտությունը: Եթե դու մի ժողովուրդ հասցրել ես բնաջնջման աստիճանի, հափշտակել նրա ողջ ունեցվածքը և այդ միջոցով ստեղծել քո ազգային բուրժուազիան, իհարկե դրան որևէ հատուցում պիտի լինի: Անշուշտ դու պարտավոր ես վճարելու: Այս մեղքից մաքրվելու, մարդկային ցեղի ընտանիքում պատվավոր տեղ գրավելու համար անշուշտ պիտի դա անես: Գերմանիան էլ չարե՞ց: Ուրիշ բազմաթիվ երկրներ էլ չարեցի՞ն: Իրենց մեղքը չխոստովանեցի՞ն: Ներողություն չխնդրեցի՞ն: Հատուցում չվճարեցի՞ն:

Իսկ եթե հո՞ղ պահանջեն: Ահա և ամենամեծ վախը, ֆոբիան: Մենք մեզ այնպիսի թաքուների ենք դատապարտել, որ ազատ միտքը երբեք չի ծաղկելու այս հողերում: Ասենք թե պարզապես խորհրդանշական առումով Անին կամ Արարատը տաս, ի՞նչ ես կորցնելու: Այնպիսի պայմաններում, երբ անգամ Իսրայելը, նորաբնակների անեծքի գնով, կարողանում է Գոլանի բարձունքներից հեռանալ, դու չե՞ս կարող այդ բանը անել որպես ժեստ: Այդքա՞ն էլ ինքնավստահություն չունե՞ս: Ոչ, երբ նրանք Արարատ սարից մի հատիկ քար են խնդրում՝ Էջմիածնի տաճարի հիմքում զետեղելու համար, դա չափազանց շատ ես համարում, վախենում ես նույնիսկ մի հատիկ քար տալուց: Խաղաղության համար մի քարի կտորը չափազանց շա՞տ է: Ոչ, խաղաղության համար կարելի է ամեն ինչ անել, իսկ դու այդ բանը չկարողացար հասկանալ, քանի որ խաղաղության մշակույթը քո մեջ երբեք տեղ չէր ունեցել: Դու միշտ պատերազմը օրհնեցիր, վեհացրիր: Հողը պատերազմով են վերցնում (Թուրքիայում ընդունված արտահայտություն): Ճիշտ է, քանի որ դու երբեք չունեցար մի կտոր իսկ հող, որ առանց



Մեվլանա Ջելալեդդին Ռումի

պատերազմի վերցրած լինեիր: Երբևիցե չունեցար գեթ մի քաղաք, որը դու՛ հիմնած լինեիր: Գուցե հայերին մեղադրում ես, որ իրենց հայրենիքը չկարողացան բավականաչափ պաշտպանել: Գուցե չինացիների նման մի մեծ պա՞տ պետք է կառուցեին: Դու Քրիստոսի ուսմունքն էլ երբեք չլսեցիր: Եթե քո քրիստոնյա եղբայրներին հարցնեիր, նրանք քեզ կասեին: Դու Մեվլանայի՞ն էլ (Մեվլանա Ջելալեդդին Ռումի, պարսիկ բանաստեղծ, փիլիսոփա և կրոնական առաջնորդ: Հիմնադիրն է մուսուլմանական «Մեվլևի» աղանդի, որի առանցքում սիրո գաղափարն է բոլորի նկատմամբ անխտիր: Կյանքի մեծ մասը Օսմանյան կայսրությունում անցկացրած և իր ուսմունքը այստեղ զարգացրած լինելու պատճառով թուրքերը իրեն ընդունում են որպես թուրք) երբեք չես լսել, ափսոս:

Ասում են, թե ինչո՞ւ մենք ներողություն խնդրենք, թող նրանք ներողություն խնդրեն: Խիղճ ունեցեք: Միայն մի ժողովուրդ տոյժի եք ենթարկել, հայրենիքից քշել եք, ներողություն խնդրելը բավական չէ՝ դուք պետք է ծնկի գաք ու լացեք: Ճիշտ այնպես, ինչպես դա արեց Գերմանիայի վարչապետը Աուշվիցում: Մեծը դուք եք, ուժեղը դուք եք, տոյժի ենթարկողն էլ եք դուք: Սակայն տուժածի դեր խաղալն էլ բոլորից լավ դուք եք իմանում: Լինելով հսկա մի կայսրություն, դարեր շարունակ տարբեր ժողովուրդներ ձեր լծի տակ պահելով հանդերձ, չգիտես ինչպես, բայց որպես տուժած կողմ միշտ էլ դուք հանդիսացաք և 80 տարի շարունակ այս պատմությունով սնվեցիք: Չե՞ք հասկանում, որ մեծահոգություն անող, ժեստ անող, առաջին քայլը նետող կողմը դուք պիտի լինեք: Իսկ ի՞նչ արժեք կունենար ուրիշ մոտեցումը: Սա ձեզ համար էլ մի քիչ անհեթեթ չի՞ թվում: Մի կողմից ուժաբեկված, նեղացած մանուկի պես պահվածքով, զգացական առումով կործանված, անգամ մտային հավասարակշռությունը կորցրած, պատմության մեջ խրված, իր հազարամյա հայրենիքի կորուստով դեռ չհաշտված, աշխարհի չորս կողմը ցրված, տրավմայի ենթարկված մի ժողովուրդ, իսկ մյուս կողմում՝ ուժեղ, հարուստ, բարգավաճ, կարճ ասած՝ «տակը չոր, տրամադրությունը տեղին» մի Թուրքիա: Եղբայր, ո՞վ պիտի առաջին քայլը անի: Ո՞վ: Ո՞վ է այս ցավը տանում և հավիտյան պիտի տանի, դո՞ւք, թե՞ նրանք:

Ասում են, հայերը հայրենիքին դավաճանել էին և նրանց տեղահան անելը ճիշտ էր: Նախ պետք է հարցնել, թե ո՞ր հայրենիքին: Ոչ մեկը պարտավոր չէր ապրել Օսմանյան տիրապետության ներքո, մանավանդ փտած, նեխած մի կայսրության տիրապետության ներքո: Մի՞թե կարելի է ազգային կամ քաղաքական պայքարի մեջ գտնվող խմբերը պատրվակելով՝ արդարացնել մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը:

Ցույցեր, բողոքներ, կարճ ասած՝ ազգի պայքարը հանուն իր իրավունքների մի՞թե բավական պատճառ է նրան ամբողջությամբ ոչնչացնելու համար: Սա նման է այն բանին, որ այսօր ՔԲԿ-ի (Քրդական բանվորական կուսակցություն, Partiye Karkariye Kurdistan- PKK) պատրվակով փորձում են ամբողջ քուրդ ժողովրդին վերացնել: Սակայն ոչ մի բան էլ չի փոխվում, չէ՞: Այսօր նույն կերպ քրդերի ազգային մշակութային պահանջները փորձում են ճնշել ուժի միջոցով, միլիոնավոր մարդկանց և միլիարդավոր դոլարների գնով: Եվ ես շատ լավ գիտեմ, որ կան բազմաթիվ մարդիկ, որոնց մտքով առանց վարանելու կանցներ քրդերին էլ տեղահանել, եթե այն ժամանակվա պայմանները լինեին և հաղորդակցությունը այսօր այսքան զարգացած չլիներ:

Ըմբոստների՝ հարկ չվճարելու կամ բանակում չծառայելու (քանզի ծառայողների գլխին եկածները ծանոթ են բոլորիս) և նման զանազան պատճառներով լեռ բարձրանալը ու կոմիտաճիություն անելը,– չնայած որ այս գործում կային հույներ, հայեր, քրդեր, ալբանացիներ, բուլղարներ, չերքեզներ, նաև թուրքեր,- նման ըմբոստության դեպքերը ինչպե՞ս կարելի է համեմատել պետության կողմից պետական ուժերի և կարելիությունների միջոցով իրականացված մի ցեղասպանության հետ, որը կատարվեց իր իսկ քաղաքացու դեմ:

Այստեղ կատարվում է շատ էական մի խաբեություն: Իբր թե հայերը 1890-ականներին, հիմնելով Դաշնակ և Հնչակ հեղափոխական կազմակերպությունները, երկ-

րով մեկ ահաբեկչություն էին կազմակերպում և անգամ մահափորձ են իրականացրել փադիշահի դեմ: Թուրքական թեզերում այդ փաստարկումը հաճախակի է օգտագործվում: Սա մի խեղաթյուրում է: Այդ օրերին ո՞ր կազմակերպությունը Աբդուլ Համիդի դեմ չէր պայքարում, այդ թվում իթթիհատականները: Հապա «Իթթիհատ վե Թերաքքին» չէ՞ր, որ Էնվեր փաշայի գլխավորությամբ ըմբոստանալով, լեռներում ապաստանած, մեկը մյուսի ետևից օսմանյան փաշաներին էին խփում: Եվ նույնիսկ դաշինք չէի՞ն կնքել դաշնակների հետ : Այժմ կարելի է հարց տալ՝ եթե իթթիհատականները դաշնակների հետ դաշինք էին կնքել, ինչո՞ւ էր այս ցեղասպանությունը: Այդ բանը պետք է «Իթթիհատ վե Թերաքքիի» («Միաբանություն և առաջադիմություն») թուրք-թուրանական գաղափարախոսներին հարցնել: Նախ և առաջ դա մի շահադիտական համագործակցություն էր: Իթթիհատականները շատ սիրուն ձևով օգտվեցին այն հանգամանքից, որ դաշնակները համարյա բոլոր քաղաքներում արտակարգ կազմակերպված էին: Նրանք իրենց իսկական նպատակը և ուժի ու իշխանության ձգտումը արդեն ցուցադրել էին 1909 թվականի Ադանայի դեպքերի ժամանակ: Հակառակ բազմաթիվ դեպքերի, որոնք կարող էին հարաբերությունների խզման պատճառ հանդիսանալ, դաշնակները դեռ իրենց հույսը չէին կտրել: Սակայն Բալկանների կորստից հետո Անատոլիան թուրքերի համար հայրենիք դարձնելու, թուրքերի համար տեղ բանալու ծրագիրը վաղուց օրակարգի վրա էր: Այս ծրագրի մեջ Անատոլիայի քրիստոնյաները չէին



Իթթիհատ վե Թերաքքի

կարող տեղ գրավել, այս վնասակար մակաբույծները պետք է որ արանքից մաքրվեին ու Միջին Ասիայի կապը ամբողջանար: Միայն թուրքերից և մուսուլմաններից կազմված մի կայսրություն:

Այլ կերպ չէ՞ր կարելի այս հարցը լուծել: Չէ՞ր կարելի հայերի հետ բանակցությունների սեղան նստել, ինքնավարություն տալ: Ի՞նչ կլիներ, եթե մի ժեստ արվեր ու այդ տարածքը ամրագրվեր որպես պատմական Հայաստան: Եվ կլինեի՞ն այս բոլոր կոտորածները: Ի՞նչ կլիներ, եթե «Արմենիա» կոչվող այս տարածքում հայերը, թուրքերը և քրդերը շարունակեին խաղաղության մեջ ապրել: Մի՞թե մուսուլմանները չէին ունենալու իրենց բոլոր իրավունքները. անշուշտ, ունենալու էին: Ոչ, սա ուժի և իշխանության կռիվ էր, իսկ ուժն ու իշխանությունը երբեք չէր կարելի քրիստոնյաներին զիջել: Թուրքերի մեջ միշտ էլ եղել է այսպիսի մի տրամաբանություն. եթե ցանկանում ես, արյունով պետք է վերցնես: «Երկիրը հայրենիք է այն դեպքում, եթե հանուն նրա մահացող կա» («Հողը հող դարձնողը նրա վրայի արյունն է, հայրենիքը հայրենիք է այն դեպքում, եթե հանուն նրա մահացող կա»՝ թուրքական ազգայնաշունչ բանաստեղծության տողեր): Թե չէ՝ ո՛չ մեկին էլ իրավունք չեմ տա: Ահա ձեզ արյուն և արցունք: Արժե՞ր այս ամենին:

Ասում են, թե պատերազմում նույնչափ էլ թուրք է մահացել, իսկ նրանց համար ո՞վ է ներողություն խնդրելու: Նախ, պետք չէ մոռանալ, որ պատերազմ սկսող կողմը Թուրքիան էր և պատերազմի մտավ հանուն իր ծավալապաշտական նկրտումների, հարձակվելով ուղղակի Ռուսաստանի վրա: Այնուհետև, մի՞թե Գերմանիայի ներողության համար արգելք հանդիսացան Գերմանիայի բոլոր քաղաքների ռմբակոծումը, որի արդյունքում քաղաքացիական բնակչությունը կորուստ կրեց, գերմանացի փոքրամասնության կրած տանջանքները Լեհաստանում, Չեխոսլովակիայում,

Հունգարիայում, նրանց որպես համագործակիցների կոտորածի ենթարկելը, կանանց բռնաբարությունը ռուս զինվորների կողմից, երբ գերմանացիները նահանջեցին այս տարածքներից:

Ասում են, թող Խոջալուի կոտորածի համար ներողություն խնդրեն: Մի՞թե Իսրայելի կողմից 82-ին Սաբրա և Շատիլայի կոտորածների իրականացումը արգելք հանդիսացավ հրեաներից ներողություն խնդրելու համար: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ կան հայեր, որոնք լի են ատելությամբ, կամ եթե կարողանային մի վիրուս հնարել, ապա կօգտագործեին բոլոր թուրքերին վերացնելու համար: Էականը պարզելն է, թե ինչպե՞ս է նման ատելությունը առաջանում: Եվ եթե վաղուց ներողություն խնդրեինք, այս ատելությունը կհասնե՞ր նման չափերի:

Կարծում եմ, որ չէր հասնի: Վստահ եմ, որ եթե դու քո գիրկդ բացելով ներողություն խնդրեիր, հակառակ այդ չափերի ատելության, նրանք մեղմանալու էին և մի քայլ էին անելու դեպի քեզ: Որովհետև սա թելադրում է մարդկային բնությունը: Նրանց այս ատելությունը սնվում է այն նախապաշարումից, թե թուրքերը մարդ չեն դառնա: Մտածում են, որ թուրքերը գոռոզ, համառ, իրենց միշտ իրավունքի տեր նկատող և ամեն ինչում իրավունք պահանջող, ծավալապաշտ, բռնացող և ճնշող մի ժողովուրդ են, որի պատճառով բոլորովին կորցրել են հույսը նրանց նկատմամբ:

Փաստարկներից մեկն էլ այն է, որ քրիստոնյա փոքրամասնությունները Թուրքիո գրավման ժամանակ զավթիչներին գրկաբաց են ընդունել, նրանց ծաղիկներով են դիմավորել: Իսկ ինչո՞ւ ոչ: Քրիստոնյա եղբայրները եկել էին ազատագրելու նրանց կրած լծից: Իսկ ի՞նչ պետք է անեին: Հապա մտածեք, թե ինչպե՞ս կդիմավորեին Կոսովոյում թուրքական ազատարար բանակը: Կամ էլ՝ թուրքմենները ինչպե՞ս կդիմավորեին թուրքական բանակը, եթե վերջինս Կերկուկ մտներ: Ինչի՞ եք միշտ միակողմանի դատում:

Ոչ մի քրիստոնյա ազգ չի ցանկանա որևէ մուսուլման պետության լծի տակ ապրել: Ի՞նչ եք կարծում, կկատարվե՞ր այս ամենը, եթե այս երկիրը 1908-ի հեղափոխությունից հետո ժողովրդավարական դառնար: Մահմեդականները երբեք չհրաժարվեցին իշխող դասակարգ լինելու հավակնությունից: Պարտավորված մի շարք բարեփոխումներ կրում էին ցուցադրական բնույթ: Ադանայի մեծ կոտորածը ինչո՞ւ եղավ, ձեր կարծիքով: Կարծում եք, մուսուլմանները մարսեցի՞ն այն, որ քրիստոնյաները իրենց հետ նույն իրավունքներն են ունենալու և գլուխները բարձր քայլելու են: Բա չէ՞ որ դուք հետամնացության դեմ պայքարող լաիկներ (լաիցիզմ – քաղաքական և կրոնական իշխանությունների տարանջատում) էիք: Ինչո՞ւ եք այդքան անըմբռնողունակ Անատոլիայի այս պահպանողական, հետամնաց, բռնակալ կառույցի հանդեպ, երբ խնդրո առարկան հայերն են դառնում: Բա դո՛ւք չէի՞ք, որ աղմուկ էիք բարձրացնում «թաղային ճնշումների» (վերջին ժամանակներում Թուրքիայում մտահոգություն է առաջացել՝ կրոնամոլների կողմից սպասվող հավանական ճնշումների կապակցությամբ) դեմ: Հապա մտածեք, թե ինչ է նշանակում՝ լինել հայ Անատոլիայում: Գյավուր անվան տակ ստորացված լինելու մասին մտածեք:

Այսինքն՝ եթե Աթաթյուրքն է այս համակարգը քանդում, ապա հերոս է դառնում, հեղափոխական է դառնում, իսկ երբ հայերն են ըմբոստանում այս կարգերի դեմ և այլևս սեփական ուղին հարթում և իրենք իրենց կառավարել ցանկանում, ձգտում ձերբազատվել օսմանցու հետամնացությունից և ցանկանում ազատվել այս կարգերից, որոնք իրենց սեփական հետամնացության պատճառն են հանդիսանում, կարճ ասած՝ հեղափոխություն կատարել ցանկացող հայերը, որոնք Անատոլիայի արևմտամետ դեմքն են ներկայացնում, երբ ըմբոստության դրոշն են պարզում օսմանցու դեմ, վա՞տն են դառնում: Նորից երկակի ստանդարտ: Արդեն քրիստոնյաներն ու մուսուլմանները երբեք էլ հավասար չեղան այս հողերի վրա: Նրանց զիմմիությունը (զիմմի - մուսուլման երկրում ապրող քրիստոնյա, որը դասվում էր երկրորդ կարգի քաղաքացի) երբեք էլ չփոխվեց: Անատոլիայում կատարվող անիրավությունը, անարդարությունը երբեք չվերացավ: Աղաների ու փաշաների իշխանությունը, զորբայությունը երբեք վերջ չգտավ: Սեղմիր քրիստոնյայի կոկորդը, վերցրու նրա ունեցվածքը, շորթիր՝ ձայն չի հանի, անգամ չի կարողանա քեզ դատի տալ: Դուք տեղյա՞կ էիք, որ եթե մուսուլմանը ապրանք էր գնում հայից, ապրանքի արժեքը վճարում էր ըստ ցանկության. եթե չէր ցանկանում՝ չէր վճարում: Կարծում եք, ամեն ինչ վարդաստանի նմա՞ն էր: Կարծում եք, ինչի՞ համար ծայր առավ հայկական ազգային շարժումը: Այն ծնվեց որպես կեղեքվող ազգի մի պայքար, այն պայմաններում, երբ դատարանում հայերի վկայությունն անգամ չէր ընդունվում, նրանց արգելված էր զենք կրել և ձի հեծնել: Իսկ չէ՞ որ բարեփոխումնե-

րին խոչընդոտեց պան-իսլամիստ Աբդուլ Համիդի ճնշման համակարգը: Չէ՞ որ գյուղերը սկսեցին կեղեքել անսանձ համիդիե գնդերը, ունեցվածքը բռնագրավվեց, կանայք ու աղջիկներ առևանգվեցին: Չէ՞ որ 1890-ականներին 300 հազար հայ կոտորվեց: Չէ՞ որ 1908-ի հեղաշրջումը մնաց ընդամենը որպես աչքակապություն: Չէ՞ որ «Իթթիհատ վե Թերաքքին» իր ցուցադրական խոստումները շարունակ ձգձգեց: Այդ ո՞ր մի ազգը կարող էր այս ամենի նկատմամբ լուռ մնալ: Անգամ եթե ոչ մի բան պատահած չլիներ, ազգերը ունեն ինքնորոշման իրավունք, այնպես չէ՞: Երբևիցե հարցրե՞լ եք նրանց: Նրանց ժողովրդավարական իրավունքները հարգվեցի՞ն: Երբևիցե լիիրավ հավասարություն կատարվե՞ց: Մի երկրում, որտեղ փադիշահը մուսուլման է, և մուսուլմանները իշխող դասակարգ են կազմում, մի՞թե կարելի է հավասարությունից խոսել: Բազմամշակութային մի աշխարհագրական տարածքում կարո՞ղ էր որևէ քրիստոնյա վարչապետ կամ էլ նախագահ դառնալ: Փադիշահ արդեն չէին կարող լինել:

Իսկ դուք գիտե՞ք, որ բյուզանդական գահին բազմած հայ կայսրեր են եղել: Թուրքական թեզեր պաշտպանողների գլխավոր թեզերից մեկը այն է, որ հայերը բյուզանդական իշխանության ներքո էին ապրում, երբ թուրքերը մտան Անատոլիա, և իրականում հայկական հողերը վերցված են բյուզանդացիներից: Բացի այդ պնդում են, որ հայերը բյուզանդացիների կողմից միշտ կրոնական ճնշման տակ են եղել և իբր թուրքերը հայերի նկատմամբ ազատագրողի դերում են: Այսպիսով հայերը պետք չէ խոսեն այն մասին, որ թուրքերը գրավել են իրենց հողերը, և պետք չէ պայքարեն թուրքերի դեմ իրենց անկախության համար: Նրանք միշտ ստրուկ են եղել և այդպես էլ պետք է մնային: Մի՞թե հնարավոր է նման բան: Նույնիսկ եթե որևէ մի ազգ 1000 տարի գերության մեջ ապրի, մի՞թե չի կարող պայքարել այդ լծի դեմ: Մի՞թե թուրքերը նույնը չէին անի: Դուք, որ շատ լավ եք իմանում, թե ի՞նչ է նշանակում ազգային անկախություն, ինչո՞ւ ըմբռնումով չեք մոտենում հայերի ազգային պայքարին: Ո՞ւր է ձեր ազգային պայքարը, ո՞ւր են ձեր անկախության արժեքները, ուրիշը եթե դա ցանկանա, ուրեմն սխա՞լ է: Ո՞ւր է ձեր «ազատություն կամ մահ» լոզունգը: Ո՞ւր է ազգերի ինքնորոշման իրավունքը: Ի՞նչ երկակի ստանդարտ է սա: Թիկունքից խփող արաբները դավաճան են, բուլղարները դավաճան են, հույները դավաճան են, սերբերը, ռումինները, ալբանացիք դավաճան են, հայերը դավաճան են, քրդերը դավաճան են: Ձեզ չի՞ թվում, որ մի մեծ սխալ կա այստեղ:

Հայերը ապրել են համեմատաբար հանգիստ, հարստացել են: Մի՞թե նրանց մեղքն է, որ սպասարկման ոլորտում, արհեստներում հաջող են, շնորհալի: Իրենց մե՞ղքն է, որ թուրքերը այս ոլորտներին նախընտրում են պաշտոնյա կամ զինվոր լինելը: Վերջ ի վերջո ամեն ինչ չվերցրեցի՞ք նրանց ձեռքից: Կարծում եք, թե նրանք չգիտեի՞ն, թե որքան անկայուն է իրենց վիճակը, որ մի օր իրենց ամբողջ ձեռք բերածը հետ են տալու՝ հանուն ազատության: Որովհետև ոչ մի հարստություն ազատության արժեքը չունի: Դե, խիղճ ունեցեք, որքան էլ հանգիստ չապրեին նրանք (չնայած Անատոլիայում երբեք էլ վիճակը այդպես չէր, աղքատության, տգիտության, անարդարության մեջ լողում էին և ենթակա էին ազգային էրոզիայի, վերացման), պատկերացրեք, եթե թուրքերը 1000 տարի էլ անգլիական մանդատի տակ և համեմատաբար խաղաղության մեջ ապրեին, մի գեղեցիկ օր իրենց անկախության համար չէի՞ն պատերազմելու, նման պահանջներ չէի՞ն ունենալու: Այսքան անկարո՞ղ եք դիմացինին հասկանալու մեջ:

Բացի այդ, մի բան կա, որ մոռացվում է. անգամ բյուզանդական ժամանակ Արևելյան Անատոլիայի տարածքը կոչվում էր «Արմենիա» և հայկական թագավորությունները կամ իշխանությունները միշտ էլ մի տեսակ անկախություն էին վայելում բյուզանդական իշխանության ներքո: Այսինքն, հայոց թագավորներ միշտ էլ եղել են բյուզանդական հովանու ներքո: Արդեն հռովմեական ժամանակներից սկսած Հայաստանը հռովմեական նահանգի կարգավիճակ է ունեցել: Այսինքն, ինչքան էլ կրոնական առճակատումներ տեղի ունենային, Հայաստանը մնում էր Հայաստան: Օրինակ, Վասպուրականի հայոց թագավոր Սենեքերիմը աճող մուսուլմանական հարձակումների հետևանքով բյուզանդական կայսրի թույլտվությամբ փոխադրվել է Սեբաստիա: Այսինքն, երբ սելջուկները Անիում քարը քարի վրա չթողեցին, այդ քաղաքը հանդիսանում էր որպես հայկական քաղաք: Կամ էլ, երբ Մալաթիայի բերդն էին գրավում, դա հայերի կողմից պաշտպանվող մի բերդ էր, Մալաթիայի ժողովուրդը հայ էր, այսինքն այդ տարածքը հայկական էր: Այսինքն, այդ հողերի ինքնությունը չէր փոխված, դեռևս հռովմեական ժամանակներից ճանաչվում էր որպես Արմենիա: Պարսկական գրավման ժամանակ էլ այդպես էր ճանաչ-



Անի

ված, իսկ արաբական արշավանքների ժամանակ այս տարածքը կոչվել է Էրմենիյյե: Արա նայեք, երբ Ք. ա. 66 թվականին Մեծն Տիգրանը պաշտպանում էր Տիգրանակերտ ամրոցը հռովմեացիներից, գոյություն ուներ Արմենիա երկիրը և այդ ժամանակաշրջանում ոչ անգլիական ազգ, ոչ գերմանական ազգ, ոչ ֆրանսիական ազգ և ոչ էլ թուրքական ազգ կար պատմության բեմահարթակում: Այսինքն՝ նման հին անցյալ ունեցող ժողովրդի ազգային պահանջների նկատմամբ անզգա մնացողները մեծ սխալ են գործում, իսկ իրենց կեցվածքը երկերեսություն է: Այսինքն՝ այս ազգը կարելի էր սիրաշահել, պաշտպանելով նրան, եթե այն «հավատարիմ ազգ» (Օսմանյան կայսրության մեջ ապրող բոլոր ազգերի մեջ հայերը ճանաչված էին որպես «հավատարիմ ազգ»՝ Millet-i Sadika) էր, և իսկապես որ այդպես էր, իրենց ազգային պատկանելու- թյանը տեր կանգնել և ժողովրդավարական պահանջները բավարարելով շատ լավ կարելի էր նրանց շահել, բայց այս մոտեցումով չառաջնորդվեցին:

Ինչո՞ւ: Օսմանցին, որը Քուրդիստանը ճանաչեց որպես Քուրդիստան, իսկ Լազիստանը որպես Լազիստան, ինչո՞ւ երբ խնդիրը հասավ քրիստոնյաներին, նրանց հայրենիքը չհաստատեց: Նշանակում է՝ «հավատարմություն» ասելով ստրկություն են նկատի ունեցել, միշտ որպես ստրուկ և ծառա են տեսել նրանց:

Հայերը իրենք իրենց անվանում են «հայ», իսկ իրենց երկիրը կոչում են «Հայաստան»: Իրականում Արմենիա նշանակում է բարձր երկիր և առաջացել է ասորերեն Ուրարտու, եբրայերեն Արարատ, արամեերեն Հարմինյաք կամ Հարմենի տերմիններից և ոչ մի առնչություն չկա այն որպես տարածքային անուն օգտագործելու մեջ: Այսօր ունենք մի տարածք, որ կոչվում է Թրակիա: Իսկ դուք գիտե՞ք, թե այդ անունը որտեղից է գալիս: Մի հին ժողովրդից, որոնք կոչվել են թրակներ: Պատճառը, որ մենք այսօր այս տարածքը հանգիստ կարող ենք Թրակիա կոչել, այն է, որ թրակներն այլևս գոյություն չունեն և չեն կարող մեզանից հող պահանջել: Միակ պատճառը, որ ողջ պատմության ընթացքում Արմենիա կոչվող մեր այսօրվա Արևելյան Անատոլիայի տարածքը չենք կարողանում Արմենիա անվանել, սա է: Այս բանից ենք վախենում և խուսնում: Սակայն Իրանը այսօր չի խուսնում այն բանից, որ ունի Արևմտյան Ադրբեջան կոչվող մի նահանգ:

Իսկ Թուրքական պատմության հիմնարկը ինչո՞ւ է փորձում Անի քաղաքի հիմնադիր հանդիսացող հայկական իշխանական Կամսարական տոհմը կապել իբր օղուզ-թուրք հանդիսացող սակաների,– չափազանց ակնհայտ է, որ դա հնարովի է,- Կեմեր-Սակա տոհմին, չնայած, որ սակաների թուրք լինելն անգամ շատ վիճելի է: Ինչո՞ւ են փորձում Անին դարձնել Անը: Մի՞թե դա անկարողության նշան չէ: Ինչո՞ւ են փորձում կցվել: Մի՞թե բարդույթ ունեն, որ թուրքերը եկվոր են Անատոլիայում: Ինչո՞ւ են ասում, որ հայկական եկեղեցիները կառուցվել են քրիստոնյա թուրքերի կողմից: Աթաթյուրքը ինչո՞ւ էր ասել, որ «Անատոլիան պատմության ընթացքում թուրքական էր, ուրեմն հիմա էլ թուրքական է և միշտ էլ թուրքական է մնալու» և աշխատելով այս թերությունը վերացնել, փորձեց պատմությունը ուղղակիորեն խեղաթյուրել, Հունաստանի և Եգիպտոսի մշակույթի և անգամ աշխարհի բոլոր ազգերի լեզուների արմատները կապելով թուրքերի հետ: Կցելու այս արհեստական ջանքերը ինչպե՞ս կարող են հարգանք առաջացնել մեր պատմական թեզերի հանդեպ, ծիծաղ առաջացնելուց բացի: Այսինքն՝ մենք ինչպե՞ս կարող ենք թուրքերի պատմության թեզերի նկատմամբ հարգանք ունենալ նման ձևափոխությունից և խեղաթյուրումից հետո: Ինչպե՞ս կարող ենք նրանց հավատալ: Կարճ ասած, ինչպե՞ս կարող ենք պատմությունը թողնել պատմաբաններին: Աթաթյուրքը Ադանայում մի բանախոսության ընթացքում ինչո՞ւ էր ասել «հայերը ոչ մի իրավունք չունեն այս հայրենիքում»:

Ինչպե՞ս կարող են այս հողերը տանել այսքան սուտ: Մի տեղից էլ պոռթկալու է, չէ՞: Դուք կարո՞ղ եք իրականությունը սքողել: Որքա՞ն ժամանակ կարող է ապրել մի երկիր, որը հիմնված է ստի վրա, ինչպե՞ս կարող է երկիրը իր գոյությունը շարունակել, հիմնված լինելով մեծագույն անիրավության վրա: Եթե չլինի այս մեղքերի թողության խնդրանքը, ինչպե՞ս կարող է այս երկիրը մաքրվել, շիտակ ուղի գտնել: Ինչպե՞ս կարելի է այս խելագարությունից, մտային այս հիվանդությունից ձերբազատվել: Պատասխանեմ՝ «չի՛ կարելի»: Այստեղ մի խոսք կա՝ «երբ սկսում ես ինքդ քեզ

խաբել, բացում ես խելագարության դռները»:

Ահա սա է մեր ապրած խելագարությունը: Սա է այս երկրի վիճակը, որը 80 տարի է, ինչ հայտնվել է պարանոիկ-շիզոֆրենիկ վիճակի մեջ. բոլորին կասկածանքով է նայում, իրեն չորս կողմից շրջապատված է զգում, բոլորին ընդունում է որպես թշնամի, ինքնիրեն մենակության է մատնել, մեկուսացրել է աշխարհից ու չի կարողանում մարդկության ընտանիքին մաս կազմել: Այս բոլորի պատճառը մարդկության դեմ գործած հանցանքն է, որը բույն է դրել մեր ենթագիտակցության մեջ և որի հետ չենք կարողանում առերեսվել, խուսափում ենք առերեսվելուց և ավելի խորքերն ենք նրան քշում: Գողի ենք նման, որը վախենում է, որ մի օր իր գողացած ապրանքները իր ձեռքից խլելու են: Ճիշտ նույնը եղավ Հանրապետության հիմնադրման ժամանակ: Այս թալանի մեջ բաժին ունեցող բոլոր մեծանուն, աղա, փաշա ու «Իթթիհատ վե Թերաքքիի» առաջնորդները, վախենալով դատից, մասնակցեցին անատոլիական պայքարին և տեղ գտան հանրապետության կադրերի առաջին կազմում: Այս մեղքին էլ այսպես տեր կանգնեցին: Այնինչ ինչի՞ համար Աթաթյուրքը հայկական ցեղասպանության մեղավորների ընտանիքներին թոշակ նշանակեց, ինչի՞ համար նրանց հասկացրեց հայերից մնացած տները:

Այսօր պետական-պաշտոնական թեզերի պաշտպանները միշտ այն փաստարկից են կառչում, որ հայերը փոքրամասնություն էին կազմում, իսկ ես ասում եմ՝ «ոչ, փոքրամասնություն չէին կազմում»: Նույնիսկ քրդերին հայկական հողերում տարածելուց հետո էլ նրանք փոքրամասնություն չէին կազմում: Ուրեմն՝ այսպես. ասում են առաջին աշխարհամարտի սկզբին Անատոլիայի բնակչությունը կազմում էր 10 միլիոն: Եթե ընդունենք, որ դրա 1,5 միլիոնը հայեր էին, չնայած որ ամբողջ կայսրության տարածքում հայերի թիվը կազմում էր 2 միլիոն, Եգեյական մասում՝ 1,5 միլիոն հույն և Սև ծովի տարածքում համարյա 1 միլիոն հույն կար, իսկ ասորիների վերաբերյալ հաղորդում են, որ նրանց թիվը տատանվում էր 500,000-700,000-ի միջև, ուրեմն քրիստոնյաների ընդհանուր թիվը հասնում էր 5 միլիոնի: Այսինքն Անատոլիայի բնակչության մոտ կեսը: Լավ, ի՞նչ էր լինելու այս մարդկանց հետ: Հեշտ ու հանգիստ կարելի էր նրանց մի շարք ազգային իրավունքներ տալ ու հավաքել մի տեղում: Օրինակ, կարելի էր հայերին Արևելքում մի տեսակ ինքնավարություն տալ և այդ տարածքի հույն, ասորի և մյուս քրիստոնյա տարրերը հավաքելով չկորցնել այս ազգերը: Կամ էլ ստեղծել բազմամշակութային ժողովրդավարական մի հավաքականություն: Այնինչ, իրականում ամեն ինչ կարելի էր լուծել երկխոսության միջոցով: Այնինչ ուժի կիրառման ճանապարհին երկխոսության քանի՞ առիթ ձեռքից բաց թողնվեց, արդյո՞ք մտածեցիք այս ամենի մասին: Այնինչ՝ անելիքը իրականում հենց սա էր: Մյուս ընտրությունը բնական ընտրություն չէր և հնարավոր չէր խուսափել սարսափելի արդյունքներից: Որովհետև դուք նայում եք Անատոլիայի հյուսվածքը, այս աստիճանի արհեստական մի մոտեցում միայն ցեղասպանությունով էր հնարավոր իրականացնել, ուրիշ կերպ հնարավոր չէր:

Պետության կողմից մանրակրկիտ ծրագրված և իրագործված մի ցեղասպանություն: Պատերազմի պատրվակով, տեղահանության քողի տակ կազմակերպված մի հանցանք մարդկության հանդեպ: Այն էլ, ռազմաճակատի հետ ոչ մի կապ չունեցող Էդիրնե, Թեքիրդաղ, Չանակկալե, Իզմիտ, Քյոթահիա, Էսկիշեհիր, Իզմիր և այլոց նման անկապ տարածքների հայերին էլ ներգրաված մի ծրագիր: Իսկ ի՞նչ կատարվեց լեռներում թաքնվող ավազակախմբերի հետ: Ոչինչ: Ո՞վ պատժվեց, ո՞ւմ քշեցին աքսորավայր. կանանց, երեխաներին, ծերերին: Իսկ ինչի՞ համար: Եթե նրանք մնային իրենց տներում, ի՞նչ կլիներ: Ոչինչ: Նպատակը ուրիշ էր, և ըստ ծրագրի, նրանք այլևս չէին վերադառնալու: Նրանց տներում անմիջապես տեղավորում էին ուրիշ գաղթականներին: Նպատակ էր հետապնդվում բնակչության քանակը իջեցնել 5 տոկոսի սահմաններում ընդունելի մի չափի: Բեհաէդդին Շաքիրը Անատոլիան քայլ առ քայլ շրջում էր, ստուգում տեղահանության գործընթացը և հրամաններ արձակում: Մարդկության դեմ իրագործած հանցանքին մասնակից դառնալ չցանկացող պատվաբեր մարդկանց սպանում էին: Արդեն նախօրոք հայտարարվել էր, որ հայերին պաշտպանողները կախաղան են բարձրացվելու իրենց դռան առջև: Դրանից բացի, ֆեթվաներ (կրոնապետի արձակած հրաման կամ թույլտվություն, որը Օսմանյան կայսրությունում օգտագործում էին կայսերական հրամանների հավելյալ զորություն հաղորդելու նպատակով) էին արձակում, որպեսզի ժողովրդին գրգռեն, հայտարարելով, որ հայերի ինչքը և կյանքը հալալ է բոլորին:

«Թեշքիլաթը Մահսուսայի» («Հատուկ կազմակերպություն»: «Իթթիհատ վե Թերաքքի» կուսակ-

ցության գաղտնի կազմակերպություն, որի ուսերին էր դրված հայոց ցեղասպանությունը կազմակերպելու և իրագործելու խնդիրը: Նրա կազմում ընդգրկված էին բանտերից արձակված բազմաթիվ ոճրագործներ: Այս կազմակերպությունը հետագայում կազմեց այսօրվա թուրքական գաղտնի գործակալու- թյան կորիզը) գաղտնի միավորումները ճանապարհների վրա բաշխվել, այնպես էին ձևացնում, թե քարավանների վրա ավազակներ են հարձակվել: Ժանդարմերիան չէր միջամտում: Այս գործի համար բանտերից ազատ էին արձակվել բոլոր մարդասպաններն ու բռնաբարության համար դատվածները, որոնք համալրեցին «Թեշքիլաթը Մախսուսայի» շարքերը: Գետերի հուները, անդունդները, քարանձավները, հորերը լցվել էին անմեղների դիակներով: Ժողովուրդը, լավ իմանալով, որ այս խմբերը գնում են դեպի մահ, հարձակվում էին մարդկանց վրա, ինչպես ճանճերն են հարձակվում մեղրի վրա, և փորձում էին ամեն ինչ խլել նրանցից, սկսած իրենց վրա կարած ոսկիներից, մի քանի կոպեկ փողից,– եթե կար,- մի կտոր չոր հացից, վերջացրած շորերով ու կոշիկներով: Անգամ մի կտոր չոր հացին արժանի չէին նրանք: Իսկ երեխանե՞րը: Մեղք էր, ափսոս էր, նրանք աշխատասեր էին, դրամագլուխ էին: Նրանց վերցրեցին, իրար մեջ կիսեցին: Իսկ գեղեցիկ կանա՞յք: Նրանք առավել ևս ափսոս էին: Նրանց չէին կարողանում կիսել: Ինչ էլ սազում էին նրանք իրենց փոքր հարեմների համար:

Իսկական խելագարություն էին ապրում բոլորը, խուժելով այս ավարի վրա: Խորտակված նավի ապրանք էր (ապրանքի էժանությունը բնորոշող թուրքական արտահայտություն): Ով ձեռքը երկարեր՝ նրանն էր: Կա՞ արդյոք ավելի մեծ ողբերգություն որևէ ազգի համար: Կարո՞ղ է պատահել, որ այս ամենից հետո ժողովուրդը չունենա վրեժխնդրության զգացմունք: Այն էլ հավիտյանս: Իրականում, միշտ էլ ասում եմ, որ միայն ներողությունը չի բավականացնի: Շատ ավելին, շատ ավելին է անհրաժեշտ: Անգամ այն, ինչ կարողանում ենք անել: Ինչ-որ մեր ձեռքից գալիս է: Եթե պետք է, մեր գլխի վրա պիտի պահենք: Սակայն նախ մեզ դնենք նրանց տեղը: Մենք դա երբեք



Սուլեյման Ասքերի, «Թեշքիլաթը Մախսուսայի» առաջին ղեկավարը



չապրեցինք, չենք իմանում, մենք քոչվոր ցեղ էինք, մենք չենք իմանում, թե ի՞նչ է նշանակում 3000 տարի նույն տեղում ապրել: Ահա սա է մեր խնդիրը: Ամեն ինչ կվերջանա այն ժամանակ, երբ այս բանը հասկանանք, այսինքն երբ կարողանանք հասկանալ, թե ի՞նչ է նշանակում Արարատին հեռվից նայելը մի ժողովրդի համար, որը սիրում է նրան պաշտամունքի աստիճան, հասկանալ այս հողերից բացի ուրիշ հայրենիք չիմացող մի ազգի ապրումները, որ նա ունեցավ իր հողերից վտարվելու արդյունքում:

Իրականում, մոտ 500 տարի անցնելուց հետո արդեն կարող ենք դա հասկանալ: Օրինակ, պատկերացրեք, որ ձեզ ազգովի քշել են Ստամբուլից և դուրս սփռվել եք աշխարհի չորս կողմերում: Այլևս գոյություն չունենա ոչ Բոսֆորի հիասքանչ տեսարանը, ոչ Բեբեք, ոչ Էմիրգյան, ոչ Թաքսիմ, Կադըքյոյ, Բեշիկթաշ, Ուսկյուդար թաղամասերը: Այլևս միայն ձեր երազներում կարող եք Բոսֆորի երկու ափը շրջագայող նավերը նստել ու ճայերին հաց գցել: Իշխանաց կղզիները, Աղջկա աշտարակը, Բոսֆորի դեմ նստելով օղի խմելը, Էմինյոնի հրապարակում աղավնիներին կերակրած օրերը, Փակ շուկան, Սուլթան Ահմեդի մզկիթը, Թոփկապու պալատը, Մեճիդիեքյոյում ձեր հիմնած առաջին աշխատատեղը: Ակսարայում ձեր առաջին տունը, ուր բնակվեցինք, այն զբոսայգին, ուր ձեր երեխաներին զբոսնելու էիք տանում, ձեր դպրոցը, Չամլըջայի բարձունքը, որտեղ առաջին անգամ ձեր սիրած աղջկա ձեռքն էիք բռնել. այս ամենը այլևս չկա: Ստամբուլը չկա: Եվ դուք, ձեր այս հիշողություններով հանդերձ, ան-

վերադարձ, աշխարհի մյուս ծայրն եք մեկնում, իսկ ձեր սիրտը այստեղ է մնում, ձեր սիրած աղջիկը մի ուրիշի յարն է դառնում, մտածում եք, լացում և լացում ու այս ցավով և կարոտով եք մեռնում: Այս բանը մտածեք մի անգամ, զգացեք: Երբ որ զգաք, ահա այն ժամանակ ասելու եք՝ «վերցրեք, ամեն ինչ ձերը լինի, որովհետև դուք ավելի շատ եք դրան արժանի, քան մենք», սակայն երբ դուք այդ բանը ասեք, նրանք չեն ասելու՝ «այո, դուք չքվեք, ամեն ինչ մերը պիտի լինի», երբ դուք այդ բանը ասեք, նրանք էլ ասելու են՝ «ոչ, մի գնացեք, բոլորս միասին ապրենք խաղաղության մեջ»: Միշտ ասել եմ, խնդիրը միայն ցեղասպանության մեջ չէ, այլ հայրենիքի հողերը կորցնելու ցավն է: Եվ, բարեկամներ, այս վերքը ոչ մի կերպ չի կարելի ապաքինել:

Այո, ես ներողություն եմ խնդրում, այն էլ մինչև հոգու խորքը ներողություն եմ խնդրում: Որպես քոչվոր՝ Կովկասից դեպի այս հողերը եկած և նրանց գյուղերում բնակված, նրանց գնալու վերաբերյալ լուր մնացած, նրանց ապրանքներին տիրացած իմ նախնիների համար: Սարից իջնելով ձորում ապրողին քշած լինելու համար: (Թուրքական արտահայտություն, որը օգտագործում են նորեկների նկատմամբ): Այն բանի համար, որ նրանց մեկնելուց հետո այս հողերը իրենց հոգին կորցրեցին և գնալով ավելի անբերրի դարձան: Իրականում՝ ճանաչելու համար բավականին ջանք չգործադրելու համար և այս տարածաշրջանի վրա մեր տնկած թույլ և անարմատ մշակույթի համար: Նրանց եկեղեցիները պայթեցրած, վանքերը քանդած լինելու համար նրանցից մնացած ամեն մի հետք ջնջել փորձելու համար, նրանցից մնացած գյուղ, գյուղաքաղաք, քաղաք, լեռ, գետ, ձոր, գետակների անգամ անունների արմատը չիմանալու, մեր լեզվի մեջ թափանցած հայկական բառերից, մեր մշակույթի մեջ տեղ գտած հայկական ճաշերից, հայկական սովորույթներից տեղյակ չլինելու համար, այս հողերին այսքան օտար լինելու համար, երկու բառ հայերեն, քրդերեն, հունարեն չիմանալու, բայց նրանց՝ իմ լեզուն իմանալու համար ամաչում եմ: Ամաչում եմ, որ այս պահին Թուրքիայում ոչ մի հայկական գյուղ գոյություն չունի (Վակըֆլը գյուղը հաշվից դուրս է, քանի որ մինչև 1939 թ Թուրքիո սահմանների մեջ չէր գտնվում): Երբ այսօր Եգիպտոսի բնակչության 10 տոկոսը քրիստոնյա է, իսկ սա նշանակում է 7,5 միլիոն մարդ, Սիրիայում նորից 10 տոկոսը քրիստոնյա է, սա էլ 2 միլիոն մարդ է անում, այս երկրում քրիստոնյաների համամասնության 0,01 լինելու և ամեն օր քրիստոնյաներին հեռացնելու փորձերի համար ներողություն եմ խնդրում:

Ահա, Անատոլիայում մի ուրվական է պտտվում և դա ցեղասպանության ենթարկված անմեղների ուրվականն է, Անատոլիայի անձայն մեծամասնության ճիչն է դա: Նրանք միայն Հայաստանում ապրող հայերի նախնիները չեն: Հույնը, քուրդը, ասորին, կելդանին, նաստորին, եզիդին, կըզըլբաշը՝ նրանք բոլորը այս հողի մարդիկ էին, նրանք են իրականում Անատոլիան: Եվ ես այս հոգիների հանգստության համար ծունկի եմ գալիս: Ներողություն եմ խնդրում, որ այս հողերի վրայի անեծքը վերանա, ներողություն եմ խնդրում, որ այլևս այս հողերի վրա անդորրություն իջնի և խաղաղություն տիրի: Դեռ ներողություն խնդրելով էլ չեմ բավարարվում, այսօր աշխարհի չորս կողմերում ցրված, սակայն Անատոլիայից բացի ուրիշ հայրենիք չունեցող Անատոլիայի հարազատ զավակներին՝ հայերին, հույներին, ասորիներին իմ գիրկն եմ բացում և նրանց հրավիրում եմ իրենց հայրենիք: «Համեցեք եկեք,- ասում եմ,- բարի եկաք ձեր հայրենիքը, հետ վերադարձեք այս դատարկ, անբերրի, անպտղաբեր, անիծված, ուրվականներով բնակեցված հողերի վրա, որպեսզի այս հողերի արյունն ու հոգին էլ հետ վերադառնան, ոգին հետ վերադառնա»: Այս բանը ես անում եմ հանուն մարդասիրության: Սա իմ ճիտիս պարտքն է: Որովհետև ներողություն խնդրելը քիչ է: Ավելին է հարկավոր:

**Տոլգա Էրեն**

*Կարճ ասած, ինչպե՞ս կարող ենք պատմությունը թողնել պատմաբաններին: Աթաթյուրքը Ադանայում մի բանախոսության ընթացքում ինչո՞ւ էր ասել «հայերը ոչ մի իրավունք չունեն այս հայրենիքում»:*

*Ինչպե՞ս կարող են այս հողերը տանել այսքան սուտ: Մի տեղից էլ պոռթկալու է, չէ՞: Դուք կարո՞ղ եք իրականությունը սքողել: Որքա՞ն ժամանակ կարող է ապրել մի երկիր, որը հիմնված է ստի վրա, ինչպե՞ս կարող է երկիրը իր գոյությունը շարունակել, հիմնված լինելով մեծագույն անիրավության վրա: Եթե չլինի այս մեղքերի թողության խնդրանքը, ինչպե՞ս կարող է այս երկիրը մաքրվել, շիտակ ուղի գտնել: Ինչպե՞ս կարելի է այս խելագարությունից, մտային այս հիվանդությունից ձերբազատվել: Պատասխանեմ՝ «չի՛ կարելի»: Այսպիսի մի խոսք կա՝ «երբ սկսում ես ինքդ քեզ խաբել, բացում ես խելագարության դռները»:*

**Երանոս Գասպարյանը** ծնվել է Ախուրյանի շրջանի Ոսկեհասկ գյուղում: Երկար տարիներ աշխատել է Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Դասավանդել է անգլերեն լեզու եւ գրականություն: Այժմ բուժման նպատակով բնակվում է Նիդեռլանդներում: Պապերը Տարոնի աշխարհից են:

## ԵՐԱԶ

Երբ Տարոն հասանք, դեռ մութ ու լույս էր,
Երկինքն ու երկիր փարվել էին իրար,
Սիրտս ճչում էր, ուզում էր ասել.
- Բարի առավոտ, իմ Տարոն աշխարհ…

Պապերիս շունչը ողջունում էր ինձ,
Ամենուր նրանց աղոթքն էի լսում,
Սուրբ Կարապետի զանգերը հեռվից
Ասես ինձ բարի գալուստ էին ասում:

Անդոկա սարից մի մեղմիկ քամի
Գալիս, շոյում էր շուրթերս պապակ.
- Հե՜յ գիտի Էրգիր, անգութ թշնամին
Քանդեց, ավերեց քեզ հիմնահատակ:

Ոչ մի հետք անգամ էլ չի մնացել,
Անհետ կորել են գմբեթ ու խաչքար,
Թշնամու սրից դու աչք չես բացել,
Բզկտել են քեզ, Հայաստան աշխարհ:

Եկել եմ հիմա կարոտի կանչով,
Կանգնել եմ շվար ու մտամոլոր,
Որտեղից, հանկարծ, եւ չգիտեմ ով
Ուղեկցում է ինձ Երիշտերի ձոր:

Հառաչանքներ եմ լսում այնտեղից,
Խո՜ւլ տնքոցներ են հասնում ամենուր.
Տասնյակ հազարներ դաշտի գյուղերից
Այրեցին այստեղ, անդունդում այս խոր:

Ասում են՝ այստեղ, գիշերվա կեսին,
Ուրվականներ են շրջում չորսբոլոր,
Անգամ քրդերը գիտեն այդ մասին,
Կանայք, մանուկներ բոլոտն ու տկլոր:

Այնքան դալուկ են դեմքերը նրանց,
Այնքան կարոտ կա նրանց աչքերում,
Այս փուչ աշխարհից լքված, մոռացված,
Արդարություն են գուցե թե փնտրում:

Բայց ով է այսօր լսում նման բան,
Բոլորը շուն ու կատու են խաղում,
Ոչ ոք չի ուզում խոսել բարձրաձայն,
Բոլորն էլ չար են այս մեծ աշխարհում:

Հետո, անծանոթ իմ ուղեկցորդը
Առաջնորդում է ինձ դեպի Սեւ սար,
Այնտեղ, ուր պապիս եղբորն են մորթել,
Ուր ոչ մի թուրք լամուկ էլ չկար:

Կանգնել եմ, ահա, Սեւ սարի լանջին
Ու Մշո դաշտի գյուղերն եմ դիտում,
Ոչ ոք եւ ոչ մի գյուղ չի ճանաչի,
Էլ ինչ Ալվարինջ, էլ ինչ Քրդագոմ…

Մի քանի խարխուլ, ավերակ պատեր
Ուրվականի պես երկինք են ցցված՝
Այնքան անպաշտպան եւ այնքան անտեր,
Ասես բողոք են կարդում առ Աստված:

Իջնում ենք հիմա դեպի Մեղրագետ,
Ուր հարս ու աղջիկ ամառվա տապին
Լողանում էին անմեղ, մորեմերկ,
Վարդավառ խաղում սուրբ գետի ափին:

Բայց գետը այսօր լուռ է ու տխուր,
Ասես չեն հոսում ջրերը նրա,
Սրտում հազար ցավ ու հազար մրմուռ,
Անեծք կա բափված այս հողի վրա…

Ծունը տիրոջը էլ չի ճանաչում,
Փոխվել է այսօր ինչ կար ու չկար,
Ծմլակա շներն այդպես չէին հաչում,
Էլ ինչ Մշո դաշտ, ինչ Տարոն աշխարհ…

Իսկ Վանա ծովը չեմ ուզում տեսնել,
Չեմ ուզում գնալ կղզին Աղթամար,
Ուր կանգ է առել պատմությունը մեր,
Ուր վանքի պատին կա թուրքի նկար:

Տխուր է այսօր Տարոն աշխարհը,
Հավքերը էլ չեն երգում հայերեն,
Ուր ոտք դրեցի՝ տատասկ ու քար է,
Ջրերը էլ չեն հոսում հայերեն:

Չեմ կարող այսպես ես մնալ երկար,
Տեր իմ, արթնացրու ինձ այս թմբիրից,
Իմ ուղեկցորդն էլ՝ շփոթ ու շվար,
Աղաչում եմ, Տեր, փրկի՛ր այս ցավից…

***Երիշտեր***- գյուղ Տարոնի գավառում, որը հայտնի է իր ջրով, ուր 1915-ի ամռանը կոտորեցին դաշտի գյուղերից բազմաթիվ հայերի:

***Ալվարինջ***, ***Քրդագոմ*** - գյուղեր Տարոնի գավառում:

***Ծմլակ*** - գյուղ Տարոնի գավառում, հայտնի իր շներով. երբ թուրք կամ քուրդ էր գյուղ մտնում, բոլոր շները սկսում էին միաժամանակ հաչել… Մշո դաշտում հաճախ շատախոս մարդկանց անվանում էին ծմլակա շուն…

# Յոզղատի հայոց տեղահանության և կոտորածների դատական նիստերի արձանագրությունները

Մելինե Անումյան

*Յոզղատի դատավարությունը 18 նիստի շրջանակներում իրականացվել է 1919 թ. փետրվարի 5-ից մինչև ապրիլի 7-ը: Մեղադրյալները սկզբնապես եղել են 3 հոգի՝ Յոզղատի մութասարիֆի տեղակալ, Բողազլյանի կայմակամ Մեհմեդ Քեմալը, Յոզղատի ժանդարմերիայի պետ, մայոր Մեհմեդ Թևֆիկը և պետական պաշտոնյա Ֆիազ Ալին: 17-րդ նիստում վերջինիս գործն առանձնացվել է՝ հետագայում քննվելու նպատակով, բայց մնացել է թղթի վրա: Դատավճիռը կայացվել է ապրիլի 8-ին, համաձայն որի՝ Քեմալը դատապարտվել է մահվան, իսկ Թևֆիկը՝ 15 տարվա տաժանակիր աքսորի: Յոզղատի դատական նիստերը չեն արձանագրվել «Թաքվիմ-ի Վաքայի» պետական պաշտոնաթերթի կողմից. այստեղ տպագրվել է միայն դատավճիռը, սակայն 1912-1921 թթ. Ստամբուլում հրատարակվող «Ալեմդար» օրաթերթն իր ընթերցողներին մանրամասն տեղեկություններ է հաղորդել այս դատավարության մասին: Ստորև թարգմանաբար ներկայացնում ենք Յոզղատի հայության կոտորածներին վերաբերող դատաքննության երկու նիստ, որ արձանագրվել է «Ալեմդարի» կողմից:*



علمدار

بولشه ویك مجادله سی

### Տեղահանության դատավարությունը սկսվեց

Երեկ ժամը մեկն անց հիսունհինգից սկսած շարունակվեց Յոզղատի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատարանի կազմը բաղկացած էր ներքոհիշյալ անձանցից. նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ Զեքի Մուստաֆա փաշա, Ալի Նազըմ փաշա և գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ: Դատախազի պաշտոնում հանդես էին գալիս Հարալամբո էֆենդին և նրա տեղակալը: Դատարանի կազմի՝ դատական դահլիճ մտնելուց հետո նախագահի հրամանով Թևֆիկ և Ֆիազ բեյերը դահլիճից դուրս եկան: Ներս բերվեց Քեմալ բեյը, և սկսվեց հարցաքննությունը.

**Նախագահ** - Ի՞նչ եղանակով եք տեղահանության վերաբերյալ հրաման ստացել՝ բանավո՞ր, թե՞ գրավոր, անուղղակի՞ կերպով, թե՞ ուղղակի:

**Քեմալ բեյ** - Տեղահանության ընթացքում եղել եմ Բողազլյանի կայմակամը: Հայերին տեղահանելու հրաման եմ ստացել, որն էլ հաղորդել եմ ժանդարմերիայի հրամանատարին: Կազայի կենտրոնում տեղահանությունը կատարվում էր ժանդարմերիայի հրամանատարի միջոցով, իսկ կազայից դուրս բնակվողները ու-



Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյ

դարկվում էին նահիեի ղեկավարի կողմից:

**Նախագահ** - Ո՞ւմ էր վերաբերում տեղահանությունը: Արդյո՞ք բացառություններ արվում էին:

**Քեմալ բեյ** - Տեղահանությունը վերաբերում էր հայերին: Բացառությունների հետ կապված բազմաթիվ հրամաններ եմ ստացել: Չեմ կարողանում մտաբերել ամեն բան՝ դրանց տարաբնույթ լինելու պատճառով: Բացառիկ դեպք էին համարվում բողոքականները և զինվորական տարիքում գտնվողները: Տեղահանության հրամանը հասել է հուլիսի 21-ին, սակայն չեմ հիշում, թե որ օրվանից է սկսել գործադրվել: Օգոստոսի 6-ին Յոզղատ էի գնացել: Կարծեմ՝ վերադարձիս արդեն ավարտվել էր:

**Նախագահ** - Քանի՞ ընտանիքից և առավելագույնը քանի՞ բնակչից էին բաղկացած լինում տեղահանվածների քարավանները:

**Քեմալ բեյ** - Չգիտեմ, թե քարավանները քանի հոգուց են բաղկացած եղել: Ցուցակները կազմվում էին ժանդարմի կողմից:

**Նախագահ** - Պետք է, որ իմանաք, թե քանի ընտանիք է ուղարկվել:

**Քեմալ բեյ** - Ժանդարմն էր կազմում: Ձեր խոնարհ ծառան տեղյակ չէ:

**Նախագահ** - Ո՞ր ճանապարհներով էիք ուղարկում: Այսինքն՝ ոստիկանին հրահանգում էի՞ք, թե սրանց տվյալ ճանապարհով տվյալ վայրը հասցրեք:

**Քեմալ բեյ** - Այդ հարցը կարգավորվում էր կառավարության կողմից, իսկ ժանդարմի կողմից՝ հսկվում:

**Նախագահ** - Ձեզ էր վստահված ամբողջ բնակչության հողատարածքը, տունը և պատիվը՝ առանց սեռի և հավատքի խտրականության: Այս ուղղությամբ նախազգուշական ի՞նչ միջոցներ ձեռնարկեցիք տեղահանության ընթացքում:

**Քեմալ բեյ** - Նրանց, ամենայն հավանականությամբ, անվտանգ կերպով են տեղափոխել, էֆենդի:

**Նախագահ** - Տեղահանության գործին մասնակից դարձրե՞լ եք յոզղատցի որոշ անձանց: Եվ եթե դարձրել եք՝ առանձին-առանձի՞ն, թե՞ միասին:

**Քեմալ բեյ** - Այո’, փաշա’, մի անգամ 3 հոգու ընդգրկել եմ: Պատճառն էլ բռնություններից զերծ պահելն էր:

**Դատախազ** - Աբդուլլահ անունը կրող մեկին ճանաչո՞ւմ եք:

**Քեմալ բեյ** - Չերքակալվածներից է, չէ՞, ճանաչում եմ:

**Դատախազ** - Քարավանը հսկողներից է եղել:

**Քեմալ բեյ** - Այո:

**Նախագահ** - Առանձին-առանձի՞ն, թե՞ միասին են հսկել:

**Քեմալ բեյ** - Միասին են ուղարկվել, էֆենդի’:

**Դատախազ** - Նա ինչո՞ւ է բնակչության մեջ խառնակչություններ հրահրել, այն դեպքում, երբ կառավարությունը նրան էր վստահել կարգուկանոնը պահպանելու խնդիրը:

**Քեմալ բեյ** - Անտեղի երևույթների տեղիք չտալու համար:

**Դատախազ** - Պետական պաշտոնյաների առկայության պայմաններում նաև նրանց ուղարկե՞լը հատուկ նպատակ էր հետապնդում:

**Քեմալ բեյ** - Ոչ մի հատուկ նպատակ չկար:

**Նախագահ** - Դե լավ, ասացիք, որ (քարավանների) պաշտ-



պանությունը կատարվում էր ժանդարմերիայի հրամանատարի միջոցով:

**Քեմալ բեյ** - Բավականաչափ ժամանակ է անցել. չեմ կարողանում մտաբերել, թե ի՞նչ անհրաժեշտության հիման վրա էր:

**Դատախազ** - Երբ Քեմալ բեյը Յոզղատում էր գտնվում, 331 թ. օգոստոսի 16-ի ամսաթվով մի նամակ է կնքում և ծրարի վրա նշում. «Հույժ կարևոր է: Տվյալ նամակը պետք է արձանագրվի, ժամն ու րոպեն նշվի Բաքքալ գյուղում՝ Բաքըրջը Մահմուդի և նրա ընկերների կողմից, ապա՝ պետք է բացվի և համատեղ ընթերցվի: Անհրաժեշտ է գործել (նամակում) ընդգծվող հայրենասիրական մղումներին համապատասխան»: Նամակում հրահանգվում էր հայերի գույքը պահել Օսման փաշա դերվիշների մենաստանում և դուռը կնքել:

**Քեմալ բեյ** - Ձեր խոնարհ ծառայի ձեռագիրը չէ: Բնականաբար, նման բան չէի կարող գրած լինել:

**Նախագահ** - Իսկ վրայի կնի՞քը:

**Քեմալ բեյ** - Իմը չէ: Չկարողացա նույնիսկ հասկանալ, թե ո՞ր վարչության կնիքն է:

**Նախագահ** - Ի՞նչ կարող եք այս կապակցությամբ ասել՝ ի պաշտպանություն Ձեզ:

**Քեմալ բեյ** - Իմ կողմից գրված փաստաթղթում, ընդհակառակը, դրանք պահպանելու հրահանգ եմ տվել:

**Նախագահ** - Ժանդարմերիայի սերժանտ Շյուքրուին Ձեր ստորագրությամբ մի փաստաթուղթ է ուղարկվել, որում գրել եք, թե նեցուկ լինենն պատասխանատու պաշտոնյաներին: Նման իրավասություն ունեի՞ք:

**Քեմալ բեյ** - Չեմ կարողանում հիշել, թե ի՞նչ անհրաժեշտության հիման վրա է եղել:

**Նախագահ** - Այդ մարդիկ Լքված գույքի հանձնաժողովի հետ որևէ առնչություն ունեցե՞լ են:

**Քեմալ բեյ** - Հավանաբար:

**Նախագահ** - Ծանոթացե՞լ եք այդ անձանց բնութագրին:

**Քեմալ բեյ** - Ո՛չ:

**Նախագահ** - Ինչպե՞ս եք պաշտոնում նշանակել այն անձանց, որոնց բնութագրերին չեք ծանոթացել:

**Քեմալ բեյ** - Հավանաբար նրանց համար երաշխավորել էին:

**Նախագահ** - Նախաքննության ընթացքում Ձեր կողմից տրված ցուցմունքների համաձայն՝ տեղահանությանը վերաբերող փաստաթղթերի մի մասը կարդալուց հետո այրելու հրաման եք տվել, իսկ մնացածը որտե՞ղ է:

**Քեմալ բեյ** - Բոլորն էլ պահպանվել են, էֆենդի: Ճիշտն ասած, այդ օրը շատ հոգնած էի, (ճանապարհին) ութսուն հոգով մի վագոնում էինք: Եվ քանի որ քունս տանում էր, չգիտեմ՝ ինչպես եմ ցուցմունքներ տվել:

**Դատախազ** - Ես՝ որպես հետաքննիչ հանձնաժողովի անդամ, հայտնում եմ, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը. 3-4 ժամ մտածել է, հետո՝ գրել:

**Քեմալ բեյ** - Դուք այնտեղ չէիք, էֆենդի: Իմիջիայլոց, կառավարությունը տեղահանության հրամանը նույն կերպ էր հայտնել Օսմանյան կայսրության բոլոր կասաբաներին և վիլայեթներին: Եթե նման հրահանգ ստացված լիներ, մյուս շրջաններում ևս կարելի էր այդ ուղղությամբ հետաքննություն կատարել, սակայն նման հրահանգ ո՛չ եղել է, ո՛չ էլ ստացել եմ:

**Նախագահ** - Յոզղատի մյուֆթին Ձեզ խրատել է, իսկ դուք նրան ասել եք. «Դու կառավարությունից բարեգո՞ւթ ես»:

**Քեմալ բեյ** - Դա եղել է ոչ թե Յոզղատի, այլ Բողազլյանի մյուֆթին: Մենք միասին էինք զինկոմիսարիատում: Նման բան չի եղել, այնտեղ մեզնից բացի այլ անձինք էլ էին ներկա:

**Նախագահ** - Ի՞նչ եք արել տեղահանության համար:

**Քեմալ բեյ** - Ոչինչ էլ չեմ արել:

**Նախագահ** (դատական կատարածուին) - Քեմալ բեյին տարե՛ք, թող գա Թևֆիկ բեյը:

**Նախագահ** (Թևֆիկ բեյին) - Տեղահանությանը ենթակա անձանց տարագրելու հանգամանքների վերաբերյալ որևէ հրաման ստացե՞լ ես, և եթե ստացել ես, բանավո՞ր է եղել, թե՞ գրավոր:

**Թևֆիկ բեյ** - Տեղահանությանը վերաբերող հրամանը տրվել է կառավարության կողմից, դրա մասին ստացվել է նաև տեղեկագիր: Մի մասին բանավոր եմ հայտնել, մյուսին՝ գրավոր ծանուցագրի հիման վրա: Հրամանները ստացել եմ գրավոր:

**Նախագահ** - Տեղահանվածներին առանձի՞ն քարավաններով էիք ուղարկում, թե՞ միասին: Անվտանգության համար քարավաններին քանի՞ ժանդարմ էիք կցում: Դուք նրանց հե՞տ եք եղել: Ի՞նչ եք ձեռնարկել սննդի ուղղությամբ: Ի՞նչ քանակությամբ իրեր էիք թույլ տալիս, որ վերցնեն իրենց հետ:

**Թևֆիկ բեյ** - Ուղարկել եմ քարավան առ քարավան, անվտանգության համար ուղեկցորդ եմ նշանակել՝ քանակին համապատասխան: Ուղեկցել եմ Սվաս գնացող քարավանը: Կենտրոնից 4 ժամ հեռանալուց հետո մութասարիֆ Ջեմալ բեյից վերադարձի և քարավանը Ջևադ բեյին հանձնելու հրահանգ եմ ստացել, որի հի-



ման վրա կես ճանապարհից վերադարձել եմ: Ապահովել եմ նրանց անվտանգությունը՝ բոլոր տեսանկյուններից:

**Նախագահ** - Քեմալ բեյն ասում է, թե տեղահանության ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրով զբաղվում էր ժանդարմերիայի հրամանատարը:

**Թևֆիկ բեյ** - Ինչպե՞ս: Եթե կառավարությունը միջոցներ չէր տրամադրում, ես ի՞նչ կարող էի ձեռնարկել, իմ գրպանի՞ց միջոցներ հատկացնեի: Այդ մասին պետք է կառավարությունը հոգար:

**Նախագահ** - Դուք պետական պաշտոնյա՞ էիք համարվում:

**Թևֆիկ բեյ** - Իհարկե, պետական պաշտոնյա էի:

**Նախագահ** - Տեղյակ չէի՞ք, որ բնակչության շարքերում չունևորներ կային:

**Թևֆիկ բեյ** - Ի՞նչ անեի, էֆենդի: Մարդկային պարտքս կատարելով՝ ստիպված էի նրանց կերակրել, այդպես էլ վարվեցի:

**Նախագահ** - Եթե մարդկային պարտքը կատարելու փոխարեն Ձեր պաշտոնական պարտականությունները կատարեիք, ավելի ճիշտ չէ՞ր լինի:

**Թևֆիկ բեյ** - Մտքովս չանցավ դրամ պահանջել:

**Նախագահ** - Ճանապարհին քարավանը լեյտենանտին հանձնելիս վկայագիր վերցրե՞լ եք:

**Թևֆիկ բեյ** - Չեմ մտաբերում, թերևս վերցրել եմ:

**Նախագահ** - Ձեր կողմից ուղարկված քարավանում որևէ դեպք արձանագրվե՞լ է:

**Թևֆիկ բեյ** - Ո՛չ, էֆենդի, չի արձանագրվել:

Այս ցուցմունքները տալուց հետո Թևֆիկ բեյը դուրս տարվեց, բերվեց Ֆիազ բեյը:

**Նախագահ** (Ֆիազ բեյին) - Յոզղատում վակըֆային վարչությունից բացի այլ ծառայություն գործե՞լ է:

**Ֆիազ բեյ** - Ո՛չ:

**Նախագահ** - Վկայություն են տվել, ըստ որի դու նախագահել ես Յոզղատին վերաբերող գործերը, ի՞նչ բնույթի էին դրանք:

**Ֆիազ բեյ** - Ձեր խոնարհ ծառան այդ կազմակերպության հետ առնչություն չի ունեցել:

**Նախագահ** - Կարո՞ղ ես մատնանշել այդ ցուցմունքը հաստատող վկաներ:

**Ֆիազ բեյ** - Այո՛, էֆենդի: (Մի քանի անձանց անուններ է տալիս):

**Նախագահ** - Վկայություն են տվել, ըստ որի այն մատանին, որն այժմ կրում ես, ձեռք ես բերել տեղահանության ժամանակ:

**Ֆիազ բեյ** - Այն գնել եմ աճուրդում 2600 ղրուշով: Դա հաստատող վկաներ ևս կարող եմ ներկայացնել:

**Նախագահ** - Ընդգրկված եղե՞լ ես Լքված գույքի հանձնաժողովի կազմում:

**Ֆիազ բեյ** - Այո՛, զբաղվել եմ կատարման խնդիրներով:

Այդ պահին բերվեցին նաև Թևֆիկ և Քեմալ բեյերը:

**Նախագահ** (Քեմալ բեյին) - Տեղահանության խնդիրը վերաբերում էր ժանդարմերիայի հրամանատարությանը: Թևֆիկ բեյը հայտնեց, թե վկայագիր է վերցրել:

**Քեմալ բեյ** - Ո՛չ, ես տալիս էի ստացված հրամանը, իսկ նրանք՝ կատարում: (Ընթերցվեցին հարցաքննության ընթացքում Քեմալ բեյին տրված այն հարցերը, որոնց նա պատասխանել էր առանձին):

Դատախազը, երկու կողմերի ձևավորմանը վերաբերող քննարկումները ներկայացնելով, հայտնեց, որ զինվորական քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ քաղհայցվորները չեն կարող դատարանում ներկա գտնվել: Քաղհայցվորը, խնդիրը երկար քննարկելուց հետո, փորձեց հիմնավորել բոլոր դեպքերում իր ներկայության անհրաժեշտությունը և կոչ արեց չխախտել նախկին զինվորական ատյանի որոշումը:

Այնժամ դատարանի կազմը խնդիրը քննարկելու նպատակով հեռացավ խորհրդակցական սենյակ: Մեկ ժամ տասը րոպե տևողությամբ քննարկումից հետո դատարանի կազմը վերադարձավ դահլիճ: Ընդունված վճռի կարճ բովանդակությունը կայանում էր հետևյալում. բազմաթիվ դեպքեր

են գրանցվել, երբ որոշում է ընդունվել արգելել ռազմական ատյանում քաղհայցվորի ներկայությունը:

Քաղհայցվոր Լևոն Ռեմզի էֆենդին լքեց դահլիճը:

Այնուհետև կրկին դատարան կանչվեց Օժենի անվամբ վկան: Նախագահը խնդրեց կրկնել նախկին ռազմական ատյանին տրված ցուցմունքները: Օժենին, նախքան իր վկայությունները կրկնելը, հայտարարեց. «Այս անգամ ավելի մանրամասն եմ ներկայացնելու, քանի որ մյուս դատարանում արդարադատություն չէի կարողանում տեսնել»: Վկան ցուցմունքներ տվեց առ այն, որ առավոտյան, երբ ոստիկանը վկայություն տալու համար դատարանի ծանուցագիր էր բերել, չափազանց գեղեցիկ է համարել իր լեզուն և հանդես եկել մի մահմեդականի տալու առաջարկով:

Դատախազը նրան հարցրեց վերոհիշյալ ոստիկանի համարը: Պարզվեց, որ 2021 համարովն է եղել:

Ֆիազ բեյը Օժենիի ցուցմունքը բացարձակ զրպարտություն համարելով՝ հանդես եկավ իր նախկին ցուցմունքն ընթերցելու պահանջով: Այն ընթերցվեց:

**Նախագահ** (Թևֆիկ բեյին) - Տեղահանվածների ձեռքերը կապո՞ւմ էիք:

**Թևֆիկ բեյ** - Այո՛, Ջեմալ բեյի օրոք ապահովության համար մինչև կասաբայից դուրս գալը կապած էինք տանում:

**Դատախազ** - Ստիպված եմ հերքել Ջեմալ բեյի պես պատվարժան պաշտոնյային զրպարտող մեղադրանքը:

Այնուհետև ընթերցվեց Մարի անունը կրող մի կնոջ՝ Կայսերիի դատախազության կողմից տարված հետաքննության ընթացքում տված ցուցմունքը, որն ուղղված էր մեղադրյալների դեմ: Նիստի ավարտին Քեմալ, Թևֆիկ և Ֆիազ բեյերը հերքեցին վկայությունը՝ նամակի բովանդակությունը լրիվ զրպարտություն համարելով:

Քանի որ արդեն ժամը 17-ն անց էր 30 րոպե, որոշվեց դատը շարունակել առաջիկա չորեքշաբթի օրը՝ ժամը 10-ին: Դատարանի կազմը լքեց դահլիճը:

*25-ը մարտի 1919 թ., «Ալեմդար» օրաթերթ*

### Տեղահանության և կոտորածների դատավարությունը

Երեկ կեսօրից հետո ժամը 14:25-ից սկսած Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակվեց Յոզղատի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատախազի պաշտոնում էր տեղակալներից Քուդրեթուլլահ բեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց հետո Ֆիազ և Թևֆիկ բեյերը դուրս տարվեցին. սկսվեց Քեմալ բեյի առանձին հարցաքննությունը:

**Նախագահ** - Ո՞վ էր Յոզղատի բաժանմունքի ղեկավարը:

**Քեմալ բեյ** - Ձեր խոնարհ ծառայի օրոք Մուստաֆա և Սելամի բեյերն էին:

**Նախագահ** - Ճի՛շտն ասա, հայերին բնաջնջելու մտադրությունները անձնակա՞ն, թե՞ մեկ այլ դրդապատճառ ունեին:

**Քեմալ բեյ** - Քա՛վ լիցի, փաշա, հայերին բնաջնջելու հրահանգ երբեք չեմ տվել:

**Նախագահ** - Մի՞թե Յոզղատը գործողությունների թատերաբեմից դուրս էր:

**Քեմալ բեյ** - Ո՛չ, էֆենդի:

**Նախագահ** - Ինչո՞ւ մի խումբ փախստականներ բռնագաղթեցվեցին առանց փոխադրման միջոցների, ծայրաստիճան չքավորության պայմաններում:

**Քեմալ բեյ** - Միջոցներ չկային, էֆենդի, ես կատարել եմ կառավարության կողմից ստացված հրամանը: Մահմեդական փախստականներն անգամ միևնույն պայմաններում էին:

**Նախագահ** - Ըստ Ձեզ, ոչ մի չարագործություն չի՞ եղել:

**Քեմալ բեյ** - Ո՛չ, ըստ իս՝ բացարձակապես չի եղել:

**Նախագահ** - Այդքան վկաների ցուցմունքները, նույնիսկ մութասարիֆ Ջեմալ բեյի՝ Ձեզ վերաբերող վկայությունը խաբեությո՞ւն է:

**Քեմալ բեյ** - Էֆենդի՛, վկաների բոլոր ցուցմունքներն էլ սուտ են: Մութասարիֆ Ջեմալ բեյն էլ, կարծեմ, ասում էր, որ լսել է, ոչ թե տեսել:

**Նախագահ** - Ջեմալ բեյը Ձեզնից նեղսրտելու առիթ երբևէ ունեցե՞լ է:

**Քեմալ բեյ** - Այո՛, էֆենդի: Մի արձանագրության խնդրի հետ կապված մեր միջև մի փոքր գժտություն եղավ: Նա մի բան էր առաջարկել, որը ես պետական խորհրդի որոշմանը հակասող գտա և արձանագրությունը չստորագրեցի:

Քեմալ բեյը դուրս եկավ, ներս բերվեց Թևֆիկ բեյը: Կրկին ընթերցվեց լուծարված ռազմական ատյանին նրա կողմից ներկայացված զեկուցագիրը, որում նկարագրվում էին հայ ավազակների կողմից կատարված մի շարք չարագործություններ:

**Նախագահ** - Ձեզ հրաման է

տրվել հայերին արմատախի՞լ անել: Ձեր զեկուցագրում նման բան էր գրված:

**Թևֆիկ բեյ** - Ո՛չ, էֆենդի, դա ոչ թե հայերին արմատախիլ անելու համար էր, այլ չարագործություններ կատարած ավազակներին պատժելու:

**Նախագահ** - Քանի՞ հոգի էին այդ ավազակները, ումի՞ց էին բաղկացած ավազակախմբերը, որքա՞ն եղավ ձեր կորուստը:

**Թևֆիկ բեյ** - Այդ ավազակները տարբեր թվաքանակով էին, մոտավորապես՝ 300-800 հոգի: Կազմված էին նահանգներում ապրող հայերից: Այդ ավազակները շարունակում են գոյություն ունենալ 330 (1914) թ.-ից առայսօր: Մեր ուժերը բավականին մեծաքանակ էին, քանի որ մեզ զորք էր տրամադրվել նաև մյուս կազաներից:

**Նախագահ** - Ձեր զեկուցագրում նշել էիք, թե չարագործությունների հեղինակ ավազակները նույնիսկ թնդանոթ են ունեցել: Դուք տեսե՞լ եք, թե ի՞նչ չափսի էր այն:

**Թևֆիկ բեյ** - Էֆենդի, զեկուցագրում նշված «թնդանոթը» թերևս վրիպակ է: Պետք է «զնդանացիր» գրվեր:

Թևֆիկ բեյը մի քանի հարցերի ևս պատասխանեց, որից հետո Քեմալ և Ֆիազ բեյերը նույնպես դահլիճ բերվեցին: Ճշմարտությունը բացահայտելու նպատակով դատարան կանչվեց անգլիահպատակ գնդապետ Մեհմեդ բեյը՝ վկայություն տալու համար: Անձնական տվյալները ներկայացնելուց հետո նրան դիմեցին Յոզղատի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող հարցերով: Վերոհիշյալի կողմից տրված ցուցմունքների շնորհիվ պարզվեց, որ ինքն անձամբ տեսել է, թե ինչպես են կացիններով և դաշույններով հայերին կոտորում, սակայն այդ պահին, ըստ նրա վկայության, մեղադրյալները ներկա չեն եղել: Այդ պահին Քեմալ բեյը որոշ առարկություններ հայտնեց Մեհմեդ բեյի վկայությունների հետ կապված: Մասնավորապես հայտնեց, թե բացարձակապես սխալ է տեղահանությունը փետրվարին իրականացված լինելու մասին ցուցմունքը: Այնուհետև, առաջին անգամ ի նպաստ մեղադրյալների ցուցմունք տալու նպատակով դատարան կանչվեց Սկյուտարի մութասարիֆ Մեհմեդ Ալի բեյը, որը երդվելուց հետո հանդես եկավ մի շարք տեղեկություններով: Վերոհիշյալը հայտնեց, որ թեև ինքը տեղահանությունից մեկ ու կես տարի հետո է մեծարգո նախագահության հետ Յոզղատ գնացել, սակայն երբեք չի լսել, որ Ֆիազ բեյը որևէ առնչություն ունեցած լիներ տեղահանությանը: Նա, ըստ վկայի ցուցմունքի, բարեխիղճ մարդ էր և չէր կարող նման բան անել, Ֆիազ բեյը երբեք հարբեցող չի եղել և չի հանդիսացել «Միություն և առաջադիմություն» կուսակցության համախոհներից: Այս ցուցմունքներից հետո նախագահը նրան հարցեր տվեց Քեմալ բեյի, ինչպես նաև տեղահանության իրականացման հանգամանքների վերաբերյալ: Մեհմեդ Ալի բեյը հայտնեց, թե լսել է, որ իրականում Քելլեր գյուղում գաղթականներից շատ քչերն են կոտորվել, սակայն դրան պաշտոնյաները և տեղի բնակչությունը չէին կարող մասնակցություն ունենալ, ծայրահեղ դեպքում դա կարող էր լինել կառավարության կողմից տրված գաղտնի հրամանի հիման վրա միայն: Այս ցուցմունքները տալուց հետո Մեհմեդ Ալի բեյը դուրս եկավ: Դահլիճ մտավ Անդրանիկը, որը հանդես եկավ մեղադրյալների դեմ ուղղված որոշ ցուցմունքներով, որից հետո Քեմալ բեյը ոտքի կանգնելով ասաց. «Մեծարգո փաշա, Ձեր խոնարհ ծառան բացատրություն պահանջելու շնորհիվ կապացուցի, որ մինչ այժմ վկայություն տալու նպատակով եկած հայերի խոսքերը ամբողջովին զրպարտություններ են և հորինված են»: Այս խոսքերից հետո Քեմալ բեյը մի քանի հարց տվեց Անդրանիկին, վերջինս տվեց հակընդդեմ պատասխաններ: Այնուհետև դատապաշտպան Սալահեդդին բեյը որոշ հարցեր տվեց հայերի քարավանների վերաբերյալ, որից հետո դատարան կանչվեց վկաներից Ազնիվը: Նրա վկայությունները ևս լրիվ ուղղված էին մեղադրյալների դեմ և առավել սուր բնույթ էին կրում: Վկաների ցուցմունքներից հետո մեղադրյալները աշխատեցին հերքել վկաների խոսքերը նախկինում արդեն իսկ արված որոշ հայտարարություններով և վկաների դեմ բացարկ հայտնեցին: Այնուհետև վկայության համար ներկայացավ Յոզղատի հաշվապահ Վեհբի բեյը: Վերջինիս հարցեր տվեցին նրա պաշտոնական պարտականությունների վերաբերյալ՝ նկատի ունենալով նրա՝ ժամանակին Լքված գույքի հանձնաժողովի անդամ լինելու հանգամանքը: Հաքի բեյը պատասխանեց՝ ներկայացնելով որոշ փաստաթղթեր: Դատապաշտպան Հյուսեին Համի բեյի պահանջի հիման վրա առերեսում կատարվեց նախապես հեռացված վկա Ազնիվի և Վեհիբի բեյի միջև: Ժամանակ չլինելու պատճառով նիստն ավարտվեց: Շարունակվելու է շաբաթ օրը:

*28-ը մարտի 1919 թ., «Ալեմդար» օրաթերթ*


201)

XIX ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ, 1909

hak"

ération

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՄԵԾ ՄԱՐԴԱՍՊԱՆԸ ԳԱՀԸՆԿԷՑ

Երբ ապրիլ 13-ին Պոլսոյ մէջ թիւրք հոգևորականութիւնը «շերիաթի» դրօշը պարզած կ'ըմբոստանար և սահմանադրութիւնը կ'ուզէր թլփատել, հետևեալ օրը Ատանայի մէջ թիւրք ամբոխը տարօրինակ կատաղով մը կ'սկսէր կոտորել հայերը, և ակնթարթի մէջ, ջարդը ընդհանրանալով, Կիլիկիոյ համատարած դաշտերը արիւնի ու հրդեհի ահաւոր տեսարանը կը ներկայացնէին: Այդ պտղաբեր դաշտերուն մէջ, ուր բնութիւնը կը վերակենդանանար իր բոլոր շքեղութիւնով, այրիացած գարուն մը սգապսակներ կը հիւսէր մարդկային կեանքերուն վրայ, որ երէկ կայրէին գեղեցիկ երազներու ու աշխատութեան կեանքը և որոնց վրայ այսօր անհրապոյր և դաւաճան բարբարոսութիւնը մահուան արիւնոտ պատանք մը կը նետէր: Կսկծեցնող հակադրութիւն: Բնութեան վերածնունդը մարդկային գերեզման մը կը գրկէր իր ծաղիկէ շղարշին տակ:

Թիւրք ամբոխը – որուն կ'ուզեն որ շատ բան ներենք կրօնի և մոլեռանդութեան ձեռքը իբր խաղալիք, և որ սակայն շարունակ մահուան ու աւերածութեան անձանձրոյթ արհեստաւոր մը եղած է – կուտայ մեզի հակադրութեան էն պշեցնող փաստերը, առանց վեհութեան: Իր կարծեցեալ սակաւապետութիւնը, հեզութիւնը, յարգասիրութիւնը այնպիսի հակումներ կը պատրւակեն, որ դերև կը հանեն ամեն հաշիւ ու տրամաբանութիւն: Ամենէն զգայուն խօսակցութենէ մը յետոյ կարող է այնքան մթին կերպով դաւաճանել: Թիւրք ամբոխին էն խորունկ ու խորհրդաւոր րոպէն ան է, երբ կոյր դաւաճանութեան գործիքը կը դառնայ և այդ ժամանակ իր պատմական ամբողջ էութիւնն է կարծես որ կ'ապրի:

Չենք կրնար բացատրել, ոչ մեկնաբանել կատարւած ահռելի գազանութիւնները՝ որուն զոհ գնաց

# ԿԻԼԻԿԻԱՆ ԱՐԻՒՆԱՒԵՐ

Ատանայի պէս բարգաւաճ քաղաք մը իր շրջակայ գիւղերով: Ո՞վ կրնար երևակայել, որ ազատութեան այնքան ցնծութիւններէն ու սրտաբացութիւններէն ետքը, երբ հաշտութեան ուխտեր ու համբոյրներ փոխանակւեցան, երբ հայ նահատակներու գերեզմաններուն վրայ խլամութիւնը օրհնութիւններ թափեց, նոյն կրօնի խուժանը ընդունակ պիտի ըլլար, դեռ տարելիցը չբոլորած, նոր գերեզմաններ փորել հայ ժողովրդին համար և զարհուրեցնել արար աշխարհ:

Արդեօ՞ք կ'ուզէին հասկցնել մեզի մեր թիւրք հայրենակիցները, թէ հայ ժողովուրդին սիրտը միշտ սուգով պատած պէտք է մնայ և մեր մայրերը յաւիտենական Նիօբէները պիտի ըլլան... Թիւրք խուժանը մարմնացած հերքում մը կը թւի ըլլալ գիտական այն թէօրիին, թէ մարդկութիւնը կը դիմէ դէպի կատարելագործում և թէ միայն ինքն է որ կը մնայ անսասան համաշխարհային քաղաքական, հասարակական ու բարոյական մեծամեծ յեղաշրջումներուն մէջ:

Իսկապէս հայ ժողովուրդը ինք ալ շւարած չգիտէր, թէ ինչպէս ընէ՝ որ իր դրացի ժողովրդին մէջ հակամարդկային բնազդներ չծագին, ժողովուրդ մը՝ որ կրօնի կեղծ ըմբռնումներով իրեն համար բացառիկ և առանձնաշնորհի դիրք մը ստեղծած՝ թոյլ կուտայ իրեն անպատիժ այդպիսի արիւնռուշտ ոդբերգութիւններ: Դատապարտւա՞ծ ենք արդեօք մինչև վերջ երկիւղոտ մտահոգութիւններու և ձևականութիւններու մէջ տարասեռիլ և ներքինանալ մարդկային կարողութիւններէն խնայած ըլլալու համար մեր թիւրք հայրենակիցներու անիմաստ և ամուլ դիւրազգացութիւնը և սողալ անոնց այլանդակ քմահաճոյքներուն առջև:

Ոչ մէկ գիտակից և երկրի շահերուն քիչ շատ նախանձախնդիր հասարակութիւն մը, ինչքան ալ տգէտ և կրօնամոլ ըլլայ, այդքան խելագար մոլեգնութիւնով չքայքայէր երկրի մը տնտեսական կեանքը, կարելի՞ է երևակայել տարր մը, և այն ալ վեց դարու պետական կազմի տակ ապրող համայնք մը, որ այդքան զուրկ մնալով քաղաքացիական և տնտեսական հասկացողութենէ՝ առօրեայ աւարառութեան մը համար, հուրի ու սուրի մատնէ ամբողջ նահանգ մը: Այսպիսի արարքները անուն չունին, բարբարոսութեան սահմանները ալ կ'անցնին:

Կիլիկիան տխուր և շօշափելի փաստ մըն է, որ Թիւրքիոյ մէջ հայ

ժողովրդի գլխին կախ է ողբերգական ճակատագիր մը: Մեր ժողովրդին համար միակ միջոց մը կայ,- ինքնապաշտպանութիւնը, այդպիսի դաւաճան և անմարդկային մթնոլորտի մը մէջ, ուր ամեն համերաշխ ու հաշտութեան ցոյցերու ետև արիւնոտ մտածումը կայ թագնուած: Սա միակ միջոցն է պատւաւոր մեռնելու կամ մինակ չմեռնելու համար:

Ո՞վ է պատասխանատուն:

Բուն պատասխանատուները կան, որ հոգին ու դրդիչը եղան այդ հակամարդկային ու պատուհասելի եղեռնագործութեան: Պոլսոյ և Ատանայի դէպքերուն զուգադիպութիւնը՝ որ ոչ պատահական ըլլալու բոլոր երևոյթները ունի - ենթադրել կուտայ որ վաղուց և յատուկ պատրաստուած Եղեռն մըն էր հայ ժողովրդի դէմ, որ իր միամիտ խանդավառութեանը մէջ, ազատութեան գինիովը սրարբեցած, երանելի ապուշութիւնով մը չէր ուզեր շատ հեռուները դիտել:

Աբդիւլ Համիդ, այդ անարգ վեհապետը, ինչպէս կը հաւաստեն, գերագոյն հրէշութիւնը յղացած էր - շնորհիւ իր անսպառ հարստութեան - քրիստոնեաներու ընդհանուր ջարդ կազմակերպելով երկիրը արիւնով ողողել, օտար միջամտութիւն առաջ բերելու համար և թերևս կը մտադրէր գլուխ հանել իր սև ծրագիրը, այն է «Թիւրքիան կործանել՝ գահէն իյնալէ առաջ»: Ասով միանգամայն հաւատարիմ կը մնար սա անասնական սկզբունքին՝ «ինէ ետքը ջրհեղեղ», զոր իր կեանքի նշանաբանը ընտրած էր: Ոչ ոք այդ մարդուն չափ չարագործութեան մթուղիները և ոչ ոք անոր չափ թիւրք տգէտ ու մոլեռանդ խուժանին ստոր բնազդները գիտցած է շահագործել: Բարեբախտաբար վիժեց իր դժոխային ծրագիրը, բայց յաջողեցաւ Կիլիկիոյ հայութիւնը մոխիրի վրայ նստեցնել: Ծովեզերեայ վայրի մը՝ Ատանայի կուսակալութեան մէջ, այդպիսի կոտորած մը եւրոպական միջամտութեան մը աւելի հեշտութիւն կ'ընծայէր: Կամ այդ հրէշը կը մտածէր թերևս, որ Ատանայի ջարդի լուրը Պոլսոյ մէջ արձագանք գտնելով՝ հայ յեղափոխականները պիտի փորձէին վրիժառութեան ցոյց մը ընել, որով առիթ և պատրւակ պիտի ստեղծէին ընդհանուր խառնաշփոթութեան և սարսափելի արիւնահեղութեան մը:

Մենք իրաւունք ունինք ամբաստանելու Մեծ Մարդասպանը, որ իր արբանեակներով կազմակերպեցին Կիլիկիոյ ահռելի սրածութիւնը:

Բայց ինչ որ մեզի սոսկում ու ապշութիւն կը պատճառէ, հին րէժիմի տապալումէն ետքը սարսափը նորէն կը շարունակւի, և կը սպառնայ ամբողջ Փոքր Ասիան հայ ժողովրդի մարտիրոսութեան դաշտի մը վերածել:

Ներկայ րէժիմին դանդաղութիւնը, անվճռականութիւնը՝ չարիքը արմատախիլելու համար, մեզի առեղծուածային կը թւին, երբ հայ ժողովուրդը մահուան արհաւիրքներով կը տանջւի և արիւնարբու խուժան մը ոճրագործութեան ամենէն անխիղճ և տմարդի դերակատարը կը հանդիսանայ: Հայ ժողովուրդը կը գտնւի այս րոպէիս «between the devil and the deep sea»,- սատանային ու ծովանդունդին միջև:

Ընդհակառակը, Պոլսոյ կառավարութիւնը կը ճգնի չարիքը ծածկել կամ մեղմացնել՝ հայերուն վերագրելով աղէտին պատճառը: Բնական է, այդպիսի չլսված ոճիր մը չէր կարելի պարտկել առանց ամենալիրբ ստախօսութեան:

Ներքին գործերու օգնական մը Ատիլ պէյ - որուն անունը հեգնութիւն մըն է արդարութեան հասցէին - gaffe-ի և ապուշութեան մարմնացումը կ'երևի: Մենք կը կարծէինք որ օսմ. ազատութիւնը անոնց գլուխներուն մէջ քիչ շատ ողջմտութեան և պարկեշտութեան քանի մը կաթիլներ կաթեցուցած պիտի ըլլար: Ընդհակառակը, այդ մարդիկը, երբ կը ներկայանան հասարակական հարցի մը լուսաբանութեան, չեն կրնար դուրս գալ այն ուղիէն որ Աբդիւլ Համիդ գծած էր: Ատոնք հարազատ զաւակներն են իրենց շրջանին, որ կարելի է անուանել Թիւրքիոյ «հակամարդկային շրջանը»:

Ատանայի կոտորածի առաջին լուրերուն պաշտօնի վրայ եղող կառավարութեան ներկայացուցիչը կը հեռագրէր վալիին որ «օտարներու ձեռք չդպցնեն»: Ուրեմն հայերու կոտորածը շատ բնական էր և կարելի էր շարունակել: Ոչ մէկ զայրոյթ կոտորածի դէմ: Կը հաւատանք, թէ ցեղի մը հոգեբանութիւնը մէկ օրէն միւսը չփոխուիր, բայց այս պարագային այդպիսի հոգեբանութեան մը յամառումը կարող է ցաւալի ստւեր մը ձգել Ազատութեան այն մեծ ժէստին վրայ, որ օսմանեան բանակը ցոյց տուաւ Պոլսոյ պարիսպներուն տակ: Այդ աննման ժէստը կուզար ապահովել աշխարհի՝ մարդկային բարոյականի մը գոյութիւնը այդ անիծեալ աշխարհին մէջ, ուր մահուան ճամբաները աւելի շատ են, քան կեանքի և որոնց ամայի քառուղիներուն վրայ սուգի ու լացի արձաններ միայն կարելի է յաւերժացնել:

Հայերուն կողմէ նախայարձակի մը ստութիւնը մէջտեղ նետելով, Ատիլ պէյ մերկացուց մտքի և սրտի բովանդակ պարապութիւնը թիւրք նախարարներուն: Ուրիշ երկրի մը մէջ այդպիսի ազգային աղէտ մը կարեկցութեան և զայրոյթի ճիչեր արձակել կուտար ոևէ նախարարի և խորհրդարանին, մանաւանդ երբ սահմանադրութեան շնորհիւ օսմանեան ազգերը երկրի ընդհանուր քաղաքացիներ կը դաւանին:

Սակայն օսմ. խորհրդարանը, ընդհակառակը, կը ծափահարէ իր նախարարին սրիկայամտութիւնները և յանդուգն զրպարտութիւնները, որ հիմնուած էին նոյնինք ոճիրի հեղինակներու հեռագիրներուն վրայ: Խորհրդարանը բարոյական քաջութիւն չունեցաւ խարանելու եղած ոճիրները և առանց

նկատի առնելու և նոյնիսկ գիտնալով, որ այդ կոտորածը կազմակերպուած դաւադրութիւն մըն էր, հաճոյքով կլլեց պաշտօնական կեղծաւոր բացատրութիւնը՝ խորհելով, թերևս, որ պիտի մեղմացնէր եղած արատը:

Եւ ինչ որ տխուր լոյս մը կը սփռէ օսմ. խորհրդարանի մտայնութեան ու ձեռնհասութեան վրայ, այն է, որ այդ ժողովը չկրցաւ distinguo մը ղնել, թէ ինչպէս կարելի է թոյլ տալ տեղական և անհատական միջադէպի մը հետևանքով ամբողջ նահանգ մը արիւնի ու սուրի մատնել: Եթէ ամեն նահանգի մէջ ունէ չնչին միջադէպ առիթ տար այդպիսի սպանդանոցային տեսարաններու, մէկ շաբաթ բաւական է, որ ամբողջ հայութիւնը սրբի օսմանեան հողին երեսէն: Խորհրդարանը պէտք էր շարժիլ անվերապահօրէն և անաչառ ուժգնութիւնով մը և այսպէս շեշտած պիտի ըլլար, որ ինքը Օսմ. կայսրութեան ժողովուրդներու գերագոյն մարմինն է և գերագոյն արհեստաւորը միանգամայն անոնց միութեան և եղբայրութեան: Օրէնսդիր մարմինը փախցուց այդ հոյակապ րոպէն, երբ կարող էր, ապրիլ 24-ի մեծ օրէն ետքը, խանդավառ և հայրենասիրական փոթորկումով մը նիրագործել արգասաւոր դաւանանք մը, որ սրտերու ճամբան գտնէր, բայց դժբախտաբար դուրս չելաւ ան իր տափակ մտածումէն:

Պատմութիւնը ցոյց կուտայ, որ այն ժողովուրդները՝ որ աշխատութեան նիրուած են - ճարտարարւեստական ու երկրագործական - բնազդաբար ու ինքնաբերաբար ընդհանուր խաղաղութեան ու բարգաւաճ յառաջադիմութեան պաշտպաններն են և հոգևին հակառակ քանդիչ ու արիւնահեղ շարժումներու: Հայ ժողովուրդը, անոր բոլոր յեղափոխական մարմինները իրենք առաջինը եկան իրենց անձնուիրութեան ու յարգանքի զգացումները նիրաբերելու Թիւրքիոյ ազատութեան խորանին, այնպէս որ խառնակիչ մտածում մը վերագրել հայութեան աններելի զրպարտութիւն մը և նախատինք մըն էր հայ ժողովրդի հասցէին՝ որ իր ամենէն լաւագոյն իղձերով զրահաւորուած կը մտնէր ասպարէզ Օսմ. կայսրութեան մեծութեան ու բարօրութեան տրամադրելու իր բարոյական ու մտաւոր ուժերը: Ան իր ձգտումին մէջ կը դնէր իդէալ մը՝ բարձր ու եղբայրական:

Այսպիսի փառահեղ ապացոյցներէ յետոյ, ապստամբութեան ունէ կասկած չէր կրնար հիմ ունենալ, մանաւանդ որ Ատանան երբեք չէ ունեցած այդպիսի աւանդութիւն մը, ընդհակառակը, փաստերը կուգան հաստատել որ հոն հայ ժողովուրդը ամենահիանալի ծրագիրներ յղացած էր Օսմ. կայսրութեան էն բարեբեր նահանգին տալու համար տնտեսական ու ճարտարարուեստական յարաճուն զարգացում մը: Երկրորդ՝ ապստամբութեան մը պահուն պէտք էր գոնէ Զէյթունը ու Հաճընը ևս մասնակցէին, բայց այդ քաղաքները ոչ միայն անտեղեակ էին անցուդարձէն, այլ հազիւ ժամանակ ունեցան ինքնապաշտպանութեան դիմելու, երբ աւազակային խուժաններ աւերակ կը սփռէին Սիհունի ու Ճիհանի ափերուն վրայ և Տօրոսի ստորոտները:

Չարաղէտ դէպքերը որ իրարու կը յաջորդեն Թիւրքիոյ մէջ, կը մատնեն անոր վարիչներուն մէջ քաղաքական և քաղաքակրթական հասուն գիտակցութեան պակասը: Ատիլ պէյի պէս հում գլուխները և անոնց շնական չապախնդացութիւնը ծաղրանք մըն են ազգային ներկայացուցիչներու երեսին, որ չզգար դժբախտաբար, կարծես թէ կ'ուզեն հասկցնել հայերուն, «ճիշտ է ազատութիւն տրուեցաւ, բայց կեավուրը պէտք չէ դուրս ելլէ իր երկիւղոտ ու խոնարհ վիճակէն, պէտք չէ իր ուրախութիւնը բարձրաձայն արտայայտէ»: Իսկապէս մեր թիւրք հայրենակիցները չարաչար կը գործածեն իրենց ուժը և խուժանի մոլեռանդութիւնը: Մենք կը կարծէինք և կը յուսայինք որ հին ռէժիմէն միմիայն Աբդիլ Համիդի համբոյրը պիտի մնար օսմ. խորհրդարանի նախագահի ճակտին, բայց դէպքերը անողոք չարութիւնով մը կուգան հերքել, որ դեռ շատ բան կը մնայ և շատ անակնկալներ կան վերապահուած:

Նոր ռէժիմին մարդիկը դեռ հին բանաձևերը կը ծամծմեն և «խաբէութիւնը» կ'ուզեն ծառայեցնել երկրի շահերուն, այն պահուն երբ Թիւրքիան կարօտ է մերկապարանոց ճշմարտութեան, հզոր ու ճակատաբաց պարկեշտութիւններու որ մեծագոյն ուժն է տարրերու մէջ համերաշխութեան ոգին ամրացնելու համար:

Երբ Մակեդոնիոյ օսմ. բանակը քաղաքացիական առաքինութեան և դիւցազնութեան կռանիղէ էջերը կը դարբնէր օսմանեան պատմութեան համար և աննման խոյանքով մը կ'զգետնէր արիւնարբու բռնակալութիւնը,- օսմանեան դահիճը Կիլիկիոյ համատարած աւերներուն ու անթիւ դիակներուն վրայ ստութեան և անկարեկցութեան ծածկոցը կը նետէր և միանգամայն կը սրբապղծէր ապրիլ 24-ի նահատակ զինուորներուն յիշատակը, որ իրենց արեան գնով ազատութեան և բարձր բարոյականի դասը տուին օսմանեան աշխարհին:

Մօնթէսքիօ, իր հոյակապ գործերուն մէկուն մէջ սա սուր և ստոյգ դիտողութիւնը կ'ընէ. «Աշխարհի մէջ երկու պետութիւն կայ, կըսէ, որոնց գոյութիւնը աննպատակ է, անոնք են Սպանիա և Թիւրքիա»:

Դարուկէս ետքը նոյն հաճճարը թերևս Թիւրքիոյ գոյութեան նպատակ մը շնորհէր – քրիստոնեաները ջարդել:

Ատիլ պէյերը այդ «աննպատակ» կամ «արիւնոտ նպատակի» սերունդին կը պատկանին: Մենք կը սիրենք հաւատալ որ յուլիս 24 և ապրիլ 14-ի փառաւոր օրերէն ետքը նոր սերունդը մարդկային և ազնուական «նպատակ» մը դրաւ Թիւրքիոյ «աննպատակ» գոյութեան մէջ և ստեղծեց ժամանակակից ապագայ մը...

**Վահագն Գրիգորյան**
**Ժամանակի գետը**
**Երևան 2008, 504 էջ:**




***Ժամանակի գետը» գիրք է մարդու և ճակատագրի, ներաշխարհի ու իրականության մասին՝ դիտված հայի ու ցեղասպանության ակնոցով, միտված հարահոս ժամանակին՝ նրան, ինչ երեկ եղել է, այսօր կատարվում է ու վաղը կլինի:*** Ներկայացվող գրքի կարճ, բայց և բազմանշանակ այս բնութագիրը ընթերցողին կարող է հուշել, թե սա հերթական մի անդրադարձ է Հայոց ցեղասպանության թեմային, պապ ու տատից լսած դժնի, կցկտուր, բայց իրար կապած ու իլիկի վրա խնամքով փաթաթած ևս մի պատմություն, որ նման է երեկ, առաջին օրը, դրա նախորդ օրը լույս տեսած հար ու նման գրքերին: Չէ, այս մեկն այդպիսի գրքերից չէ: Սա դժվար է կարդացվում: Հեղինակն էլ դա գիտի: Ստեպ-ստեպ ընթերցողին հարցնում է՝ դու դեռ այստե՞ղ ես, դու ժամանակ ունե՞ս ականջ կախելու, ինձ լսող կա՞ արդյոք... Իսկ ընթերցողը, եթե նա մի փոքր համբերություն ունի, եթե արդեն ճիգ է թափել ու հաղթահարել Երևանի 5-րդ փողոցով անցնող Ժամանակի գետի խոհափիլիսոփայական ընթացքը, ուրեմն հայտնվել է պատումի բարձունքին, որտեղից արդեն պարզ երևում են ճյուղ-ճյուղ վազող առուները, որոնք, քիչ ներքևում, Ժամանակի գետի սկիզբն են ավետում:

Մեծ արարումը չտեսած մարդը, ուղեղին զոռ տալով, այդ արարումի հեքիաթն արդեն ունի իր համար ու փորձում է նաև վախճանի հեքիաթը հյուսել: Հյուսել այնպիսի մի հեքիաթ, որի մեջ ինքը՝ մարդը, Արև լուսատուի սառչելուց և օվկիանոսի խորքերում վերջին միաբջիջ արարածների մեռնելուց դեռ շատ առաջ, Երկրի վրա կտեսնի բարօրության համատարած թագավորությունը: Լավ հեքիաթ է, իհարկե, բայց ինչպե՞ս մարդն այն կապի Արարման հեքիաթի հետ, երբ այդ երկուսի միջև իր երկրային գոյության դաժան, հողի պես ճաքճքած, հեքիաթից շա՜տ-շատ տարբեր իրականությունն է: Ժամանակի գետն, ասես, երեք մասի է բաժանվել՝ երկու ծայրերը կան, բայց մեջտեղի կտորը ոչ մի կերպ չի տեղավորվում նրանց միջև, միշտ դուրս է ընկնում, երբեմն հոսում հակառակ, երբեմն ծովի պես ալեկոծվում: Հեղինակի հավատամքի հարցն է ծագում այստեղ: Գետի երկու ծայրերը պետք է ինչ-որ կերպ կամրջել, իսկ միջին հոսանքը, երբ էլ լինի, մի օր կդառնա իր հունն ու այլևս գետի երկայնքով զգված կամրջի անհրաժեշտությունը կվերանա: Սա է գուցե այդ հավատամքը, որ աստիճանաբար փոխանցվում է ընթերցողին, ով վկան է դառնում հարյուր և քսան ամյա Հայկարամի վախճանի: Նա քսաներորդ դարի վրայով կամրջել էր երկու հազարամյակներ ու մահացել Երևանի 5-րդ փողոցի իր տանը՝ բազկաթոռի մեջ նստած, լրագիրը ձեռքին, դարավոր կաղնու պես, իր թոռ ու ծոռներով, ասես դալար շիվերով, շրջապատված:

Մահը բնական երևույթ է: Հատկապես մի դար ու քսան տարի ապրած մարդու մահը: Թաղումն էլ՝ շատ հասարակ ու անպաճույճ, առանց ավելորդ խոսքերի: Բայց Հայկարամին ճանաչող, նրա պատմություններն ունկնդրած սերունդը մի անբացատրելի տագնապ է ապրում՝ չհասցրեց, չտոկաց գուցե, չկարողացավ այնպես անել, որ ողջ աշխարհը իմանար այդ պատմությունը, այնպես իմանար, որ ասենք՝ ***լուրերի բոլոր թողարկումներում հիշատակվեր Հայկարամի մահը, ԲիԲիՍի-ին ընդհատեր ԱՄՆ նախագահի ելույթը, իսկ Թուրքիան ցավակցություն հայտներ և, առիթից օգտվելով, դատապարտեր Առաջին աշխարհամարտի տարիների իր ոճրագործներին:***

Մինչդեռ այն պահին, երբ այդ սերունդը ձմռան մի ցուրտ օր, շատ հասարակ, հողին էր հանձնում Հայկարամին և հերոսաբար մրսում գերեզմանատանը, Թուրքիայի վարչապետը միամիտ-միամիտ հայտարարում էր, թե անհնար է, որ իր պապերը հանցագործ եղած լինեն: Այսինքն՝ ոչինչ չի փոխվել, դեռ ոչինչ չեն հասցրել անել Ժամանակի անողոք գետի պակասող հատվածն իր հունի մեջ լցնելու, իրերն իրենց տեղը դնելու և իրենց անուններով կոչելու համար: Բայց չէ՞ որ Հայկարամն ամեն ինչ հերթով, տեղը տեղին, առանց հետ ու առաջ անելու պատմել էր, ավելի ճիշտ՝ բերել, հասցրել էր մեր օրերը, երկու հազարամյակ կապել էր իրար, ու մնում էր, որ աշխարհը հասկանար, թե ինչպես է պատահել, որ իր ապրած ժամանակի մի օղակը պակասել է:

Ինքնաձաղկումն, ինչ խոսք, մարդու լավագույն հատկանիշներից է: Երբ ինչ-որ

հարցերում դու մեղադրում ես քեզ ու այլ մեղավորներ չես փնտրում, ուրեմն դեռ բանականությունդ չես կորցրել: Բայց աշխարհի արածն էլ մի բան չի: Ահա հին ու նոր օրերի հարյուրավոր, հազարավոր վավերագրերը, որոնց մեջ սևով սպիտակի վրա գրված է, որ Թուրքիան 19-րդ դարավերջից մինչև 20-րդ դարի 15-23 թվականները, դեռ դրանից հետո էլ՝ մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտը, տարածաշրջանի բնիկ ժողովուրդներին ոչնչացնելու հստակ ծրագիր է իրականացրել: Այդ վավերագրերի մեծ մասը հենց իրենց՝ աշխարհի հզորների ձեռքով է ախր գրվել, գրվել է ու նույնությամբ համընկնում է Հայկարամի պատմածին, Խարբերդից Դեր Զոր, այնտեղից մի հրաշքով Հալեպ հասած ու ամերիկյան հյուպատոսության շենքի պատի տակ ծվարած Մարիամ մանկամարդ հարսի ու նրա Գլակ որդու ոդիսականին, թուրքական պետության կամ «հանրապետության» ***Օրենքի*** ձեռքը կրակն ընկած ու գավառներից Պոլիս, իսկ այնտեղից ուրիշ երկրներ քշվող հայության վերջին պատառիկների ճակատագրերին: Ինչ-որ բան այս պատմության մեջ ճիշտ չէ, ուրեմն: Այլապես ինչո՞ւ են ֆրանսիական նավերը հեռանում Կիլիկիայից, ինչո՞ւ է ամերիկյան վերջին շոգենավը, ամբարներն իր դեսպանների՝ հայկական կոտորածների մասին պատմող տագնապալի նամակներով լիքը, խարիսխը բարձրացնում ու անվրդով լողում դեպի ծովի անհունը: Այս հարցերի պատասխանները կարծես պարզ են՝ մեծ քաղաքականությունն է դա թելադրում, հայերի գլխի վրայով թուրքերի ձեռքը սեղմելու նրանց անզուսպ ցանկությունը:

Հրաշքով ծնված ու Դեր Զորում հրաշքով ողջ մնացած Գլակը, ում իր սիրասուն Մարիամ մայրը հասցրել էր Ֆրանսիա՝ ***Թուրքի սմբակից*** հեռու, Մոր մահից հետո կորոշի, որ պիտի ապրի հայրենիքում: Իսկ նրա համար հայրենիքը Խարբերդն է, Վանը, Կարսը, Անին: Չէ՞ որ «ժողովուրդների հայր»-ը հայերին խոսք էր տվել դրանք հետ առնել Թուրքիայից: Ստալինին հավատալով՝ Գլակը հայտնվում է Խորհրդային Հայաստանում, որտեղ, սակայն, նրան հանգիստ կյանք չէր սպասում: Աքսոր. ահա այն, ինչ նա ճաշակում է ազատ մտքերի համար: Հետո՝ հիասթափություն, նորից վերադարձ Ֆրանսիա՝ լավ է գոնե ընտանիք կազմած՝ իր կնոջ ու Գնել որդու հետ:

Կյանքի վերջին օրերին, Խարբերդը չտեսած խարբերդցու համար հայ արդարադատ մարտիկների գործողությունները միայն մխիթարություն եղան և նա, արդեն անդամալույծ, դատարանի դահլիճում, լսելով դատավճիռը, երեխայի պես արտասվում էր՝ մտքում իրեն անիծելով, թե կարող էր այդ նրանցից մեկն էլ ինքը լինել, եթե աննպատակ չհեռանա՛ր Ֆրանսիայից:

Տարիներն անցնում են, նոր հազարամյակի սկզբին ենք արդեն: Իսկ Ժամանակի գետը հոսում ու հոսում է ամեն տեղ, նույնիսկ Երևանի 5-րդ փողոցով: Գնում է մարդկության հոգնած վախճանին ու այդ վախճանին նախորդելիք բարօրության թագավորությանն ընդառաջ: Բայց գետի միջին հոսանքը դեռ չկա, իր հունը չի մտել ու հոսում է, ասես, գետի հոսանքին հակառակ, ծովի պես ալեկոծ:

Ե՞րբ է այս ամենը վերջ ունենալու: Գուցե այն ժամանա՞կ, երբ ցորենը դառնա մասուրի չափ, իսկ գարին՝ ընկույզի: Էլի վատ չի: Կարևորն այն է որ հույսը կա, չի մեռել, ու մեր աստղը, որ նույնիսկ պարզկա գիշերներին խամրում է 5-րդ փողոցի «Fifth Plaza»-ի կամ «Five Stars Night Club»-ի լույսերից, դեռ կայծկլտում է ու ճանապարհ ցույց տալիս դեպի բնօրրան:

Ամփոփելով շարքային ընթերցողի այս խոսքը Վահագն Գրիգորյանի վեպի շուրջ՝ կցանկանայինք վերջում մի երկու խոսք ասել նաև նրա գեղարվեստական արժանիքների մասին: Երևակայական ոչինչ չի ստեղծել հեղինակը: Նրա համար առաջնայինը գունեղ կերպարներ կերտելը չէ: Կա պատմությունը, և կան իրական մարդիկ ու այդ մարդկանց հարաբերությունները, որոնք հեղինակը խնամքով տեղավորում է օրերի, տարիների, այդ պատմության լայնքի ու եկայնքի մեջ: Կան իր հերոսների ճակատագրի հետ առնչվող պետություններ ու պետական այրեր, որոնք նույնպես ներկայացված են առանց ավելորդ գունազարդումների՝ իրենց օրենքներով ու հրամաններով, որոնք զանազան վավերագրերով օգնում են ընդամենը հասկանալու, թե ինչու է Ժամանակի գետն այդպես անբնական հոսում:

Կցանկանայինք առանձնացնել նաև Մարիամ-Գլակ կապը: Դեռ չծնված երեխայի երկխոսությունը մոր հետ, թերևս, նորություն չէ գրականության մեջ: Բայց այստեղ հետաքրքիրն այն է, որ դեռ չծնված երեխայի որդին է պատմում իր տատի գլխովն անցածը՝ իրեն դնելով հոր՝ Գլակի տեղը: Չգիտեմ, կարողացա՞ ճիշտ արտահայտել միտքս, բայց, կարծում եմ, ընթերցողը, հատկապես գրականագետն ու գրաքննադատը, այս երևույթի վրա, որպես գեղարվեստական մի նոր հնարանքի, ուշադրություն անպայման կդարձնեն:

**Էդիկ Անդրեասյան**



# Ժանսեմ

**ԺԱՆՍԵՄ
(ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՄԵՐՋՅԱՆ)**

Ժանսեմը ֆրանսիական արդի արվեստի ականավոր դեմքերից է:

Յովհաննես Սեմերջյանը ծնվել է 1920 թ. Սելեզում, Բրուսայի մոտ, մետաքսագործի ընտանիքում: 1922-ին հալածանքների երկյուղից նրանց ընտանիքը գաղթում է Յունաստան: Ամուսնու վախճանվելուց հետո, մայրը 1931-ին, որդու կոտրված ոտքը բուժելու նպատակով, մեկնում է Ֆրանսիա, հաստատվում է Փարիզի Իսի լե Մուլինո արվարձանում:

Յովհաննեսի մասնագիտական առաջին դպրոցն է դառնում Մոնպառնասի ազատ ակադեմիաները (1934-1936թթ.): 1938-ին նա ավարտում է Փարիզի զարդարվեստի բարձրագույն դպրոցը: Ապա մեկ տարի կատարելագործվում է Սաբաթիեի արվեստանոցում: Սկսել է ցուցադրվել 1944-ից: Ստեղծագործության առաջին շրջանում հանդես է եկել զուտ ազգային թեմաներ շոշափող գործերով: Այդ գործերի մի մասը այժմ ցուցադրվում է Փարիզի հայկական արվեստի թանգարանում:

Ժանսեմի ստեղծագործության թեման սկիզբ է առնում իր մանկության հիշատակներից՝ մայր ժողովրդի մեծ արհավիրքից:

Ֆրանսիական տեսաբանությունը Ժանսեմին բնութագրել է իբրև միզերաբլիստ՝ թշվառների նկարիչ:

Ժանսեմն առաջին անգամ Յայաստան է այցելել 1973-ին:

2001-ին Ժանսեմը կրկին այցելեց Յայաստան և 2000-2001 թթ. ընթացքում իր վրձնած «Եղեռն» շարքը՝ բաղկացած 34 կտավներից նվիրեց Յայոց ցեղասպանության թանգարանին:















ԴՐՕՇԱԿ



